# ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ՀՍՍՌ ՌՈՒՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ
V, VI և VII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

491.99-5
Ղ-47

54

4.91.99-5
Գ-47

# ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

## ԴԱՍԱԳԻՐՔ

ՀՍՍՌ ՌՈՒՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ
V, VI ԵՎ VII ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՉՈՐՐՈՐԴ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմեց՝ Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1954

19 JUN 2013
6768

Հաստատված է
Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության կողմից

А. ГАРИБЯН
**УЧЕБНИК АРМЯНСКОГО ЯЗЫКА**
для V, VI и VII классов
русских школ
Арм. ССР
4-ое издание
Айпетрат, Ереван, 1954

Խմբագիր՝ Գ. ԱՂԱՍՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ե. ԱԽԼՐՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Բ. ՔԱՑԱԽՅԱՆ

ՎՖ 09178։ Պատվեր 10։ Տիրաժ 5000

Տպագ. 13,1 մամ., հրատ. 7,6 մամ.։
Թուղթ՝ 84×108 1/32։
Հանձնված է արտադրության 29/XII 1953 թ.։
Ստորագրված է տպագրության 20/III 1954 թ.։
Գինը՝ 1 ռ. կազմը՝ 50 կ.։

Հայպոլիգրաֆհրատի № 1 տպարան, Ալավերդյանի փող. № 65, 1954 թ.։

ՀԱՅԿ. ՍՍՌ Арм. ССР
165834

04 MAY 2010

# ԿՐԿՆՈՂՈՒԹՅՈՒՆ
## (Նախորդ դասարաններում անցածը)

### § 1. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1։ Ով ինչ է անում։ Պատմեցեք.*



Ուսուցիչը պատմում է։
Աշակերտները լսում են։

*Այստեղ կա երկու նախադասություն։*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2։ Պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին։

Ո՞վ է պատմում։

Ո՞վ է լսում։

**Խոսքը կազմված է մեկ կամ ավելի նախադասություններից: Նախադասությունն արտահայտում է ամփոփ միտք, այսինքն՝ ցույց է տալիս, որ մի առարկա մի բան է անում կամ լինում:**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3։ Արտագրեցե՛ք։

Մոսկվան մեր Հայրենիքի մայրաքաղաքն է։
Մենք սիրում ենք Մոսկվան։

Քանի՞ նախադասություն ունի այս խոսքը։ Կարդացե՛ք առաջին նախադասությունը։ Կարդացե՛ք երկրորդ նախադասությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4։ Կազմեցե՛ք երեք նախադասություն։



Սաշան . . . . . . . . . (ի՞նչ է անում)
Մաշան . . . . . . . . . (ի՞նչ է անում)
Բանվորը . . . . . . . . (ի՞նչ է անում)

(կարդում է, գրում է, աշխատում է)

Արևը . . . . . . . . (ի՞նչ է անում)
Օրը . . . . . . . . . (ի՞նչ է լինում)
Օդը . . . . . . . . . (ի՞նչ է լինում)

(այրում է, երկարում է, տաքանում է)։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5։ Կազմեցե՛ք երեք նախադասություն։

. . . (ո՞վ) գրում է։ . . . . (ի՞նչը) ժպտում է։
. . . (ո՞վ) խաղում է։ . . . . (ի՞նչը) երկարում է։
. . . (ո՞վ) վազում է։ . . . . (ի՞նչը) տաքանում է։

(Սոնյան, Կոլյան, Նինան) (արևը, օրը, օդը)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6։ Կազմեցե՛ք նախադասություններ։

Ով ինչ է անում։



Շուն Թռչուն Կով Ոչխար Կատու Հավ

Շունը հաչում է։ (Երգում է, բառաչում է, մայում է, մլավում է, կչկչում է)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7։ Կազմեցե՛ք նախադասություններ։

Ի՞նչը ինչ է լինում։



Հասկ Ծառ Ծաղիկ Տերև Խնձոր Խաղող

Հասկը լցվում է։

(Ծաղկում է, բացվում է, դեղնում է, կարմրում է, հասնում է)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8։ Լրացրե՛ք նախադասությունները։

Ու՞մ — Ու՞մ, ինչի՞ն

Սաքան սիրում է... — Աշակերտը մոտենում է...

Աննան կանչում է... — Ձեռքս դիպավ...

Նինան գրում է... — Ալյոշան հասավ...

(ուսուցչին, Արամին, փիսիկին) — (մայրիկին, պատին, Արամին)

Ի՞նչ

Ցողիկը գրում է . . .
Շողիկը կարդում է . . .
Պետյան բերում է . . .
Կատուն բռնում է . . .
(դասը, գիրք, կավիճ, մուկ)

Ինչի՞ց

Ամանը շինում են . . .
Տեռը պատրաստում են . .
Գուլպան գործում են . . .
Հագուստը կարում են . . .
(փայտից, թղթից, բրդից, բամբակից, կտորից)

Ինչո՞վ

Փայտը կտրում են . . .
Փայտը կտրում են . . .
Դաշտը հերկում են . . .
Ալյուրը հնձում են . . .
(սղոցով, կացնով, կոմբայնով, տրակտորով)

Որտե՞ղ

Համոն նստած է . . .
Համբիկը պարապում է . . .
Նազիկը խաղում է . . .
(սենյակում, դասարանում, բակում)

Ե՞րբ

Ծաղիկը բացվում է . . .
Մրգերը հասնում են . . .
Վիտյան քնում է . . .
Լիլյան խաղում է . . .
(գարնանը, աշնանը, գիշերը, ցերեկը)





Ձին արածում է . . . (որտե՞ղ)։ Մեղուն շինում է . . . (ի՞նչ)։ Կատուն բռնում է . . . (ի՞նչ)։
(դաշտում, մեղր, մուկ)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 9։ Լրացրե՛ք նախադասությունները։

Աշակերտները խմբերով գնում են . . . (ու՞ր)։
Ուսուցիչը դասարանում բացատրում է . . . (ի՞նչը)։
Լյովան ու Մարին դաշտում . . . (ի՞նչ) են քաղում։
(գպրոց, դասը, ծաղիկ)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 10։ Արտագրեցե՛ք առանձին նախադասությունները. ո՞վ կամ ի՞նչը ի՞նչ է անում կամ լինում։
Գտե՛ք.

## ԱՅԴ Ե՞ՐԲ Է ԼԻՆՈՒՄ

Օրն է երկարում,
Օդն է տաքանում,
Դաշտերն են ծաղկում,
Թռչունն է երգում։
— Այդ ե՞րբ է լինում։

Արևն է այրում,
Ցորենն է հասնում,
Խոտն է չորանում,
Հասկերն են լցվում։
— Այդ ե՞րբ է լինում։

*Օրն է կարճանում,*
*Ծառն է մերկանում,*
*Անձրև է մաղում,*
*Քամին է խաղում։*
*— Այդ ե՞րբ է լինում։*

*Դաշտերն ամայի*
*Բուքն է հեծեծում,*
*Սառույցով ծածկված*
*Գետերն են լռում,*
*— Այդ ե՞րբ է լինում։*

*Օրինակ՝* Օրը երկարում է:
Ցորենը հասնում է:

**Նախադասության վերջում դրվում է վերջակետ: Վերջակետից հետո հաջորդ նախադասությունն սկսվում է մեծատառով:**

**Վերջակետ: Точка.**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 11։ Արտագրեցե՛ք և դրե՛ք վերջակետ։ Վերջակետից հետո չմոռանաք սկսել մեծատառով։*

*Մենք բոլորս սիրում ենք մեր Սովետական Հայրենիքը*
*Սովետական Բանակը պաշտպանում է մեր սիրելի Հայրենիքը գավթիչներից*
*Բոլորս ցանկանում ենք գերազանցիկ լինել*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 12։ Արտագրեցե՛ք և մեկ նախադասությունը մյուսից բաժանեցեք վերջակետով։ Վերջակետից հետո սկսեցեք մեծատառով։*

Սովետական Միությունը հերոսների երկիր է անվախ սովետական մարտիկները պահպանում են մեր հայրենիքի սահմանները աշակերտները պարապում են մեր դպրոցականները գերազանց են սովորում:



*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 13։ Փակագծերում տրված բառերի օգնությամբ գրեցե՛ք փոքրիկ պատմություն։*

*(Աշուն, տերևները։ Թռչունները։ Բերք, առատ։ Այգիներ, բերքահավաք։ Կոլտնտեսականները, բամբակ, խաղող, շատ մրգեր)։*

*Քանի՞ նախադասությունից է կազմված ձեր գրած պատմությունը։ Քանի՞ բառ ունի ամեն մի նախադասությունը։*

*Պատմեցե՛ք։*



*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 14։ Գրավոր պատասխանեցե՛ք։*

*1. Ո՞ւր են գնում երեխաները։*
*2. Ի՞նչ են անում անտառում։*
*3. Ի՞նչ բերեցին տուն։*

*(անտառ, սունկ, հավաքում են)*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 15։ Հարցերին պատասխանելով կազմեցե՛ք շարադրություն։ Դրե՛ք վերնագիր։*

## § 2. ԲԱՌ ԵՎ ՎԱՆԿ

**Նախադասությունը կազմված է բառերից:**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 16։ Ուշադիր կարդացե՛ք։ Որոշեցե՛ք՝ քանի նախադասություններից է կազմված հոդվածը։*

## ՀԵՐՈՍ ՏՂԱՆ

Սլաքավարի որդի Սարոն ստուգում էր երկաթուղու գիծը: Հեղեղը մի տեղում փչացրել էր գիծը: Սաքոն լսեց հեռվից մոտեցող գնացքի ձայնը:

Նա անմիջապես իր կարմիր վզկապից մի դրոշակ պատրաստեց: Կարմիր դրոշակը ձեռքին Սաքոն կանգնեց գծի մեջտեղը: Մեքենավարը նկատեց: Նա կանգնեցրեց գնացքը Սաքոյից մի քանի քայլ հեռու: Հերոս տղան գնացքը փրկեց խորտակումից:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 17: Գտե՛ք՝ քանի՞ բառից է կազմված ամեն մի նախադասություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 18: Կազմեցե՛ք նախադասություններ երկու բառից, երեք բառից, չորս բառից...

**Բառերը լինում են միավանկ և բազմավանկ:**

*Միավանկ բառեր՝* պատ, քար, տուն:

*Բազմավանկ բառեր՝* դասարան, ծաղիկ, մեքենավար:

*Բաղաձայնով վերջացող վանկը կոչվում է* փակ *վանկ. օրինակ՝ ան-վերջ: Ձայնավորով վերջացող վանկը կոչվում է* բաց *վանկ՝ օրինակ՝ բա-րի:*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 19: Արտագրեցե՛ք և հաշվեցե՛ք միավանկ բառերը, ապա բազմավանկ բառերը: Ցույց տվեք փակ և բաց վանկերը:

## ԵՐԵՎԱՆ

Ծաղկում ես ազատ,
Իմ նոր Երևան,
Ճամփաներ. ունես
Գեղեցիկ ու լայն:

Քո փողոցներով
Անցնող ամեն մարդ,
Զգում է իրեն
Ուրախ ու զվարթ:

Տրամվայները նոր
Անցնում են երգով,
Ջա՜ն, ի՛մ Երևան,
Լայն փողոցներով:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 20: Արտագրեցե՛ք և պատասխանեցե՛ք:
Ո՞րն է Սովետական Հայաստանի մայրաքաղաքը:
Ո՞րն է Սովետական Միության մայրաքաղաքը:
Ինչո՞ւ ենք սիրում Մոսկվան ու Երևանը:

## § 3. ՀՆՉՅՈՒՆ ԵՎ ՏԱՌ

**Վանկը կազմված է մեկ կամ մի քանի հնչյուններից:**

*Օրինակ՝* ա-սաց: *Առաջին վանկը կազմված է մեկ հնչյունից՝* ա: *Երկրորդ վանկը կազմված է երեք հնչյունից՝* սաց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 21: Արտագրեցե՛ք: Հաշվեցե՛ք ամեն մի վանկի հնչյունները: Ցո՛ւյց տվեք բաց և փակ վանկերը:

*Հանդ ու այ-գի զար-դա-րուն, հով է խա-ղում դաշ-տե-րում: Թռ-չուն-ներն են քեզ գո-վում, ինչ նախ-շուն ես լավ մա-յիս:*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 22: Հաշվեցե՛ք՝ քանի՞ վանկ ունի ամեն մի տողը: Արտագրեցե՛ք: Ցո՛ւյց տվեք բաց և փակ վանկերը:

## ԾԻԾԵՌՆԱԿ

Դու կապուտակ ծովով արի,
Թեթև, թեթև թևով արի,
Ծովի փրփուր լանջով արի,
Գարնան երգով, կանչով արի:
Արի, արի, սիրուն ծիծեռ,
Արի, արի, գարուն դու բեր:

(Խնկո-Ապեր)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 23։ Կարդացե՛ք ոտանավորը։ Գտե՛ք՝ քանի՞ բազմավանկ և քանի՞ միավանկ բառեր կան, քանի՞ վանկ ունի ամեն մի տողը։ Քանի՞ հնչյուն ունեն առաջին տողի վանկերից յուրաքանչյուրը։

## ԱՌԱՎՈՏ

Ա. Ս. Պուշկին

Բացվեց այգը արևելքում
շողալով,
Գետի այն կողմ լույսերն հանգան
դողալով։
Ծաղկանց վրա ցողը իջավ
դաշտերում,
Շարժվեց հոտը կանաչ, փափուկ
հանդերում։
Ճամփա ընկան մեգ ու մշուշ
դեպ ամպեր,
Սագերն ելան շորորալով
դեպ խոտեր։
Զարթնեց գյուղը, մարդիկ դաշտ են
շտապում,
Ծագեց արև, երկրին իջավ
խնդություն։

**Հնչյունի նշանը կոչվում է ՏԱՌ կամ ԳԻՐ.** օրինակ՝ ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի։ Դրանք տառեր են կամ գրեր։

Ը հնչյունը հաճախ չի գրվում, բայց կարդացվում է։ Օրինակ՝ գրվում է գնալ, կարդացվում է գընալ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 24։ Հաշվեցե՛ք ամեն մի բառի վանկերը և տառերը. արտասանեցե՛ք հնչյունները։

Աշուն է։ Խաղողն ու դեղձը հասել են։ Ծառերը դեղնում են։ Թռչունները երամներով չվում են տաք երկրներ։



**Հնչյունները լինում են ձ ա յ ն ա վ ո ր և բ ա ղ ա ձ ա յ ն։**

Հայերեն ձայնավոր հնչյուններն են՝ ա, է, ը, ի, օ, ու, ընդամենը 6։

Այս 6 ձայնավորները գրվում են 8 տառով՝ ա, է, ե, ը, ի, օ, ո, ու։

## § 4. Ը ՀՆՉՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՐԸ

Բաղաձայն տառերի արանքում ը լսվող հնչյունը սովորաբար չի գրվում։ Ը գիրը գրվում է բառի սկզբին և վերջին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 25։ Կարդացե՛ք և ճիշտ արտասանեցե՛ք

| | | |
|---|---|---|
| ընկեր | ճրագ | դաշտը |
| ընտիր | Մկրտիչ | պատը |
| ընտրել | գտնել | մարը |
| ընտրություն | մտնել | վարդը |
| ըմբռնել | խմել | արտը |
| | լցնել | |

Ռուսերենը ը հնչյուն չունի։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 26։ Գտե՛ք ձայնավորները։ Արտագրեցե՛ք։

Մեծ Հոկտեմբեր

Մեծ Հոկտեմբեր, Կարոտ էինք
Բարով եկար. Մենք քո գալուն,
Ինչ ես բերել Դու մեր կյանքի
Դու մեզ համար։ Պայծառ գարուն։

(Վ. Վարդանյան)

## § 5. Օ, Ո, Է, Ե ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԵՐԸ

**Օ ձայնավորը բառասկզբին գրվում է Օ տառով, բառամիջում և վերջում գրվում է Ո տառով։**

*Օրինակ՝* օր, օղ, խոտ, Կարո։ *Բացառություն են* ով և ովքեր *բառերը, որոնց սկզբին գրվում է* ո, *բայց կարդացվում է* օ։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 27։ Արտագրեցե՛ք* օ *տառով սկսվող հետևյալ բառերը և շարունակեցե՛ք գրել ուրիշ բառեր՝* օ *տառով սկսվող։*

*օգնություն* — *օջախ*
*օգտավետ* — *օրապահ*
*օդանավ* — *օրենք*
*օղի* — *օրինակ*
*օրագիր*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 28։* Օ *տառով սկսվող բառերով նախադասություններ կազմեցե՛ք և գրեցե՛ք։*

**Բառասկզբին Ո գիրը երկու հնչյունի նշան է և կարդացվում է վո։**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 29։ Կարդացե՛ք և արտագրեցե՛ք հետևյալ բառերը, որոնք սկսվում են* ո *գրով.*

*Ոզնի* — *Ոսկոր*
*Ողջույն* — *Որքան*
*Ոչ* — *Որպես*
*Ոռնոց*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 30։* Ո *տառով սկսվող բառերով նախադասություններ կազմեցե՛ք։*

**Է ձայնավորը բառասկզբին և առանձին գրվում է է տառով, բառամիջում և վերջում՝ Ե տառով։**

*Օրինակ՝* է, էգուց, բերան, փայտե։
*Բացառություն՝* եմ, ես, ենք, եք, են։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 31։ Գտե՛ք՝ որտե՞ղ և ի՞նչ տառով է գրվում է ձայնավորը։ Արտագրեցե՛ք։*

*Դեղնած դաշտերին*
*Իջել է աշուն,*
*Անտառը կրկին*
*Ներկել է նախշուն։*

*Պաղ-պաղ մեգի հետ*
*Փչում է քամին,*
*Քշում է տանում*
*Տերևը դեղին*

(Հ. Թումանյան)



*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 32։ Կարդացե՛ք և արտագրեցե՛ք* ե *գրով սկսվող բառերը։*

*եղունգ* — *եթե* — *երեսուն* — *երեք*
*երեխա* — *երդիկ* — *երկրորդ* — *եփել*
*Ելենա* — *երեկո*
*երկինք*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 33։ Շարունակեցե՛ք* ե *տառով սկսվող բառերի ցանկը։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 34։ Կարդացե՛ք, արտագրեցե՛ք* ե, է *և* ո, օ *տառերով սկսվող բառերը։*

## ԻՐԻԿՈՒՆ

*Արևը շատ էր հոգնել, ման էր եկել ամբողջ օրը,*
*«Հերիք է,— ասաց,*
*Գնամ պառկեմ ու քնեմ»։*
*Տերևն ուրախ սվսվում էր, որ կանգ առավ.*
*«Այս ի՞նչ է,— ասաց,—*
*Արևն էլ չի երևում,*
*Ես էլ պառկեմ ու քնեմ»։*
*Թռչնակը երգում էր ծառի վրա, հանկարծ լռեց.*
*«Այս ի՞նչ է,— ասաց,—*
*Ո՛չ տերև է սվսվում,*
*Ո՛չ արևն է երևում,*
*Ես էլ գնամ ու քնեմ»։*
*Նապաստակը ոստոստում էր թփերի տակ, որ ականջը սրեց.*
*«Այս ի՞նչ է,— ասաց,—*
*Ո՛չ թռչնակն է ծլվլում,*
*Ո՛չ տերև է սվսվում,*
*Ո՛չ արևն է երևում,*
*Ես էլ գնամ ու քնեմ»։*

Որսկանը անտառում որս էր որոնում, կանգնեց.
«Այս ի՞նչ է,— ասաց,—
Ո՛չ նապաստակն է վազ տալիս,
Ո՛չ թռչնակն է ծլվլում,
Ո՛չ տերև է սվսվում,
Ո՛չ արևն է երևում,
Ես էլ գնամ ու քնեմ»։
Լուսինը ծագեց, ցած նայեց, տեսավ.
«Ինչ լա՜վ է,— ասաց,—
Ո՛չ որսորդ է ման գալիս,
Ո՛չ նապաստակ վազ տալիս,
Ո՛չ թռչնակ է ծլվլում,
Ո՛չ արևն է երևում,
Մենակ ես եմ, որ անքուն
Քեֆ եմ անում երկնքում»։

(Հ. Թումանյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 35։ Առանձին գրեցե՛ք՝ ինչ ասաց արևը։ Ի՞նչ ասաց լուսինը։

## § 6. ԲԱՂԱՁԱՅՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

**Հայերենի բաղաձայն հնչյուններն են՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ, ընդամենը 30։**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 36։ Ամեն մի բաղաձայնով սկսվող մի բառ գրեցեք։

**Ռուսերենում չկան հետևյալ բաղաձայն հնչյունները և նրանց համապատասխան տառերը՝ թ, ծ, հ, ձ, ղ, ճ, ջ, փ, ք։**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 37։ Կարդացե՛ք և արտագրեցե՛ք բառերը։

| թ | ծ | հ | ղ |
|---|---|---|---|
| Թամար | ծայր | հայր | Ղազար |
| թաթ | ծիծաղել | հաց | Ղուկաս |
| Թութ | ծիծեռնակ | հավ | մեղու |
| թուր | ծաղիկ | հանել | մեղր |
| թան | ծուռ | հալել | մաղ |
| թանաք | | | |



| ճ | ջ | ձ | փ | ք |
|---|---|---|---|---|
| ճանճ | ջուր | ձու | փայտ | քույր |
| ճառ | ջրել | ձի | փոր | քնել |
| ճաշ | ջան | ձեռք | փեթակ | քաղել |
| ճակատ | ջինջ | ձայն | փափուկ | մաքուր |
| ճուտ | ջնջել | ձայնավոր | ափ | տաք |

**Հայերենի «յ» հնչյունը մոտավորապես նման է ռուսերեն й հնչյունին։**

**Հայերեն ռ հնչյունը արտասանվում է ռուսերեն կոշտ р-ի նման, իսկ ր հնչյունն արտասանվում է ռուսերեն փափուկ р-ի նման։**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 38։ Կարդացե՛ք, ճիշտ արտասանեցե՛ք։

| | |
|---|---|
| ռուբլի | Կարո |
| ռեզին | Մարո |
| Ռուստամ | Արաքս |
| ռոռ | Արարատ |
| ծառա | մաքուր |
| ձեռք | բերել |
| ռևոլյուցիա | վարել |
| | գրել |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 39։ Արտագրեցե՛ք։ Հաշվեցե՛ք, թե ամեն մի բառ քանի՞ բաղաձայն հնչյուն ունի։ Ո՞ր բաղաձայնները չկան ռուսերեն լեզվում։

Խոնարհ ու հեզ
Մի հոգնած եզ,
Արորն ուսին,
Ճանճը պոզին՝
Մի իրիկուն
Գալիս էր տուն։
Մին էլ ճամփին
Մի ուրիշ ճանճ
Այն նստածին
Ասաց.— Տո մա՛նչ,
Այդ եզան հետ
Որտեղի՞ց էք։


ՀԱՅ Арм.ССР
1657-54

Քիթը տնկած
Ճանճը ասաց.
— Մենք որտեղի՞ց...
Վարում էինք,
Վարատեղից։

(Խենկո-Ապեր)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 40։ Գրավոր պատասխանեցե՛ք հարցերին։
Ո՞վ էր վերադառնում տուն։
Որտե՞ղ էր նստած ճանճը։
Ո՞վ էր աշխատել։
Ո՞վ էր հպարտանում։

## § 7. Յ ՀՆՉՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՐԸ

*Հայերեն յ հնչյունը մոտավորապես նման է ռուսերեն й հնչյունին։ Յ հնչյունը, միանալով ձայնավորներին, կազմում է* երկհնչյուններ՝ յա, յո, յու, այ, ոյ, ույ:

Օրինակ՝

*Ոսկյա, Կոլյա, յոթ, յուր, այս, գույն, Սերգեյ։ Ի տառից հետո յ չի գրվում.*

Օրինակ՝

*Մաքսիմ Գորկի, միասին, ձիավոր։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 41։ Կարդացե՛ք և գտեք երկհնչյուններ։ Որոշեցե՛ք բաղաձայններն ու ձայնավորները։ Գարգեցե՛ք՝ ը լավելիս որտեղ է գրվում և որտեղ չի գրվում։*

## ԼԱՎ ԸՆԿԵՐԸ

Մի փնջի մեջ,
Մեխակի մոտ
Ընկավ վայրի
Մի ծաղիկ,
Այն մեխակից
Առավ լավ հոտ
Դարձավ հոտոտ
Անուշիկ։

Դուք էլ, եթե
Այն ծաղկի պես
Լավ ընկերներ
Ունենաք,
Նրանց նման
Սիրուն, հոտոտ,
Խելոք, բարի
Կդառնաք։



## § 8. ԱՅԲՈՒԲԵՆ

**Տառերը լինում են մեծատառ և փոքրատառ: Մեծատառը լինում է միայն բառասկզբին:**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 42։ Արտագրեցե՛ք տառնավարի ձեռագիր տողերը։ Գրեցե՛ք ձայնավորները, բաղաձայնները, երկհնչյուն-ները, լավ, բայց չգրվող ը-ն։ Ընդգծեցե՛ք մեծատառերը։*

Հոկտեմբեր
Այսօր նորից ենք տոնում
Քո մեծ տոնը, Հոկտեմբեր,
Դու տվել ես բոլորին
Երջանիկ կյանք, լավ օրեր:

*Մեր երկիրը լայնարձակ,*
*Ծաղկափթիթ մի պարտեզ,*
*Ուր պայծառ է կյանքը նոր*
*Վառ արևի լույսի պես։*

Այսօր զվարթ քո տոնին,
Առած կարմիր դրոշներ,
Մենք գնում ենք միասին
Կեցցե կարմիր Հոկտեմբեր:

(Հ. Հայրապետյան)

Տառերի ընդունված շարքը կոչվում է այբուբեն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 43: Արտագրեցե՛ք մեծատառերը:

*Այբուբեն*

Աա, Բբ, Գգ, Դդ, Եե, Զզ, Էէ, Ըը, Թթ, Ժժ, Իի, Լլ, Խխ, Ծծ, Կկ, Հհ, Ձձ, Ղղ, Ճճ, Մմ, Յյ, Նն, Շշ, Ոո, Չչ, Պպ, Ջջ, Ռռ, Սս, Վվ, Տտ, Րր, Ցց, Ու ու, Փփ, Քք, և, Օօ, Ֆֆ:

*Ձեռագիր այբուբեն*



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 44: Արտագրեցե՛ք փոքրատառերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 45: Արտագրեցե՛ք այբբենական կարգով:

գ, թ, ի, ժ, դ, գ, ե, ը, ա, խ, լ, է, օ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 46: Արտագրեցե՛ք բառերը իրենց առաջին տառերի այբբենական կարգով:

Արամ, ծաղիկ, թաթ, բառ, գարուն, դանակ, ընկեր, զանգ, ի՞նչ, էմին, լոր, խաղող, օր, երգ:



## § 9. Ե ԳԻՐԸ

Ե հնչյուն ունեցող յեվ բառը կարճ գրվում է և:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 47: Արտագրեցե՛ք, ընդգծեցե՛ք և գիրը:

### ՄԵՂՈՒ

Առավոտից ես շրջում եմ
Ե՛վ դաշտ, ե՛ սար, ե՛ այգի.
Ես մի փոքրիկ ժիր անդամն եմ
Մեր համերաշխ համայնքի:

(Մ. Կորյուն)

Եվ լսելիս՝ բառի մեջ գրվում է և, բառասկզբին գըր-վում է եվ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 48: Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք և տառը: Քանի՞ հնչյունի նշան է:

| | | |
|---|---|---|
| արև | եղևնի | Սևան |
| տերև | անձրև | Երևան |
| բարև | ոև | Լևոն |
| | ձև | Եվրոպա |

## § 10. ՏՈՂԱԴԱՐՁ—Перенос слова

Բազմավանկ բառերը կարելի է բաժանել վանկերի: Վանկն ունի միայն մեկ ձայնավոր, իսկ բաղաձայն՝ մեկ կամ ավելի:

Օրինակ՝

Ա-շա-կերտ, Սա-նա-սար:

Վանկերի բաժանելիս՝ բաղաձայնների միջև լսվող ը ձայնավորը գրվում է:

Օրինակ՝

Գը-լուխ, փըս-փը-սալ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 49: Արտագրեցե՛ք՝ վանկերի բաժանելով. որտեղ լսվում է ը, գրեցե՛ք. ցույց տվեք՝ քանի՞ ձայնավոր ունի ամեն մի վանկ, քանի՞ բաղաձայն ունի ամեն մի վանկ:

## ԿԱՄԱԿՈՐ ԱՅԾԵՐԸ

Երկու կամակոր այծեր իրար հանդիպեցին մի նեղ կամուրջի վրա։ Այծերից ոչ մեկը չուզեց մյուսին ճանապարհ տալ։ Նրանք ճակատ ճակատի զարկեցին, իրար գլուխ պատռեցին և վերջը երկուսով էլ թռմփացին ջուրը։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 50։ Գրավոր պատասխանեցե՛ք հարցերին.*

*Որտե՞ղ հանդիպեցին կամակոր այծերը։*

*Ինչո՞ւ կռվեցին։*

*Ո՞վ պատժվեց և ինչպե՞ս։*

**Երբ ամբողջ բառը տողում չի տեղավորվում, մեկ կամ մի քանի վանկ տանում ենք հաջորդ տողը։ Դա կոչվում է տ ո ղ ա դ ա ր ձ։**

*Օրինակ՝*

Ար-տաշես։ Արտա-շես։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 51։ Արտագրեցե՛ք՝ վանկերի բաժանելով. չմոռանաք ը գրել, երբ վանկի մեջ լսվում է։ Գրեցե՛ք բաց և փակ վանկերը։*

Իմ դասագիրքը

Երբ դպրոց տարավ
Ինձ իմ մայրիկը,
Սիրով ձեռքս տվավ
Իմ դասագիրքը։

Գույներով պես-պես
Պատկերով լիքը,
Սիրունիկ այնպես
Իմ դասագիրքը։

*Գնում ենք դպրոց*
*Ես ու Լևոնիկը,*
*Կարդում ենք ուրախ*
*Իմ դասագիրքը։*

*Ահա մեր ազատ,*
*Մեծ Հայրենիքը,*
*Որ ցույց է տալիս*
*Իմ դասագիրքը։*

(Վ. Գրիգորյան)



**Տողադարձ անելիս և գիրը գրվում է ե-վ.**

Օրինակ՝

արևի=արե-վի, տերևի=տերե-վի։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 52։ Արտագրեցե՛ք և յուրաքանչյուր բառ բաժանեցե՛ք տողադարձի նման՝ ձեր ցանկացածի պես. չմոռանաք լսվող ը գիրը գրել (օրինակ՝ ձըն-ծաղիկ, ձնծա-ղիկ)։*

## ՁՆԾԱՂԻԿ

*Ամբողջ ձմեռ*
*Վերմակ առել,*
*Քուն էր մտել մի ծաղիկ,*
*Ձյունի ծոցում*
*Նա չէր մրսում,*
*Քունն էր հանգիստ,*
*անուշիկ.*
*Երբ արևը*
*Իր բարևը*
*Տվեց սառած աշխարհին,*
*«Ելե՛ք, ելե՛ք,*
*Սիրո՛ւն բալեք»*
*Ձայն տվեց նա բոլորին։*
*Ձյունը ճեղքեց,*
*Ելավ կանգնեց*
*Ամենից շուտ մի ծաղիկ,*
*Մարդիկ տեսան,*
*Ուրախացան,*
*Անվանեցին ձնծաղիկ։*

(Հ. Հայրապետյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 53։ Գրավոր նկարագրեցե՛ք գարնան գալը։

Ի՞նչ է անում արևը։
Ի՞նչ է լինում օրը։
Ինչպե՞ս է լինում օդը։
Ի՞նչ է լինում ձյունը։
Ինչո՞վ է ծածկվում դաշտը։

Ի՞նչ են անում թռչունները, կենդանիները և մարդիկ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 54։ Արտագրեցե՛ք և բազմավանկ բառերը վանկերի բաժանեցե՛ք տողադարձի նման։

## ԵՐԿՈՒ ԽՈՓ

Միևնույն երկաթի կտորից դարբնոցում շինված էին երկու խոփ։ Նրանցից մեկն իսկույն գնաց աշխատանքի, իսկ մյուսը երկար ժամանակ ընկած էր դարբնոցում։

Մի անգամ այդ երկու խոփերը կրկին պատահեցին իրար։ Աշխատող խոփը արծաթի պես փայլում էր, իսկ պարապ մնացածը սևացած էր ու ժանգով պատած։

## § 11. ՄԵԾԱՏԱՌ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 55։ Արտագրեցե՛ք։

Կարիկ, Անուշ, Աշիկ, Խորեն,
Արմիկն, Արշակն, Անուշն ուր են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 56։ Քանի՞ անուն կասես՝

գետի. Վոլգա . . . . . . .
սարի. Արագած . . . . .
գյուղի. Քանաքեռ . . . . . . .
քաղաքի. Երևան . . . . . . .
Տղայի. Արամ . . . . . . .
աղջկա. Հասմիկ . . . . . . .

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 57։ Գրեցե՛ք հինգական անուն գետի, սարի, գյուղի, քաղաքի, տղայի, աղջկա։



**Գրելիս մարդկանց, գետերի, լճերի, լեռների, գյուղերի, քաղաքների, փողոցների, երկրների անունները սկսվում են մեծատառով։**

**Ազգանուններն ու հայրանունները նույնպես սկսվում են մեծատառով։**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 58։ Գրեցե՛ք երեք տղայի անուն, չորս աղջկա անուն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 59։ Կազմեցե՛ք հինգ անուն և ազգանունների ցուցակ.

1. Նիկոլայ Կուզնեցով։
2.
3.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 60։ Կազմեցե՛ք ձեր ընկերների անվանացուցակը այբբենական կարգով. օրինակ՝

Աբրահամյան Արա Կարապետի,
Աստախով Պյոտր Վլադիմիրովիչ...

**Գրելն սկսում ենք մեծատառով։**

**Վերջակետից հետո էլ սկսում ենք մեծատառով։**

**Ոտանավորի ամեն մի տողի առաջին բառն էլ սկսում ենք մեծատառով։**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 61։ Բացատրեցե՛ք՝ ո՞ր բառերն են սկսվում մեծատառով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 62։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք մեծատառով սկսվող բառերը. բացատրեցե՛ք։

I

Արմենակ Հովհաննիսյանը գերազանցիկ աշակերտ է։ Վոլգան և Դոնը, ռուսական մեծ գետերը, միացան Վոլգա-Դոն ջրանցքով։ Մասիսն ու Արագածը լեռներ են։ Երևանն ու Լենինականը Սովետական Հայաստանի մեծ քաղաքներն են։ Երևանի փողոցներն են՝ Լենինի անվան պողոտան, Ստալինի անվան պողոտան, Աբովյանի անվան փողոցը։

II

Մենք սիրում ենք Երևանը
Այգիներով իր դալար,
Կանաչ Նորքը, ջինջ Սևանը,
Զանգուն գվարթ ու վարար։

(Մ. Կորյուն)

# ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ—
# Простое предложение

## § 12. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ
## Члены предложения

**Նախադասություն կազմող բառերը կոչվում են նախադասության անդամներ։**

*Նախադասության անդամները միմյանց հետ կապված են իմաստով* (по смыслу)։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 63։ Կարդացե՛ք հոդվածը, որոշեցե՛ք՝ քանի՞ նախադասությունից է կազմված։ Քանի՞ անդամից է կազմված յուրաքանչյուր նախադասություն։*

### ՇԱՐԻԿԸ

*Շարիկը հիվանդացավ։*

*Պետիկը նրա բնի մեջ չոր խոտ փռեց։ Պետիկը նրան տաք կաթ խմեցրեց։*

*Շարիկն առողջացավ։ Նա սկսեց Պետիկի հետևից վազվզել։*

*Մի անգամ Պետիկը գետի ափին ձուկ էր որսում։ Անզգուշությունից նա ընկավ գետը։*

*Շարիկն իսկույն իրեն նետեց գետը։ Նա ատամներով բռնեց Պետիկի շորերից։ Շարիկի օգնությամբ Պետիկն ազատվեց։*



## § 13. ԵՆԹԱԿԱ—подлежащее

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 64։ Արտագրեցե՛ք նախադասությունները։*

*Լյովան գրում է։*
*Վանյան նկարում է։*
*Նեկտարը նվագում է։*
*Կոլյան ու Նունիկը նկարում են։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 65։ Պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին։*

*Ո՞վ է նկարում...*
*Ովքե՞ր են նկարում...*
*Ո՞վ է գրում...*
*Ո՞վ է նվագում...*

**Նախադասության այն անդամը, որը ցույց է տալիս մի բան անող կամ լինող առարկան, կոչվում է ենթակա (подлежащее).**

*Ենթական պատասխանում է ո՞վ (ովքե՞ր) կամ ի՞նչ (ինչե՞ր) հարցերին։*

Օրինակ՝

Կոլտնտեսականը աշխատում է դաշտում։

Ծառը ծածկվում է կանաչ տերևներով։

*Այս նախադասությունների մեջ* կոլտնտեսականը և ծառը *ենթականեր են։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 66։ Ցույց տվե՛ք յուրաքանչյուր նախադասության ենթական։*

*Եկել է գարուն,*
*Ծաղկել է այգին։*
*Երգում է առուն*
*Պարզ ու խնդալին։*

*Աշոտը դաս է սովորում։*
*Անյան նկարում է։*
*Լիլիկը ճաշում է։*
*Վլադիկը խաղում է։*

## § 14. ՍՏՈՐՈԳՅԱԼ—Сказуемое

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 67: Պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին.*

*Տրակտորն ի՞նչ է անում:*
*Կոմբայնն ի՞նչ է անում:*
*Գարունը բերում է ծաղիկներ:*
*Կոլտնտեսականները հավաքում են առատ բերքը:*
*Դաշտը կանաչում է:*

*Այս նախադասությունների մեջ* բերում է, հավաքում են, կանաչում է *բառերը ստորոգյալներ են:*

**Նախադասության այն անդամը, որը ցույց է տալիս, թե ենթական ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ո՞վ է կամ ի՞նչ է, ինչպե՞ս է և այլն, կոչվում է ստորոգյալ (сказуемое):**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 68: Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք միայն ստորոգյալները:*

*Ցորենի հասկը պառկած էր հողի տակ:*
*Հասկի մեջ քնած էր փոքրիկ սաղմը:*
*Գարնան արևի շողը եկավ, կանչեց նրան.*
*— Զարթնի՛ր, գարուն է:*

*Ստորոգյալը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի բառերից և պատասխանել ի՞նչ է, ինչպիսի՞ն է, ի՞նչ է անում, ի՞նչ արեց, ի՞նչ է լինում, ի՞նչ եղավ և նման հարցերին:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 69: Արտագրեցե՛ք հետևյալ վարժությունը, ենթակայի տակ մեկ, իսկ ստորոգյալի տակ երկու գիծ քաշեցե՛ք. ստորոգյալի վերևը գրեցե՛ք հարցերը:*

*Ահա եկան աշնանային թուխպ օրեր:*
*Մաղմղում են մանրահատիկ կաթիլներ:*
*Ծառերն իրենց տերևներից մերկացան:*
*Կռունկները շարան-շարան անց կացան:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 70: Կետերի տեղ գրե՛ք համապատասխան ենթականեր:*



*. . . . . . . հնչեց: . . . . . սկսվեց: . . . . . . . կարդացին: . . . . . վերջացավ: . . . . . հանգստանում է: . . . . . . . . . . խաղում են:*

*(զանգը, դասը, աշակերտները, դասը, ուսուցիչը, աշակերտները):*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 71: Կետերի տեղը գրե՛ք համապատասխան ստորոգյալներ:*

*Դասը . . . . . Ուսուցիչը . . . . . . :*
*Աշակերտները ձեռները . . . . . . . :*
*Համիկը . . . . . . :*
*Համիկը գերազանց գնահատական . . . . . . :*
*Դասը . . . . . . :*

*(սկսվում է, հարցնում է, բարձրացնում են, պատասխանում է, ստացավ, հետաքրքրական է):*

*Հայերենում* եմ, ես, է, ենք, եք, են *կոչվում են ներկա ժամանակի օժանդակ բայեր* (вспомогательные глаголы настоящего времени):

էի, էիր, էր, էինք, էիք, էին *ձևերը կոչվում են անցյալ ժամանակի օժանդակ բայեր* (вспомогательные глаголы прошедшего времени):

*Եթե ստորոգյալը բաղկացած է օժանդակ բայից և մի այլ բառից, ապա այդ օժանդակ բայը գրվում է կամ այդ բառից առաջ, կամ հետո:*

*Օրինակ՝*
Կոլտնտեսականներն են աշխատում դաշտում:
Կոլտնտեսականներն աշխատում են դաշտում:

*Ստորոգյալը կլինի* աշխատում են:
*Եթե ստորոգյալները մի քանիսն են, ապա օժանդակ բայը կրկնվելու դեպքում բաց է թողնվում:*

*Օրինակ՝*
Փչում է քամին և շարժում ծառերը:

Շարժում բառից հետո կրկնվող «է» օժանդակ բայը բաց է թողնված, պետք է լիներ՝ շարժում է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 72. Արտագրեցե՛ք ենթականերն ու ստորոգյալները։

## ԳԱՐՆԱՆ ՕՐԵՐ

Արևն եկավ, պայծառ փայլեց,
Շողքը փռեց, ձյունը հալվեց,
Հողի տակից ծիլերը հեզ
Դուրս են եկել, նայում են մեզ։
Հասեցին հորդ գետն ու առուն,
Ծառի ճյուղին ծիտն է թառում,
Եկան նորից գարնան օրեր,
Կանաչ հագան դաշտ ու ձորեր։
Կոլտնտեսնիկներն ուրախ, արի,
Անա ելան դաշտը՝ վարի։

(Ա. Վշտունի)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 73։ Կարդացե՛ք, արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք միայն ենթականերն ու ստորոգյալները։

Ձմեռ.

Ձմեռը եկավ։ Ձյունը ծածկեց դաշտը ու այգին, սարը ու ձորը։ Ընտանի կենդանիները պատսպարվեցին տաք գոմերում։ Վայրի կենդանիները տաք մուշտակ հագան։

Կոլտնտեսականները ձմռան համար ունեն շատ ալյուր, ձավար, կախաններով խաղող, սանձ ու խնձոր և շատ մթերքներ։

Երեխաները ձյունից ու ցրտից չեն վախենում։ Նրանք սահում են։ Նրանք աղլում են։ Նրանք ձնագնդի են խաղում։

Երեխաները պատրաստում են ձնե մարդ։

## § 15. ՊԱՐԶ ՀԱՄԱՌՈՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### Простое нераспространённое предложение

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 74։ Կարդացե՛ք և ցույց տվե՛ք, թե քանի բառից է կազմված ամեն մի նախադասությունը։

Առավոտը գործարանում.

Գիշերն անցավ։ Լույսը բացվեց։ Արևը ծագեց։ Քաղաքն արթնացավ։ Շչակը հնչեց։ Բանվորները հավաքվեցին։ Աշխատանքն սկսվեց։

**Միայն ենթակայով և ստորոգյալով կազմված նախադասությունը կոչվում է համառոտ նախադասություն (нераспространённое предложение)։**

Համառոտ նախադասության գծագիր (схема).

Ձյունը ←——→ հալվեց։
↓ ↓
ենթակա ստորոգյալ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 75։ Լրացրե՛ք բաց թողնված բառերը։ Նախադասությունների վերջում վերջակետ դրե՛ք։ Հաջորդ նախադասությունն սկսեցե՛ք մեծատառով։

Գարուն

Ձյունը . . . . . . . օրերը . . . . . . . ծառերը . . . եկավ . . . . եռաց . . . . . :

(հալվեց, տաքացան, ծաղկեցին, ծիծեռնակը, աշխատանքը)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 76։ Ուշադիր կարդացե՛ք։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք համառոտ նախադասությունները։

## ԱՇՆԱՆ ՍԿԶԲԻՆ

Աշնան սկզբին մի բարակ քամի
Սարից եկավ, դաշտերը իջավ,
Ասաց, փսփսաց մի բան ամենքին
Ու անցավ գնաց, անտառը մտավ։

Խոտը չորացավ։ Հողը ցամաքեց։
Այստեղ ու այնտեղ բացվեցին ճեղքեր։
Անտառը դողաց։ Ու վախից իսկույն
Դեղին գույն հագան կանաչ տերևներ։

(Հ. Թումանյան)

## § 16. ՊԱՐԶ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

## Простое распространённое предложение

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 77։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք նախադասության այն անդամները, որոնք ենթակա կամ ստորոգյալ չեն։

Փչում են անուշ հովերը։
Ծփում են ոսկե հասկերը։



**Բացի ենթակայից և ստորոգյալից, նախադասության մյուս բոլոր անդամները կոչվում են լ ր ա ց ու մ ն ե ր (поясняющие слова)։**

Լրացումները պարզաբանում են (ПОЯСНЯЮТ) նախադասության միտքը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 78։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք լրացումները։

Մի անգամ, առավոտյան արշալույսին, Շչորսը հետապնդում էր սպիտակգվարդիականներին։ Նրանք փախչում էին դեպի գետի կողմը։

Շուտով Շչորսն իր պարտիզանների հետ շրջապատեց նրանց։ Բոլոր սպիտակգվարդիականները բռնվեցին։

**Նախադասության ենթական և ստորոգյալը կոչվում են գ լ խ ա վ ո ր ա ն դ ա մ ն ե ր (главные члены)։**

**Նախադասության լրացումները կոչվում են ե ր կ ր ո ր դ ա կ ա ն ա ն դ ա մ ն ե ր (второстепенные члены)։**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 79։ Արտագրեցե՛ք և գլխավոր անդամներն ընդգծեցե՛ք մեկ գծով, իսկ երկրորդական անդամները՝ երկու գծով։

Կոլտնտեսականները մշակում են բամբակի դաշտերը։
Անդրեյն աշխատում է գործարանում։
Սուրիկը սովորում է դպրոցում։

**Լրացում ունեցող նախադասությունը կոչվում է ը ն դ ա ր ձ ա կ ն ա խ ա դ ա ս ու թ յ ու ն (распространенное предложение)։**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 80։ Արտագրեցե՛ք ընդգծված ընդարձակ նախադասությունները և յուրաքանչյուր անդամի վերևում գրեցե՛ք նրան տրվող հարցը։



Հայոց լեզու 5—7-րդ դաս.—3

## ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՄՌԱՆԸ

Գեղեցիկ է մեր երկիրը։ *Ամառը սար, ձոր, դաշտ, արտ ու այգի ծածկված են կանաչով, գույնզգույն ծաղիկներով։ Ամառը դաշտում ու ձորում շատ շոգ է լինում, իսկ սարերում՝ շատ հով։* Կոլտնտեսականները աճեցնում են առատ բերք։ *Արտում հասկն է լցվում, այգում հասնում են մրգերը։* Ամառվա շոգին սարից հաճախ փչում է մեղմ զեփյուռ։ Հեռվում ադամանդի պես շողում են լեռների ձյունապատ գագաթները։ *Երկինքը ջինջ է ու կապույտ, մի փիրուզե թաս՝ շուռ տված երկրի վրա։*

**Նախադասության այն անդամը, որը պարզաբանում է ենթական, կոչվում է ե ն թ ա կ ա յ ի լ ր ա ց ու մ։**

*Օրինակ՝*

Գերազանցիկ Ստեփանը պարգևատրվեց։

Գերազանցիկ *բառը* Ստեփանը *ենթակայի լրացումն է։*

*Ենթակայի լրացում ունեցող ընդարձակ նախադասության գծագիրը.*

*Գերազանցիկ Ստեփանը* ⟷ *պարգևատրվեց։*

↓ ↓ ↓

*լրացում ենթակա ստորոգյալ*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 81։ *Գծագրերով արտահայտեցե՛ք ենթակայի լրացում ունեցող հետևյալ նախադասությունները։*

*Ծփում են ոսկե հասկերը։*

*Հսկա կոմբայնը հնձում է։*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 82։ *Արտագրեցե՛ք հետևյալ նախադասությունները և ընդգծեցե՛ք այն լրացումները, որոնք պարզաբանում են ստորոգյալը։*

*Դպրոցը կազմակերպեց երեկույթ։*

*Վանյան արտասանեց ոտանավոր։*

*Համբիկը լավ պարեց։*



**Նախադասության այն անդամը, որ պարզաբանում է ստորոգյալը, կոչվում է ս տ ո ր ո գ յ ա լ ի լ ր ա ց ու մ։**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 83։ *Որոշեցե՛ք և ընդգծեցեք ամեն մի նախադասության ստորոգյալի լրացումները։*

## Բ Ա Մ Բ Ա Կ

*Հնում մարդիկ հագնում էին բրդից ու վուշից պատրաստված շորեր։ Կանայք բուրդը գզում էին, ճախարակով մանում, թել դարձնում։ Հետո էլ այդ թելերից տանը կտոր էին գործում։*

*Այժմ գործվածքների մեծ մասը բամբակից են պատրաստում։*

*Բամբակը բուսնում է դաշտում. նա սիրում է արև, լույս, տաքություն և փխրուն հող։*

*Ինչպես են աճեցնում բամբակը։*

*Հողը տրակտորով վարում են, հետո երկար մարգեր կապում։ Շարքացան մեքենան սերմերը գցում է հողի մեջ։ Երբ արևը տաքանում է, դուրս են գալիս ծիլերը։ Հետո բույսը մեծանում է ու ծաղկում։ Ծաղիկները խոշոր են, սպիտակ, կարմիր կամ դեղնավուն գույնի։ Հետո հասնում է ընկույզի նման պտուղը, որը կոկոն է կոչվում։ Աշնանը կոկոնը պատռվում է, և միջից դուրս է գալիս ձյան պես սպիտակ բամբակ։*

*Ստորոգյալի լրացում ունեցող ընդարձակ նախադասության գծագիրը.*

*ենթակա ստորոգյալ*

*Դպրոցը* ⟷ *կազմակերպեց*

↓

*հանդես*

*լրացում*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 84։ *Արտագրեցե՛ք ընդգծված նախադասությունները և ընդգծեցե՛ք ենթակայի լրացումները՝ մեկ, ստո-*

բոդյալի լրացումները՝ երկու գծով. յուրաքանչյուրի վերևը գրեցե՛ք նրան տրվող հարցը։

## ԱՄԱՌԸ ՍԵՎԱՆՈՒՄ

Սևանա լիճը գեղեցկության մի իսկական հրաշալիք է: Նրա ափերի գյուղերն ամառանոցային վայրեր են, իսկ Սևանա կղզում կառուցված է լավագույն հանգստյան տուն։ Ամառը շատ էքսկուրսանտներ են գնում Սևանա կղզին:

Սևանա լիճը հայտնի է իր «իշխան» կոչված ձկներով։ Սևանա լճից սկսվում է Հրազդան գետը: Այդ գետի վրա կառուցված են մի քանի հիդրոկայաններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 85։ Վերլուծեցե՛ք հետևյալ նախադասությունները։

Օդանավն արագ թռչում է։ Մեր օդաչուներն անվախ են։ Մեր երկրի ժողովուրդը պարծենում է իր օդաչուներով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 86։ Գտե՛ք ենթակայի և ստորոգյալի լրացումները։

Սրընթաց գնացքը մոտեցավ մեծ կայարանին։
Լայնարձակ է հայրենի երկիրն իմ։
Շքեղ Մոսկվան զարդարվում է վեհակառույց շենքերով։
Ջանասեր աշակերտը սիրում է պարապել։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 87։ Գտե՛ք ենթակայի և ստորոգյալի լրացումները։

Դպրոցի շենքը նորոգված է։
Գարնան օրերին պայծառ արև է լինում։
Պարտաճանաչ աշակերտի վարքը գովելի է։
Հայրենասեր դպրոցականի գնահատականները բարձր են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 88։ Արտագրեցե՛ք՝ հարցերի փոխարեն դնելով փակագծերում տրված բառերը։ Ի՞նչ լրացումներ են ստացվում։

Նջեխան որսում է (ի՞նչ)։



Երեխաները գրեցին (ի՞նչ)։
Կոլտնտեսականը կալսում է (ինչո՞վ)։
(ձուկ, պատմվածք, կալսիչ մեքենայով)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 89։ Համառոտ նախադասությունները դարձրե՛ք ընդարձակ նախադասություններ։ Ինչպիսի՞ լրացումներ են առաջանում։

Ծփում են հասկերը։ Հնձում է կոմբայնը։ Հրճվում են կոլտնտեսականները։ Լցվում են պարկերը։ Ցորենն առատ է։ Կոլտնտեսականները ունևոր են։ Կյանքը ուրախ է։

(մեղմ, ոսկե, անդադար, առատ բերքով, ոսկի ցորենով, մեր սովետական երկրում)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 90։ Որոշեցե՛ք հետևյալ նախադասությունների ենթական, ստորոգյալը և լրացումները։

Գարունը եկավ։ Ձմռան քնից արթնացավ բնությունը։ Ծաղկեցին ծառերը։ Հեռու երկրներից երամներով եկան կռունկները։ Կոլտնտեսականներն սկսեցին աշխատանքը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 91։ Հետևյալ համառոտ նախադասությունները վերածե՛ցեք ընդարձակ նախադասությունների՝ ավելացնելով փակագծերում տրված հարցերին համապատասխան լրացումներ։ Ինչպիսի՞ լրացումներ են ստացվում։

Աշակերտը (որտե՞ղ, ինչո՞վ, ի՞նչ) գրեց։
Հակոբը (ե՞րբ, որտե՞ղ, ո՞ւմ հետ) դիտեց «Լենինը Հոկտեմբերին» կինոնկարը։
Երեխաները (ինչո՞վ, ո՞ւր) են գնում։
Կոլտնտեսությունը (ե՞րբ, ինչո՞վ, ի՞նչ) է հնձում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 92։ Վերլուծեցե՛ք այս նախադասությունը ըստ տրված հարցերի։

Նելլին կարդում է Պուշկինի «Ոսկե ձկնիկ» հեքիաթը։

1) Նելլին ի՞նչ է անում։ 2) Ո՞վ է կարդում։ 3) Ի՞նչ է կարդում։ 4) Ո՞ւմ հեքիաթը։

**Լ ր ա ց ո ւ մ կարող է լինել մեկ բառ կամ մի քանի բառեր, որ անանջատելի միություն են կազմում։**

**Լրացումները պատասխանում են որևէ հարցի։**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 93։ Գտե՛ք նախադասության գլխավոր և երկրորդական անդամները և նրանց տրվող հարցերը։*

## ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

*Արևի ոսկի ճառագայթները հեղեղել էին սար ու ձոր, դաշտ ու անտառ։*

*Գյուղն ու քաղաքը տոնական տեսք էին ընդունել։*

*Բոլոր տների վրա, հրապարակներում ծածանվում էին կարմիր դրոշակները։*

*Զանազան փողոցներից լսվում էր քայլք և ուրախ նվագ։*

*Երթն անցնում էր մեծ հրապարակով։*

*Բոլորից առաջ գնում էին մեր պանծալի մարտիկները։ Նրանցից հետո գնում էին գործարանների բանվորները, ծառայողները, ֆիզկուլտուրնիկները, պիոներները։ Ստախանովական Նիկոլայը և Արամը բարձր բռնած տանում էին կարմիր դրոշակները։ Երթի առաջից պիոներները մեծ հրճվանքով տանում էին Լենինի և Ստալինի նկարները։*

*Օդում ճախրում էին շատ ու շատ ինքնաթիռներ։*

*— Կեցցե՛ Մայիսի 1-ը։ Կեցցե՛ մեզ երջանիկ կյանք պարգևող կոմունիստական պարտիան, — գոչում էին բոլորը։*

**Երբ նախադասության որևէ անդամ բաց է թողնվում, տեղը դրվում է բութ (՝)։**

*Օրինակ՝*

Արամը գնաց տուն, իսկ Մանյան՝ դպրոց։

Լուսիկը դաս է գրում, իսկ Լևիկը՝ նամակ։



Մանյան և Լևիկը *բառերի վրա դրվում է բութ, որովհետև նրանցից հետո բաց է թողնվում* գնաց *և* գրում է *ստորոգյալները։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 94։ Արտագրեցե՛ք այն նախադասությունները, որոնց մեջ բութը փոխարինում է որևէ անդամի, լրացրե՛ք բաց թողնվածը։*

*Մարտը տալիս է ձնծաղիկ,*
*Ապրիլը՝ կապույտ մանուշակ,*
*Մայիսին բացվում է վարդը,*
*Սոխակն երգում անուշակ։*

*Հունիսը մեզ խոտ է տալիս,*
*Իսկ հուլիսը՝ առատ ցորեն,*
*Օգոստոսը՝ տանձ ու խնձոր*
*Եվ ուրիշ շատ հասուն մրգեր։*

*Սեպտեմբերը մեզ տալիս է*
*Խաղողի բոլոր տեսակը,*
*Հոկտեմբերը՝ կարմիր գինի,*
*Նոյեմբերը՝ բողկն ու տակը։*

(Ղ. Աղայան)

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 95։ Ուշադրությո՛ւն դարձրե՛ք, թե ինչպես են արտասանվում և գրվում* ձնծաղիկ, ապրիլ, կապույտ, մանուշակ, վարդ, երգում է, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, բողկ, նոյեմբեր։ *Արտագրեցե՛ք դրանք ձեր տետրերում։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 96։ Գրեցե՛ք շարադրություն՝ «Տարվա չորս եղանակները»։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 97։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք նախադասությունների երկրորդական անդամները. գտե՛ք նաև գլխավոր անդամները։*

## ԳԱՐՈՒՆ

*Գարունը բերում է պայծառ արև ու տաք օրեր: Գարունը ծածկում է դաշտերը դալար խոտերով: Նա զարդարում է անտառը կանաչ տերևներով: Գարունը բերում է ծաղիկներ ու թիթեռներ: Գարունը կանչում է թռչուններին հեռու երկրներից, և նրանք աշխարհը լցնում են երգերով:*

## § 17. ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### Вопросительное предложение

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 98: Կարդացե՛ք ոտանավորը և արտագրե՛ք միայն հարց արտահայտող նախադասությունները:*

## ԾԱՂԻԿՆԵՐ

*— Խարտյաշ տղա,*
*Ի՞նչ ես քաղում,*
*Հետն էլ երգում, ուրախ, խաղում:*
*— Ծաղիկներ եմ քաղում, խաղում...*
*— Ի՞նչ պիտ անես ծաղիկներն այդ,*
*Սիրուն տղա, այտերով վարդ:*
*— Քաղած կարմիր ծաղիկները*
*Պիտի լինեն իմ նվերը:*

(Վ. Արամունի)

**Հարց արտահայտող նախադասությունը կոչվում է հ ա ր ց ա կ ա ն  ն ա խ ա դ ա ս ո ւ թ յ ո ւ ն (вопросительное предложение):**

*Հարցական նախադասության մեջ հարց արտահայտող բառի վրա հարցական նշան (՞) է դրվում: Ինչպե՞ս է ռուսերենում:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 99: Արտագրեցե՛ք հարցական նախադասությունները և դրե՛ք նրանց հարցական նշանները:*



1

*— Ուր գնաց Կոստյան:*
*— Նա գնաց լրագրեր բերելու:*
*— Իսկ Սեդան ուր է:*
*— Սեդան պատի թերթն է գրում:*
*— Դու օգնեցիր նրան:*
*— Այո:*

2

*1. Ինչպես է կոչվում Սովետական Միության մայրաքաղաքը:*
*2. Հրազդանը որ լճից է սկիզբ առնում:*
*3. «Շունն ու կատուն» ով է գրել:*
*4. Ով է գրել «Ոսկե ձկնիկի» հեքիաթը:*

*(Մոսկվա, Սևան, Հ. Թումանյանը, Պուշկինը):*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 100: Տրված պատասխանների համար գրեցե՛ք հարցական նախադասություններ:*

*Հարց . . . . . . . .*
*Պատասխան.—Պուշկինը ծնվել է 1799 թվին:*
*Հարց . . . . . . .*
*Պատասխան.—«Տորք Անգեղը» գրել է Ղազարոս Աղայանը:*
*Հարց . . . . . . .*
*Պատասխան.—Շոգեմեքենայի գյուտը կատարել է Պոլզունովը:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 101: Կարդացե՛ք հոդվածը, արտագրեցե՛ք միայն հարցական նախադասությունները և նրանց պատասխանները:*

## ԱՇԽԱՐՀՈՒՄ ՄԻ ԵՐՋԱՆԻԿ ԵՐԿԻՐ ԿԱ

*Դա աշխարհի ամենամեծ երկիրն է: Ոտքով մի ծայրից մյուսը գնալու համար հարկավոր է չորս տարի:*

*Հարցնենք այդ երկրի բնակիչներին, բոլորին միանգամից՝ ռադիոյով.*

*— Օրվա ո՞ր ժամանակն է։*
*Ոմանք կպատասխանեն.*
*— Մեզ մոտ առավոտ է։*
*Մյուսները կպատասխանեն.*
*— Մեզ մոտ կեսօր է։*
*Ուրիշները կպատասխանեն.*
*— Մեզ մոտ երեկո է։*

*Հարցնենք այդ երկրի բնակիչներին միանգամից՝ ռադիոյով.*

*— Տարվա ո՞ր եղանակն է։*
*Ոմանք կպատասխանեն.*
*— Մեզ մոտ գարուն է։*
*Մյուսները կպատասխանեն.*
*— Մեզ մոտ ձմեռ է։*
*Հարցնենք այդ երկրի բնակիչներին.*
*— Ի՞նչ հարստություն կա ձեզ մոտ։*
*Ոմանք կպատասխանեն՝ երկաթ։*
*Մյուսները՝ հաց։*
*Ուրիշները՝ քարածուխ, բամբակ, նավթ...*

*Այսպես հարուստ է ու սքանչելի մեր Հայրենիքը, ամբողջ աշխարհի պրոլետարիատի հայրենիքը, Սովետական Միությունը։*

## § 18. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### Повелительное предложение

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 102։ Արտագրեցե՛ք հրաման արտահայտող նախադասությունները։*

*Դու կա՛ց, հորեղբա՛յր։ Դու դարդ մի՛ անիր։*
*Գնա՛, քո օդում դու հանգիստ քնի՛ր։*

(Հ. Թ. «Սասունցի Դավիթ»)



**Հրաման, խորհուրդ, խնդիր կամ կարգադրություն ցույց տվող նախադասությունը կոչվում է հրամայական նախադասություն (повелительное предложение)։**

*Հրամայական բառերի վրա դրվում է շեշտ (՛)։ Ինչպես է ռուսերենում։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 103։ Արտագրեցե՛ք հրամայական նախադասությունները և դրե՛ք բաց թողնված շեշտերը։*

*Դպրոցականներ, տիրապետեցեք գիտության հիմունքներին։ Ամրացրեք կարգապահությունը դպրոցներում։ Օգնեցեք ձեր ընկերներին։ Սիրեցեք ձեր Սովետական Հայրենիքը։ Պատրաստվեցեք կոմունիզմի ակտիվ կառուցողներ դառնալու։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 104։ Ինքներդ կազմեցե՛ք հրամայական նախադասություններ և գրեցե՛ք տետրերում։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 105։ Կարդացե՛ք և արտագրեցե՛ք միայն հրամայական նախադասությունները։*

### ՎԵՐ ԿԱՑ

*Վեր կաց, մանուկ, խորունկ քնից,*
*Արևն արդեն ծագել է,*
*Վե՛ր կաց փափուկ քո անկողնուց,*
*Հավը վաղուց խոսել է։*

*Դե, շուտ ցատկի՛ր, ելի՛ր կայտառ,*
*Մի՛ ծուլանա տեղիդ մեջ.*
*Վազի՛ր դպրոց, գրքերդ առ*
*Ու բախտ գտիր կյանքիդ մեջ։*

## § 19. ԲԱՑԱԳԱՆՉԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### Восклицательное предложение

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 106։ Արտագրեցե՛ք բացագանչություն ցույց տվող նախադասությունները։*

*Կեցցե՜ն մեր հերոս օդաչուները։*
*Երանի՜ ես օդաչու լինեի։*

*Սովորենք, երեխանե՛ր, սովորենք ջերաջանց, որպեսզի կարողանանք մեծ օգուտ տալ մեր Հայրենիքին։*

*Բա՛րձր պահենք Լենինի-Ստալինի անպարտելի դրոշը։*

**Կոչ, ցանկություն, պահանջ, բացագանչություն արտահայտող նախադասությունը կոչվում է բ ա ց ա գ ա ն չ ա կ ա ն ն ա խ ա դ ա ս ո ւ թ յ ո ւ ն (восклицательное предложение)։**

*Բացագանչական նախադասության մեջ կոչ, ցանկություն, պահանջ արտահայտող բառերի վրա բացագանչական նշան (՜) կամ շեշտ (՛) է դրվում։ Ինչպե՞ս է ռուսերենում։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 107։ Արտագրեցե՛ք և դրե՛ք բաց թողնված նշանները։*

*Կեցցե Մեծ Հոկտեմբերը։*

*Բոցավառ ողջույն մեր փառապանծ Սովետական Բանակին։*

*Առաջ, դեպի նորանոր հաղթանակներ։*

*Որքան լավ է ապրել Սովետական Հայրենիքում։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 108։ Արտագրեցե՛ք և դրե՛ք բացագանչական նշանները և շեշտերը։*

*Դավիթն էլ ահա սարի գագաթին կանգնած գոռում է վիշապի նման։*

*— Ով քնած եք՝ արթուն կացեք,*
*Ով արթուն եք՝ ելեք, կեցեք,*
*Ով կեցել եք՝ զենք կապեցեք,*
*Զենք եք կապել՝ ձի թամբեցեք,*
*Ձի եք թամբել՝ ելեք, հեծեք.*
*Հետո չասեք, թե մենք քնած՝*
*Դավիթ գող-գող ելավ գնաց...*

(Հ. Թումանյան)



## § 20. ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### Повествовательное предложение

**Առանց հարցական և այլ երանգի նախադասությունը կոչվում է պ ա տ մ ո ղ ա կ ա ն ն ա խ ա դ ա ս ո ւ թ յ ո ւ ն։**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 109։ Ցույց տվե՛ք պատմողական նախադասությունները։ Որոշեցե՛ք մյուս նախադասությունների երանգը։*

### ԺԱՄԸ ՉՈՐՍԻՆ

*Մի հարուստ անգլիացի ավտոմոբիլով գնում էր կայարան։ Նա գնացքով պետք է մեկներ։*

*Հանկարծ մեքենան կանգ առավ։*

*Շոֆերը ավտոմոբիլից դուրս եկավ, գլխարկը վերցրեց ու լուռ կանգնեց։*

*— Մեքենան փչացե՞լ է,—հարցրեց հարուստը։ —Շտապի՛ր, ժամը չորսին գնացքը մեկնում է. հինգ րոպե է մնում։*

*Շոֆերը նայեց ժամացույցին և ասաց.*

*— Հիմա Մոսկվայում դամբարան են իջեցնում Լենինի՝ ամբողջ աշխարհի բանվորների առաջնորդի, դիակը։ Ամեն տեղ կյանքը հինգ րոպե կանգ է առնում։*

*— Վաղվանից դուք էլ իմ շոֆերը չե՛ք,—կատաղած հայտարարեց հարուստը։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 110։ Կազմեցե՛ք հինգ պատմողական նախադասություններ։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 111։ Գրեցե՛ք փոքրիկ պատմվածք ձեր տեսած կինոյի կամ ներկայացման մասին։*

*Քանի՞ նախադասությունից է կազմված ձեր գրած պատմվածքը։*

## § 21. ՀԱՄԱԴԱՍ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
### Предложения с однородными поясняющими членами

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 112։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք միևնույն հարցին պատասխանող լրացումները։*

*Սովետական Միությունն աշխարհում ամենահզոր, ամենաերջանիկ, ամենաազատ երկիրն է։ ՍՍՌՄ-ը հարուստ է նավթով, քարածխով, երկաթով, պղնձով, ոսկով, արծաթով և այլ թանկագին հանքերով։*

**Միևնույն հարցին պատասխանող մի քանի լրացումները կոչվում են համադաս կամ բազմակի լրացումներ (однородные поясняющие слова):**

*Համադաս լրացումներն իրարից բաժանվում են ստորակետով (*запятой*)։*

*Համադաս լրացումներ ունեցող նախադասությունը կոչվում* է բազմակի լրացումներով նախադասություն:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 113։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք համադաս լրացումները։*

*Հե՜յ կանա՛չ ախպեր,*
*Հե՜յ ճանա՛չ ախպեր,*
*Արի՜ քեզ հետ բե՜ր արևի շողեր,*
*Բե՜ր անուշահոտ ծիլ, ծաղիկ ու խոտ,*
*Կարկաչուն վտակ, երկինք կապուտակ,*
*Ծատուտիկ հավքեր, զրնգան երգեր,*
*Գառների մայուն, խաղ, ուրախություն։*

(Հ. Թումանյան)

**Երբ համադաս (բազմակի) լրացումները «և» կամ «ու» բառով են միանում, դրանց միջև ստորակետ չի դրվում:**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 114։ Արտագրեցե՛ք և դրե՛ք բաց թողնված ստորակետները, բացատրեցե՛ք՝ ինչու է դրվում ամեն մի ստորակետը։*



*Մարիան հինգ է ստացել ռուսաց լեզվից հայոց լեզվից թվաբանությունից ֆիզիկայից բնագիտությունից և աշխարհագրությունից։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 115։ Կազմեցե՛ք բազմակի լրացումներով նախադասություններ։*

## § 22. ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ
### Сложное предложение

**Նախադասությունները լինում են պարզ և բարդ:**
**Երբ նախադասությունը արտահայտում է մի պարզ միտք, կոչվում է պարզ նախադասություն:**

*Պարզ նախադասությունն ունի մեկ ենթակա և մեկ ստորոգյալ։*

*Օրինակ՝*

Ջանասեր աշակերտը դասերը միշտ սովորում է:

**Երբ նախադասությունն արտահայտում է մի քանի պարզ մտքերից կազմված մի բարդ միտք, կոչվում է բարդ նախադասություն:**

*Օրինակ՝*

Լենինն անմահ մեզ նուրն անշեջ պարգևեց,
Մեր դեմ շողաց երջանկաբեր այգաբաց,
Ստալինը մեծ՝ կործանումից մեզ փրկեց
Եվ ավեց մեզ նոր, ազատ կյանք փառապանծ:

(Սարմեն. «Հայկական ՍՍՌ Պետական հիմնից»)

*Այս նախադասությունը կազմությամբ բարդ է, որովհետև արտահայտում է մի քանի պարզ մտքերից կազմված մի բարդ միտք։*

*Բարդ նախադասությունն ունենում է մեկից ավելի ենթականեր և ստորոգյալներ։*

*Բարդ նախադասությունը կազմող պարզ նախադասությունները միմյանցից անջատվում են ստորակետով։*

*Օրինակ՝*

Սովետական Բանակը կոչվում է խաղաղության բանակ, որով-

հետև նա պաշտպանում է խաղաղությունը պատերազմի հրձիգներից։

*Բարդ նախադասության մեջ մտնող նախադասությունները միմյանց հետ կապվում են* որ, որովհետև, թե, եթե, բայց, իսկ *բառերով, որոնցից առաջ դրվում է ստորակետ։*

*Հաճախ նախադասության մի ստորոգյալն ունենում է մեկից ավելի* համադաս *ենթականեր կամ մեկ ենթական ունենում է մեկից ավելի* համադաս *ստորոգյալներ։ Դրանք կոչվում են* բազմակի *ենթականեր և* բազմակի *ստորոգյալներ։*

*Երբ նախադասության մեջ կան* բազմակի *ենթականեր կամ* բազմակի *ստորոգյալներ, դրանք իրենց լրացումներով միմյանցից անջատվում են ստորակետով։*

*Օրինակ՝*

Ու ելան, թափված ոսկին թողեցին,
Հայոց աշխարհից փախան գնացին
Բադին, Կոզբադին, Սյուդին, Զարխադին։

(Հ. Թումանյան «Սասունցի Դավիթ»)

*Միայն «և» կամ «ու» բառով միացած բազմակի անդամները (ենթակաները, ստորոգյալները և լրացումները) չեն անջատվում ստորակետով.*

*Օրինակ՝*

Լենան և Կոստյան դպրոց գնացին։
Լենան ամեն օր կարդում է ու գրում։
Կոստյան ունի թուղթ ու մատիտ։

*Եթե բազմակի անդամներից առաջ կրկնվում է* և *կամ* ու *բառը, ապա դա շեշտ է ստանում, իսկ բազմակի անդամները անջատվում են ստորակետով։*

*Օրինակ՝*

Առավոտից ես շրջում եմ և՛ դաշտ, և՛ սար, և՛ այգի։
Դպրոց գնացին և՛ Կոլյան, և՛ Լենան։
Կոլյան և՛ կարդում է, և՛ գրում է։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 116։ Արտագրեցե՛ք և դրե՛ք բաց թողնված ստորակետները, բացատրեցե՛ք, թե ինչո՞ւ եք դնում։*



## ԱՐԵՎԸ

*Վաղ առավոտյան տալիս է բարև*
*Կեսօրին կանգնում մեր գլխի վերև*
*Իրիկնապահին մեզնից հեռանում*
*Բարձր սարերի հետևն է մտնում*
*Բերում է իր հետ ցերեկ ու գիշեր*
*Նա ամենալավ ժամացույցն է մեր։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 117։ Գտե՛ք նախադասությունների բազմակի անդամները։*

## ԲՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԸ

*Անտառն իր կանաչով, թփերով, գեղեցիկ լորիներով, սիրուն կեչիներով, հսկա կաղնիներով բնության զարդն է։*

*Գետերն ու գետակները, առուներն ու աղբյուրները ամեն տեղ շրջապատվում են անտառներով, ծառերով, բույսերով։*

*Ջուրը խոնավություն է տալիս անտառին, իսկ անտառը պահպանում է ջրերը։ Ծառերը պաշտպանում են գետինն արևի կիզիչ ճառագայթներից, և նրանց ստվերի տակ միշտ հով է ու խոնավ։*

*Անտառում, մեծ ծառերի կողքին, աճում են մատաղ ծառեր։ Ժամանակի ընթացքում մատաղ ծառերը աճում են, բարձրանում, հաստանում ու լցնում անտառի դատարկ տարածությունները։*

*Անտառը պատսպարան ու սնունդ է տալիս կենդանիներին, թռչուններին։*

*Որքան դուրեկան է անտառը ամառվա տաք օրերին, որքան մաքուր ու թարմ է օդը, որքան հաճելի է նրա*



Հայոց լեզու 5—7 դաս.—4

խոր լռությունը, իսկ զեփյուռից շարժվող տերևների սոսափյունը կարծես մի երաժշտություն է։

Բայց ահա սկսվեց իսկական համերգը։ Գույնզգույն մեծ ու փոքր թռչունները իրենց ճռվողյունով, դայլայլիկներով, շվշվոցով կենդանացրին անտառի լռությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 118։ Ուշադիր կարդալ, ընտրել նախ պարզ, ապա՝ բարդ նախադասությունները։ Բացատրել կետադրությունը։ Գտնել յուրաքանչյուր պարզ նախադասության ենթական, ստորոգյալը և լրացումները։

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Լուսինը փայլում էր, ամեն ինչ խաղաղ էր։ Միմիայն ձիու դոփյունն էր լսվում գիշերային լռության մեջ։ Երկար գնում էի, չհանդիպելով բնակության նշույլների։ Վերջապես տեսա առանձնացած մի խրճիթ։ Սկսեցի բախել դուռը։ Դուրս եկավ տերը։ Ես ջուր խնդրեցի, նախ՝ ռուսերեն, ապա թուրքերեն։

Գիշերն անցկացնելով կոզակների պոստում, ես լուսաբացին շարունակեցի ճանապարհս։ Ճանապարհն անցնում էր սարերով ու անտառներով։

Ես սկսեցի բարձրանալ Բզովդալը, այն սարը, որ բաժանում է Վրաստանը հին Հայաստանից։ Ծառերով հովանավորված լայն ճանապարհը ոլորապտույտ անցնում է սարի մոտով։ Բզովդալի գագաթին ես անցա մի փոքր կիրճով, որը, կարծեմ, Գայլի դուռ է կոչվում և արդեն գտնվում էի Վրաստանի բնական սահմանի վրա։ Իմ առաջ բացվեցին նոր սարեր, նոր հորիզոն, ոտքերիս տակ փռված էին բուսավետ կանաչ արտեր։ Ես մի անգամ էլ նայեցի արևից խանձված Վրաստանի վրա և սկսեցի վայր իջնել սարի թեթև զառիվայր լանջով դեպի Հայաստանի թարմ դաշտավայրերը։ Աննկարագրելի



հաճույքով ես նկատեցի, որ տոթը հանկարծ մեղմացավ, կլիման արդեն ուրիշ էր։

Ես գնում էի մենակ ծաղկափթիթ անապատով, որ հեռվից շրջապատված է սարերով։

Ես տեսա ճանապարհի մի կողմում քարակույտեր, որոնք նման էին հյուղերի, գնացի նրանց մոտ։ Պարզվեց, որ իսկապես ես եկել էի մի հայկական գյուղ։

Մի քանի կին, խայտաբղետ ցնցոտիներ հագներին, նստած էին գետնափոր խրճիթի տափակ կտուրին։ Ես մի կերպ բացատրվեցի։ Նրանցից մեկն իջավ խրճիթը և բերեց ինձ համար պանիր ու կաթ։ Մի քանի րոպե հանգստանալով՝ ես առաջ գնացի և դիմացս՝ գետի բարձր ափին, տեսա Գյառգյառ բերդը։

Ես գնում էի բերրի արտերի և ծաղկափթիթ մարգագետինների միջով։ Հունձը ծորում էր, սպասելով մանգաղի։ Ես հիանում էի այս սքանչելի հողով, որի բերրիությունը արևելքում առած է դարձել։

(Ըստ. Ա. Ս. Պուշկինի)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 119։ Ընթերցանության գրքից գտնել նախադասություններ, որոնց մասերը միմյանց կապված լինեն թե, եթե, բայց, իսկ, որովհետև բառերով։ Ի՞նչ կետ է դրվում այս բառերից առաջ։

# ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ—ПУНКТУАЦИЯ

## § 23. ՏՐՈՀՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ—знаки препинания

*Հայերենի տրոհության նշաններն են՝ վերջակետ* [(։) точка], *միջակետ* [(.) соответствует русскому двоеточию или точке с запятой], *ստորակետ* [(,) запятая] *և բութ* [(՝) соответствует русскому двоеточию, иногда—тире]։

*Հայերենի տրոհության նշանների գործածությունը հիմնականում ռուսերենի նման է։ Տարբերություն է ներկայացնում բութը (՝), որ դրվում է մեկ բառը մյուսից անջատելու համար կամ բաց թողնված բառերի տեղը։*

*Օրինակ՝*

Գովասանագիր ստացավ Սուրիկը՝ դասարանի գերազանցիկը։ Ցողիկը գնաց դպրոց, իսկ Սուրիկը՝ տուն։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 120։ Կարդացե՛ք և պատմեցե՛ք, ուշադրություն դարձրե՛ք տրոհության նշանների գործածության վրա։*

## ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՑԱՐԻՑԻՆՈՒՄ

*Ցարիցինը շրջապատված էր թշնամիներով։ Կարմիրբանակայինները կռվում էին հերոսաբար։ Նրանցից ամեն մեկի մեջ կար միայն մի ցանկություն՝ Ցարիցինը չհանձնել թշնամուն։*

*Եթե Ցարիցինը հանձնվեր թշնամուն, այդ նշանակում էր ճանապարհը դեպի Մոսկվա փակել և ժողովրդին թողնել առանց կենսամթերքի։*



*Կարմիրները, հավաքելով իրենց ամբողջ ուժերը, պաշտպանեցին Ցարիցինը սպիտակներից, բայց դժվար, սարսափելի դժվար էր, որովհետև թշնամու բանակը իր թվով տասն անգամ շատ էր կարմիրներից։*

*Բայց ինչպիսի՞ զորավար էր պետք, որը կարողանար հաղթել թվով այդքան գերազանց թշնամուն։*

*Այդպիսի զորավար ու այդպիսի ղեկավար գտնվեց։ Լենինը գիտեր, թե ո՛վ կարող է փրկել Ցարիցինը։ Նա այնտեղ ուղարկեց ընկեր Ստալինին։*

*Ստալինը կանգնեց մեր զորքերի գլուխը, իսկ նրա օգնականները եղան Վորոշիլովն ու Բուդյոննին։*

*Ստալինը և Վորոշիլովն անմիջապես անցան կռվի դաշտը։ Երբ մարտիկները տեսան Ստալինին և Վորոշիլովին, նրանց ուժը կրկնապատկվեց, նրանք ուռա՜ կանչեցին։ Մոռացան քաղցն ու հոգնածությունը։ Ամեն մեկը պատրաստ էր կռվելու թշնամու տասը զինվորի դեմ։*

*Շուտով մեր բանակը թշնամուն նեղեց, փախցրեց ու ջախջախեց. Ցարիցինը փրկված էր։*

*Այս մեծ հաղթանակից հետո քաղաքի անունը փոխվեց ի պատիվ այն մարդու, որը փրկել էր այն։*

*Ցարիցինը կոչվեց Ստալինգրադ։*

## § 24. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ-знаки выразительности

*Առոգանության նշաններն են՝ հարցական (՞), շեշտ (՛), երկարացման նշան (՜)։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 121։ Ո՞ր բառն է հարց արտահայտում։*

*Շողիկը հարցրեց Շուշիկին.*

*— Խնձորն ո՞վ ուտի։*

*Շուշիկն ասաց՝ ես։*

*Շողիկը նորից հարցրեց Շուշիկին.*

*— Ջուրն ո՞վ բերի։*

*Շուշիկն ասաց՝ ես։*

**Հարցական նշանը [вопросительный знак (՞)] գրվում է հարց արտահայտող բառի վերջին ձայնավորի վրա:**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 122։ Կարդացե՛ք, գտե՛ք, թե ո՞րն է հարցնող բառը և ի՞նչ նշան ունի իր վրա։ Ուրիշ ի՞նչ նշաններ կան։*

## Օ Դ Ա Չ Ո Ւ

*— Ա՛յ օդաչու,*
*Դու քա՛ջ թռչուն,*
*Խիզա՛խ բազե, ու՞ր ես թռչում։*
*— Ո՛վ հարցասեր, խելո՛ք մանուկ,*
*Կապույտ երկինքն է ինձ կանչում։*

*— Ա՛յ օդաչու,*
*Ինչպես թռչուն,*
*Զինջ երկնքով ու՞ր ես թռչում։*
*— Սլանում եմ արագ ու վեր,*
*Միշտ վե՛ր ու վե՛ր և հեռուներ։*

*— Ա՛յ օդաչու,*
*Անվա՛խ թռչուն,*
*Ի՞նչ կա հեռվում, ու՞ր ես թռչում։*
*— Գնամ, հսկեմ սահմանները,*
*Զինջ ու կապույտ մեր ծովերը։*

*— Ա՛յ օդաչու,*
*Հերո՛ս թռչուն,*
*Իսկ առանց ինձ ո՞ւր ես թռչում։*
*—Դու կորիճ ես, բայց դեռ փոքր ես,*
*Կմեծանաս ու կթռչես։*

(Ա. Վշտունի)



*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 123։ Հետևյալ հարցերին պատասխանեցե՛ք լրիվ նախադասություններով։*

*Ի՞նչ է անունդ*__________________

*Ի՞նչ է ազգանունդ*__________________

*Ո՞ր գյուղից կամ քաղաքից ես*__________________

*Քանի՞ տարեկան ես*__________________

*Ո՞ր առարկայից հինգ կամ չորս գնահատական ունես*__________________

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 124։ Տրված պատասխանների համար գրեցե՛ք լրիվ հարցեր։*
*Սովետական Բանակն է պաշտպանում մեր երկիրը։*
*Ուզում եմ լինել օդաչու։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 125։ Գտե՛ք, ո՞ր բառերն են շեշտված արտասանվում. ի՞նչ նշան կա նրանց վրա։*

*Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,*
*Կարդա՛, գրի՛ր սարին բոլոր։*
*Կարդացողի խելքն է կտրուկ,*
*Միտքը պայծառ ու լուսավոր։*

**Շեշտ [՛] (знак ударения или восклицания) գրվում է հրաման, դիմում կամ պահանջ արտահայտող բառերի վերջին ձայնավորի վրա:**
**Շեշտ ունեցող բառերը ուժեղ են արտասանվում:**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 126։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք շեշտ ունեցող բառերը։*

*Արևը.—Սիրո՛ւն աղջիկ, ի՞նչ գրկեմ քեզ։*
*Աղջիկը.—Ես ծաղիկներ կուզեմ պես-պես։*
*Արևը.—Ա՛յ աղբյուրներ, ա՛յ վտակներ,*
*Սարի տակին քնած եք դեռ...*
*Դո՛ւրս եկեք, դո՛ւրս,*

Շուտ դեպի լույս,
Նոր աշխուժով
Ու նոր ուժով
Կարկաչեցե՛ք
Ու կանչեցե՛ք
Հողում քնած սիրուններին՝
Ծաղիկներին ու ծիլերին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 127։ Գտե՛ք այն բառերը, որոնք երկար են արտասանվում. ինչ նշան կա նրանց վրա։

Ծաղիկները.— Բարե՛, բարե՛, կարմի՛ր արև,
Ա՜խ, ինչ լավ է դեպի վերև.
Ազա՜տ, լո՜ւյս, տա՜ք,
Կապո՜ւյտ, հստա՜կ...
Արևը.—Սիրո՞ւմ եք ինձ...
Ծաղիկները.—Ա՜խ, այնպե՜ս եմ սիրում, այնպե՜ս,
Էլ առանց քեզ չեմ ապրի ես...
(Հ. Թումանյան)

**Բացականչական նշան [՜] (знак восклицания) դրվում է բառի երկար արտասանվող վանկի վրա։**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 128։ Արտագրեցե՛ք խոսակցությունը և ընդգծեցե՛ք բացականչական նշան ունեցող բառերը։ Առոգանության ուրիշ ի՞նչ նշաններ կան։

## Ա Ր Ձ Ա Գ Ա Ն Ք

Փոքրիկ Արտաշեսը շվշվացնելով գնում էր ձորով՝ իրենց հորթը փնտրելու։

Նրան թվաց, որ մի ուրիշն էլ է շվշվացնում։ Հենց իմացավ եղբայրն է, կանգնեց, ձայն տվեց.

— Վահա՜ն, դո՞ւ ես։

— Ե՜ս...



— Մեր հորթը ո՞ւր գնաց, տեսա՞ր։

— Սա՜ր...

— Հանա՞ք ես անում, ինչ է։

— Չէ՜։

—Վա՜յ, էդ հո գելը կուտի։

— Ուտի՜...

Արտաշեսը լալով վազեց տուն, տեսավ՝ հորթն էլ է տանը, Վահանն էլ։

**Հարցական նշանը, շեշտը և բացականչական նշանը (՞՛՜) կոչվում են առոգանության նշաններ (знаки выразительности)։**

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 129։ Կարդացե՛ք և ցույց տվեք, թե ո՞ր բառն ի՞նչ նշան ունի, ինչպե՞ս պետք է կարդալ։

## Ե՜Ս

(Առակ)

Ագռավը բռնեց մի խեցգետին և նստեց ծառին։

Խեցգետինն ուզեց ազատվել նրա կտցից ու ասաց նրան.

— Ոսկեհատիկ, ագռա՜վ քույրիկ, ո՞վ է մեզնից կեղտոտը.

Ագռավը սեղմեց կտուցը և կռռաց.

— Դո՜ւ...

— Ոսկեհատիկ, ագռա՜վ քույրիկ, ո՞վ է մեզնից նախշունը.

Ագռավը բացեց կտուցն ու կռռաց.

— Ե՜ս...

Կտուցը բաց անելուն պես խեցգետինը կտցից ընկավ ջուրը և ազատվեց։

## § 25. ՉԱԿԵՐՏԻ (кавычка) ԵՎ ԱՆՋԱՏՄԱՆ ԳԾԻ (тире) ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 130։ Արտագրեցե՛ք և ցույց տվեք, թե ո՞ր նախադասություններն են առնված չակերտների մեջ։ Ի՞նչ կետ է դրված դրանցից առաջ։*

### ԱՆՏԵՂԻ ՀԱՐՑ

*Մի օր ճանապարհին հանդիպեցին երկու ծանոթներ՝ Պողոսն ու Կարոն։ Կարոն նայեց Պողոսի կողովի մեջը և հարցրեց. «Ի՞նչ ես տանում քաղաք»։ Պողոսը պատասխանեց. «Դարման»։ Կարոն զարմանքով բացականչեց. «Այդ ի՜նչ ես ասում։ Չէ՞ որ կողովումդ ձու է»։ Պողոսը հանդարտ պատասխանեց. «Թե որ տեսար, էլ ինչո՞ւ հարցրիր»։*

**Անփոփոխ մեջ բերած ուրիշի խոսքը կոչվում է ուղղակի խոսք (прямая речь), առնվում է չակերտների մեջ և սկսվում է մեծատառով։ Ուրիշի ուղղակի խոսքից առաջ դրվում է միջակետ։**

*Չակերտների մեջ են առնվում նաև գրքերի, ստեղծագործությունների, կոլտնտեսությունների, հիմնարկների և այլ անունները։*

Օրինակ՝ *Արտաշեսն արտասանեց «Ստալին» բանաստեղծությունը։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 131։ Դրե՛ք բաց թողնված չակերտներն ու միջակետերը։*

### ԾՆՈՂԱՍԵՐ ԱՂՋԻԿԸ

*Վարսիկի մայրիկը հիվանդ էր։ Բժիշկը նրա համար դառը դեղ էր գրել։ Տեսնելով, որ մայրիկը դժվարությամբ է խմում դեղը, Վարսիկն ասաց Մայրի՛կ, սիրելի մայրի՛կ, թող քո փոխարեն ես խմեմ դեղը, միայն թե դու շուտ լավացիր։*



*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 132։ Գտե՛ք, թե ինչի՞ն են փոխարինում տողասկզբի գծերը։*

*Վանյան հարցրեց Սաշային.*

*— Ի՞նչ գրքեր ես կարդացել։*

*Սաշան պատասխանեց.*

*— Պուշկինի «Ոսկե ձկնիկը», Թումանյանի «Շունն ու կատուն» և էլի ուրիշ գրքեր։*

*Վանյան ուզեց ստուգել, թե ճի՞շտ է ասում Սաշան և հարցրեց.*

*— Ո՞ւմ ցանցն ընկավ ոսկե ձկնիկը։*

*— Ծեր ձկնորսի, — վստահ պատասխանեց Սաշան։*

**Երբ ուրիշի ուղղակի խոսքն սկսվում է նոր տողից, չակերտների փոխարեն գծեր են դրվում։**

**Դրանք կոչվում են ա ն ջ ա տ մ ա ն գ ծ ե ր (тире)։**

*Եթե ուղղակի խոսքից հետո ընկած է հեղինակի խոսքը, վերջինս անջատվում է ստորակետով և գծով։*

*Օրինակ՝*

— Ես կսովորեմ, — ասաց Սուրիկը, — ավելի լավ կսովորեմ։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 133։ Հետևյալ հատվածը ուշադիր կարդացե՛ք և արտագրեցեք ուրիշի խոսք ունեցող նախադասությունները, չակերտներով տրված ուրիշի խոսքերը գրեցե՛ք նոր տողից և բաժանեցե՛ք անջատման գծերով։*

### ԱՅԴ ԱՆՈՒՆԸ ՋՆՋԵԼ ՉԻ՛ ԼԻՆԻ
(Իտալական բանտում)

*Մեկ անգամ ինձ ձերբակալեցին և ուղարկեցին բանտ։ Շատերի հետ բանտարկված էր նաև մեկ զինվոր։ Գիշերը նա շատ անհանգիստ քնեց։ Շատ էր դեսուդեն ընկնում և սեղանն ու աթոռը շարժում։ Լուսաբացին ես նրան հարցրի. «Ինչո՞ւ էիր գիշերն անհանգիստ»։*

*Նա չպատասխանեց, մեղմ ժպիտով նայեց ինձ ու գլխով ցույց տվեց պատը։*

Պատի վրա խոշոր տառերով գրված էր․ «Կեցցե Լենինը»։ «Ո՞վ է գրել», – հարցրի նրան։—«Ե՛ս»,—հպարտությամբ պատասխանեց նա։

Շուտով զարթնեցին և մյուս բնակիչները։ Բոլորը կարդացին զինվորի գրածը։ Ներքին մի լուռ հրճվանքով նրանք արտահայտում էին իրենց խոր հարգանքը դեպի այդ անունը։ Քիչ հետո ներս մտավ բանտի վերակացուն։ Նա նույնպես կարդաց պատի վրա գրվածը։ «Ո՞վ է գրել»,—զայրույթով հարցրեց նա։ Բոլորը լուռ էին։

Վերակացուն բերել տվեց մի ներկարար, որը ներկով ծածկեց գրված բառերը։

Երբ չորացավ ներկը, նրա տակից նույնությամբ կարդացվում էր․ «Կեցցե Լենինը»։ Կատաղած վերակացուն կրկին անգամ ներկով ծածկել տվեց գրվածը։

Սակայն ներկը չորանալուց հետո նորից պարզ կարդացվում էր․ «Կեցցե Լենինը»։

Կատաղությունից իրեն կորցրած վերակացուն այս անգամ քարտաշ բերել տվեց և հրամայեց քերել գրվածը։

Քարտաշը քերեց պատին գրված տառերը։ Տառերը փոս ընկան և չնայած գույնը գցեցին, բայց այս անգամ ավելի պարզ էր կարդացվում․ «Կեցցե Լենինը»։ Զինվորը ժպտաց և հրճվանքով բացագանչեց․ «Այդ անունը ջնջել չի՛ լինի»։

**Երբ ուղղակի խոսքը կարճ է, անջատվում է բութով եվ չակերտների մեջ չի առնվում, մեծատառով էլ չի սկսվում։**

*Օրինակ՝*

Մանյային ասացին՝ դաս սովորի՛ր, ասաց՝ սովորեցի։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 134։ Բացատրեցե՛ք կետադրությունը։



## ԳԼՈՒԽԸ

Բերանն ասաց․ «Ես ամեն ինչ կուտեմ, կխմեմ, ոչ մեկին չեմ հարցնի»։

Ձեռքն ասաց․ «Ես ինչ ուզեմ կշինեմ, կքանդեմ»։

Լեզուն ասաց․ «Ես ինչ ուզեմ՝ այն էլ կանեմ»։

Ոտքն ասաց․ «Ես ուր ուզեմ՝ այնտեղ էլ կգնամ»։

Գլուխը այս բոլորը լսեց և ծիծաղեց։

Բերանը, ձեռքը, լեզուն ու ոտքը հարցրին․

— Ինչո՞ւ ես ծիծաղում։

— Ապա ինչպե՞ս չծիծաղեմ, — պատասխանեց գլուխը վերևից, — ինչ էլ անեք, առաջ ինձ պետք է հարցնեք։

# ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## § 26. ՁԱՅՆԱՎՈՐ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ—Гласные звуки

*Հայերենի ձայնավոր հնչյուններն են՝ ա, է, ը, ի, օ, ու, ընդամենը՝ 6:*

*Է ձայնավորը բառամիջում գրվում է ե տառով:*

*Օրինակ՝* բերել, տեսնել, վերցնել:

*Օ ձայնավորը բառամիջում գրվում է ո տառով:*

*Օրինակ՝* բոլոր, նոր, ձոր:

*Ե գիրը բառասկզբին կարդացվում է* յէ:

*Օրինակ՝* ես, երկու, երեք:

*Ո գիրը բառասկզբին կարդացվում է* վօ:

*Օրինակ՝* ոչ, ոսկի, որպես:

*Այսպիսով, հայերենի 6 ձայնավոր հնչյունները գրվում են 8 տառով՝ ա, ե, է, ը, ի, ո, օ, ու:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 135: Ցո՛ւյց տվեք, թե ինչպես են գրվում և արտասանվում ձայնավորները:*

## § 27. Ը ՁԱՅՆԱՎՈՐԸ

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 136: Որոշեցե՛ք, ո՞ր հնչյունից առաջ լսվող «ը» հնչյունը չի գրվում:*

*Ընկեր Ստեփանը վերադարձավ Ստեփանավանից: Ժամը ութ և կեսին սկսվում է մեր դասը: Զգո՛ւյշ եղիր արտագրելիս, ստորակետ բաց չթողնես: Ստուգման ժամանակ հինգ ստացա: Դաշտում սփռված են սքանչելի ծաղիկներ: Մի՛ շտապիր, սպասի՛ր մի քիչ՝ զբոսանքի գնանք:*



**Բառասկզբի «ը» հնչյունը չի գրվում ստ, սպ, սփ, սթ, սք, սկ, զգ, զբ, շտ երկուական բաղաձայններից առաջ, թեև լսվում է:**
**Բացառություն է ը ս տ բառը:**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 137: Ո՞ր բաղաձայններից առաջ լսվում է «ը», բայց չի գրվում: Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք:*

*Սկիզբ, սկյուռ, ստվեր, ընկեր, ստանալ ընտրել, ստացական, ընդունակ, ստորագրություն, սպասել, սպիտակ, սքանչելի, ստուգել, ընթերցարան, սպառել, ըմբոստ:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 138: Ո՞ր բաղաձայններից առաջ է լսվում «ը», բայց չի գրվում: Ընդգծեցե՛ք:*

*Զբաղվել, զբոսնել, զտել, զգալ, զգաստ, զգոն, զվարթ, զգեստ, զգույշ, զրույց, շտապ, շտեմարան, զրահ:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 139: Արտագրեցե՛ք և ավելացրե՛ք բաց թողնված տառերը:*

*Որսորդը մի գայլ -պանեց: -պիտակ սավանը ծածկել է դաշտ ու ձոր: -տեփանն ու -պանդարը -բոսանքի են -տապում: -գույշ, -գեստդ չպատառոտես: -կսվել են մեր -տուգումները:*

*(սպանեց, սպիտակ, Ստեփան, Սպանդար, զբոսանք, շտապել, զգույշ, զգեստ, սկսվել, ստուգում):*

**Տողադարձի ժամանակ բառասկզբին լսվող «ը»-ն գրվում է. օրինակ՝** *ըս-պասել, ըզ-բոսնել:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 140: Գտե՛ք սպ, ստ, սկ, սթ, զբ, զգ, շտ բաղաձայններով սկսվող բառեր և տողադարձ արեք:*

*Օրինակ՝*

ըշ-տեմարան, ըս-պիտակ:

## § 28. Յ ՁԱՅՆԱԿԱՊԸ—звукосвязь

**Երբ «ա» և «ո» ձայնավորներին հաջորդում է մի այլ ձայնավոր, դրանց միջև գրվում է «յ», երբ լսվում է. օրինակ՝ հայելի, Համոյի:**
**Այդ «յ»-ն կոչվում է ձայնակապ (звукосвязь):**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 141: Ստուգեցե՛ք, ո՞ր ձայնավորներն է կապում «յ»-ն.*

Նայի՛ր, Կարոյի պայուսակը Միքայելի նստարանի վրա է։ Հայելին սեղանի վրա է։ Նոյեմբերն աշնանային ամիս է։

«Յ» ձայնակապը, հաջորդ ձայնավորին միանալով, վանկ է կազմում: Օրինակ՝ տը-ղա-յի, Ա-րա-յի:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 142։ Վանկերի բաժանեցե՛ք հետևյալ բառերը։*

*Մայիս, Արամայիս, կայարան, Մարոյի հայելին, Սաքոյի պայուսակը, նոյեմբեր ամիսը։*

**է, ե, ի, ու հնչյունների և սրանց հաջորդող ձայնավորների միջև «յ» ձայնակապը չի գրվում:**

*Օրինակ՝*

Մամբրեի, լիառատ, կենգուրուի:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 143։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք* իա, իե, իո, իու, իի *երկձայնավորները։*

*Մոսկվան Սովետական Միության մայրաքաղաքն է։ Գաբրիելը և Դանիելը միասին են պարապում։ Արամը և Վիկտորյան էքսկուրսիա գնացին։ Օֆելյան մեր ընկերն է։ Վաչիկը գերազանցիկ է։ Դաս պատասխանողը ես էի։ Նունեի քույրը Աննան է։ Գնացքը մոտեցավ Թբիլիսիին։*

## ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### § 29. Օ և Ո

*«Օ» լսելիս բառասկզբին գրվում է «օ», իսկ բառամիջում և վերջում գրվում է «ո» և կարդացվում է «օ»։*

*Օրինակ՝*

օր, օգուտ, օգնել, բոլոր, ձոր, Մարո, Կարո *և այլն։*

*«Ով» և «ովքեր» բառերը, թեև սկսվում են «ո» տառով, բայց կարդացվում են «օ»։*

*«Վո» լսելիս բառասկզբին գրվում է «ո» և կարդացվում է «վո»։*

*Օրինակ՝* որս, որտորդ, որպես *և այլն։*

*Օտարազգի և ռուսերեն բառերը, որոնք սկսվում են «վո»* (во) *հնչյունով, այդպես էլ գրվում են։*



*Օրինակ՝*

վոլտ, Վոլգա *և այլն։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 144։ Կարդացե՛ք բառաշարքը և ավելացրե՛ք նոր բառեր.*

| | | |
|---|---|---|
| *ոզնի* | *ոչ* | *օազիս* |
| *ոխ* | *ոչ ոք* | *օդ* |
| *ողբալի* | *ոսկի* | *օգոստոս* |
| *ողնաշար* | *որոշ* | *օղ* |
| *ողջ* | *ոտ* | *օձ* |
| *ողջույն* | *որբ* | *օրինակ* |

### § 30. Է և Ե

*«Է» լսելիս գրվում է բառասկզբին «է», իսկ բառամիջում և վերջում՝ «ե» և կարդացվում է «է»։*

*Օրինակ՝*

էջ, էլի, էքսկուրսիա, գեղեցիկ, քարե *և այլն։*

*Բառասկզբին «յե» լսելիս գրվում է «ե» և կարդացվում է «յե»։*

*Օրինակ՝*

Ես, երես, երեք *և այլն։*

*Հայերեն բառասկզբի «ե» գիրը արտասանությամբ նման է ռուսերեն բառասկզբի «е» գրին, իսկ «է» գիրը ռուսերեն «э» գրին։*

*Օրինակ՝*

Евгения—*Եվգենյա*, Эдик—*Էդիկ։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 145. Կարդացե՛ք, արտագրեցե՛ք և ավելացրե՛ք նոր բառեր.*

| | | |
|---|---|---|
| *էլեկտրական* | *եղ* | *երգ* |
| *էքսպեդիցիա* | *եղակի* | *երգիչ* |
| *էգուց* | *եթե* | *երգչուհի* |
| *էլի* | *երբ* | *երկաթ* |

## § 31. ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Օժանդակ բայի ներկայի 5 ձևերը՝* եմ, ես, ենք, եք, են *սկսվում են «ե» գրով, միայն մեկը՝ «է» գրով։*

*Օրինակ՝*

| | |
|---|---|
| ես աշակերտ եմ | մենք աշակերտ ենք |
| դու աշակերտ ես | դուք աշակերտ եք |
| նա աշակերտ է | նրանք աշակերտ են |

*Օժանդակ բայի անցյալի ձևերը սկսվում են «է» գրով՝ էի, էիր, էր, էինք, էիք, էին։*

*Օրինակ՝*

| | |
|---|---|
| ես տանն էի | մենք տանն էինք |
| դու տանն էիր | դուք տանն էիք |
| նա տանն էր | նրանք տանն էին |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 146։ Գտե՛ք «ը» գրով սկսվող բառերը և արտագրեցե՛ք։*

*Գտե՛ք «ե» և «է» գրերով սկսվող բառերը և արտագրեցե՛ք։*
*Գտե՛ք «օ» և «ո» տառերով սկսվող բառերը և արտագրեցե՛ք։*
*Գտե՛ք և արտագրեցե՛ք* այ, ույ, յա, յու *երկհնչյուններ ունեցող բառերը։*
*Գտե՛ք պարզ ու բարդ նախադասությունները։*
*Որոշեցե՛ք բարդ նախադասությունների կետադրությունը։*

## ՇՈՒՐԱՅԻ ՄԱՍԻՆ

### 1

*Գյուղի ծայրին գտնվող մի մեծ, երկհարկանի տան մեջ ապրում էին փոքրիկ Շուրան և իր հիվանդ մայրը։*

*Մի գիշեր այդտեղ եկան ֆաշիստները և պահանջեցին, որ Շուրան ու իր մայրը սենյակից հեռանան։*



*Շատ խնդրեց Շուրան, որ իրենց թողնեն սենյակում, որ մայրիկը հիվանդ է, բայց ֆաշիստները չհամաձայնեցին։*

*Շուրան մորն առավ ու տարավ ցախատուն։*

*Շուտով ամբողջ տունը լցվեց թշնամու զինվորներով։ Վերին հարկում գնդացիրներ դրեցին և դարձրին հրակետ։*

*— Շո՛ւրա, մի՛ մնա այստեղ, փախի՛ր անտառը,— աղաչեց մայրիկը։*

*— Ո՛չ, մայրի՛կ,— պատասխանեց Շուրան,— ես քեզ մենակ չեմ թողնի։ Բացի դրանից, ես պիոներ եմ, Լենինի ու Ստալինի գործը պիտի պաշտպանեմ, թշնամուց վրեժ պիտի լուծեմ։*

### 2

*Լուսաբացին գյուղի արևելյան կողմից կրակոց լսվեց։ Շուրան իմացավ, որ Սովետական Բանակն է գալիս։*

*Ֆաշիստները վերին հարկից սկսեցին գնդացիր արձակել։ Գնդացիրների անդադար կրակը մի պահ կանգնեցրեց Սովետական Բանակի առաջ գալը։ Շուրան ուշադիր լսում էր կրակոցները և մտածում, թե ինչպես օգնի հարազատ զորքին։*

*Հանկարծ նրա աչքն ընկավ նավթով լի դույլի վրա։ Շտապով առավ դույլը, նավթը ցանեց դեպի վերին հարկը տանող սանդուղքի վրա ու վառեց։*

*Շուտով սանդուղքից ծուխ ու բոց բարձրացավ և վերին հարկը պատեց։ Ֆաշիստները թակարդ ընկած մկան պես մնացին երկրորդ հարկում. փախչելու ճանապարհ չկար։ Գնդացիրների կրակը դադարեց։*

3

Տուտով գյուղ մտավ Սովետական Բանակի զորամասը։ Թաքնված կանայք ու երեխաները դուրս եկան, դիմավորեցին զորամասին։

Զորամասը կանգ առավ Տուրայենց բակում։

Տուրան չասաց, թե ինքն է վառել շենքը։ Բայց երբ մարտիկները դույլ խնդրեցին, որ գնան ջրհորից ջուր բերեն, Տուրան ասաց.

— Այն փոքրիկ դույլով ջուր չբերեք. նավթ կար նրա մեջ...

## § 32. ԲԱՂԱՁԱՅՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

*Հայերենի բաղաձայն հնչյուններն են՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ։*

*Արտասանության որակով հայերենի բաղաձայն հնչյունները լինում են երեք կարգի.*

| ա) ձայնեղ (звонкий) | բ) խուլ (глухой) | գ) շնչեղ խուլ (глухой придыхательный) |
|---|---|---|
| բ | պ | փ |
| դ | տ | թ |
| ձ | ծ | ց |
| ջ | ճ | չ |
| գ | կ | ք |

*Արտասանության որակով ռուսերենում բաղաձայնները լինում են երկու կարգի՝ ձայնեղ և խուլ* (б-п, д-т, г-к)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 147։ *Գտե՛ք, գրեցե՛ք և արտասանեցե՛ք այնպիսի բառեր, որոնք սկսվում են ձայնեղ* ձ, ջ *հնչյուններով։*

*Օրինակ՝* ջնջել, ջարդել, ջերմ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 148։ *Գտե՛ք, գրեցե՛ք և արտասանեցե՛ք այնպիսի բառեր, որոնք սկսվում են խուլ* պ, կ, տ, ծ, ճ *հնչյուններով։*

*Օրինակ՝* պապ, կարաս, ծայր, ճուտ...



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 149։ *Գրեցե՛ք և արտասանեցե՛ք այնպիսի բառեր, որոնք սկսվում են շնչեղ խուլ* փ, ք, թ, ց, չ *հնչյուններով։*

*Օրինակ՝* փող, քար, թութ, ցուրտ, չոր...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 150։ *Գտե՛ք և գրեցե՛ք, բառեր, որոնք սկսվեն* ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ *հնչյուններով։*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 151։ *Գտե՛ք և գրեցե՛ք բառեր, որոնք սկսվում են միայն ձայնեղ հնչյուններով։*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 152։ *Գտեք բառեր, որոնք սկսվում են* ձ, ծ, ց, ջ, ճ, չ, փ, թ, ք, պ, տ, կ *հնչյուններով։ Արտասանեցե՛ք այդ բառերը և հնչյունները։*

*Հայերենի* բ, դ, ձ, ջ, գ *ձայնեղ բաղաձայնները բառամիջում և վերջում հաճախ արտասանվում են շնչեղ խուլ՝* փ, թ, ց, չ, ք, *թեև գրվում են ձայնեղի տառով. օրինակ՝ գրվում է* մարդ, *արտասանվում է* մարթ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 153։ *Գտե՛ք ձայնեղի տառով գրվող, բայց շնչեղ խուլ արտասանվող հնչյուն ունեցող բառեր։*

## § 33. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### Դ-Թ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 154։ *Արտագրեցե՛ք և սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է ձայնեղ «դ» և արտասանվում է շնչեղ խուլ «թ».*

| | | | | |
|---|---|---|---|---|
| առաջնորդ | վարդ | երդվել | ժողովուրդ | որդի |
| խնդրել | կարդալ | կոկորդ | օդ | որդ |
| երկրորդ | մարդ | հինգերորդ | խորհուրդ | օդաչու |
| երրորդ | Վարդան | վեցերորդ | ջարդել | |
| | արդեն | իններորդ | | |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 155։ *Նախորդ բառերը գրեցե՛ք անգիր։*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 156։ *Արտագրեցե՛ք։ Լրացրե՛ք բաց թողնված տառերը։*

Վար…անը երկրոր… դասարանում է։
Սեդան կար…ում է նոր գիրք։
Մայիսին բացվում է վար…ը։
Սովետական ժողովուր…ը երջանիկ է։

## Ձ-Ց

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 157։ Արտագրեցե՛ք և սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է ձայնեղ «ձ», արտասանվում է շնչեղ խուլ «ց»։

Արձակուրդ, բարձ, բարձր, դեղձ, բարձունք, դարձ, համարձակ, վարձ, օրավարձ, օձ, դարձյալ, փորձ, վերադարձ, որձ, դերձակ, արձան։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 158։ Արտագրեցե՛ք նախորդ բառերը այբբենական կարգով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 159։ Անգիր գրեցե՛ք նախորդ բառերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 160։ Արտագրեցե՛ք նախորդ բառացուցակի օգնությամբ. լրացրե՛ք բաց թողնված տառերը։

Բար…ր պահիր պիոներական պատիվը։
Վերադար…ին տեսա մի գեղեցիկ ար…ան։
Ար…ակուրդը վերջացավ։ Դեր…ակը կարում է։
Բար…ը փափուկ է։ Դեղ…ը համեղ միրգ է։

## Ջ-Չ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 161։ Արտագրեցե՛ք և սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է ձայնեղ «ջ», արտասանվում է շնչեղ խուլ «չ»։

| | | |
|---|---|---|
| վերջ | թրջել | վերջալույս |
| վերջին | աջ | վերջակետ |
| առողջ | մեջ | ողջ |
| ողջույն | իջնել | միջանցք |
| միջակ | առաջ | աղջիկ |
| արջ | | |
| մրջյուն | | |



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 162։ Գրեցե՛ք նախորդ բառերը այբբենական կարգով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 163։ Անգիր գրեցե՛ք նախորդ բառերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 164։ Արտագրեցե՛ք և նախորդ բառացուցակի օգնությամբ լրացրե՛ք բաց թողնված տառը։

Առա…ին դասարանում աղ…իկներ շատ կան։ Արձակուրդի վեր…ին օրը գրքերս ստուգեցի։ Դաշտում մր…յունի բույն տեսա։

## Բ-Փ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 165։ Արտագրեցե՛ք և սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է ձայնեղ «բ», արտասանվում է շնչեղ խուլ «փ»։

| | |
|---|---|
| երբ | խաբել |
| երեսսրբիչ | համբույր |
| որբ | սրբել |
| հարբել | Հակոբ |
| ուրբաթ | խաբեբա |
| երեքշաբթի | երկուշաբթի |
| Սերոբ | շաբաթ |
| հինգշաբթի | չորեքշաբթի |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 166։ Նախորդ բառերը գրեցե՛ք անգիր։

## Գ-Ք

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 167։ Արտագրեցե՛ք և անգիր սովորեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ արտասանվում է շնչեղ խուլ «ք», բայց գրվում է ձայնեղ «գ»։

Երգ, օգնել, անկարգ, կարգ, հագնել, օգուտ, երգիչ, կարագ, հոգնակի, ճրագ, թարգմանել, միրգ, շոգի, ծագել, շոգ, Սարգիս, հագուստ, անգամ, Գրիգոր, էգուց, ուրագ, մարգարիտ, պարգև։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 168։ Արտագրեցե՛ք վերևի բառերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 169։ Անգիր գրեցե՛ք վերևի բառերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 170: Արտագրեցե՛ք և նախորդ բառացուցակի օգնությամբ լրացրե՛ք բաց թողնված տառը:

Մի եր~ գիտեմ ես աննման,
Հզոր մուրճի թափի նման:
Գար~նուհին օ~նում է Մար~տիկին:
Ամառը շո~ է լինում, Սար~ը հո~նել է:
Հյուսնը ուրա~ով տաշում է:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 171: Արտագրեցե՛ք այն բառերը, որոնց մեջ գրված է ձայնեղ տառով, բայց արտասանվում է շնչեղ խուլ:

Գրեցե՛ք այն բառերը, որոնց մեջ արտասանվում է ը, բայց չի գրվում, և այն բառերը, որոնց մեջ արտասանվում և գրվում է ը:

—Ես եմ անտառի տերը, ես եմ ամենից ուժեղը,— պարծեցավ բրդոտ արջը անտառի գազաններին մոտ:

— Ո՛չ, մարդն է,— ճչաց աղվեսը:

— Ինչպե՞ս ես համարձակվում այդպես խոսել, աղվե՛ս, ես մարդուն թաթիս մի հարվածով ջարդուփշուր կանեմ,— ասաց արջը:

— Իսկ ես նրան պատառ-պատառ կանեմ,— վրա բերեց գայլը:

— Կտեսնենք,— փնթփնթաց աղվեսը:

— Ես կթռչեմ բարձր, շատ բարձր, ամպերին կհասնեմ,— ասաց թռչունը,— մարդը թև չունի, որ ինձ հասնի:

— Ես էլ կլողամ, ջրի խոր տեղը կիջնեմ,— ասաց ձուկը,— մարդը չի կարող ջրի մեջ ապրել, նա ինձ չի հասնի:

— Ես հողի մեջ հանգիստ կպառկեմ,— ասաց որդը,— մարդը ինձ չի տեսնի և ոչինչ չի կարող անել:

Մարդը դուրս եկավ հրացանն ուսին, մի ձեռքում թակարդ, մյուսում ուռկան. ինչ արավ մարդը:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 172: Գրավոր պատասխանեցե՛ք.

Ո՞վ է ամենից բարձր ու արագ թռչում և ինչո՞վ: Ո՞վ է ամենից հեռու խփում և ինչո՞վ: Ո՞վ է ամենից լավ լողում և ինչո՞վ: Ո՞վ է ամենից հեռու տեսնում և ինչո՞վ: Ո՞վ է ամենից հեռու խոսում և ինչո՞վ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 173: Գրեցե՛ք 5-ական բառ, որոնց մեջ գրվում է ձայնեղ բ, գ, ձ, ջ, դ, բայց կարդացվում է շնչեղ խուլ՝ փ, թ, ց, չ, ք:

# ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ
# СЛОВООБРАЗОВАНИЕ

## § 34. ԱՐՄԱՏ ԵՎ ԱԾԱՆՑ—корень и суффикс

Իմաստ ունեցող հնչյունների միացությունը կոչվում է **բառ** (слово),

*օրինակ՝*

սեղան, դուռ, աշակերտ *և այլն։*

*Բառերը կարող են կազմված լինել հետևյալ մասերից՝* արմատ (корень) *և* ածանց (суффикс), հիմք (основа) *և* վերջավորություն (окончание):

## § 35. ԱՐՄԱՏ—корень

**Բառի հիմնական իմաստ արտահայտող մասը կոչվում է արմատ.**

*օրինակ՝*

ազատություն *բառի արմատն է* ազատ:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 174։ Գտե՛ք հետևյալ բառերի արմատները և ցույց տվեք՝ ի՞նչ են նշանակում.*

*տանձենի, խնձորենի, դեղձենի, սալորենի, կեռասենի։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 175։ Գտե՛ք հետևյալ բառերի արմատները և ասացե՛ք՝ ի՞նչ են նշանակում.*

*ընկերություն, եղբայրություն, բարեկամություն, բանվորություն, գյուղացիություն, ընկերական, աշակերտական, բանվորական, գյուղացիական։*

**Այն բառերը, որոնք կազմված են միայն արմատներից, կոչվում են պարզ բառեր կամ արմատական բառեր—корневые слова.**

*օրինակ՝*

տուն, աշակերտ, մարդ, ջուր, հող *և այլն։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 176։ Գրեցե՛ք տասը արմատական կամ պարզ բառեր։*



## § 36. ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐ—производные слова

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 177։ Գրեցե՛ք՝ ինչպե՞ս ասել* սալորի ծառ, տանձի ծառ, խնձորի ծառ, *ի՞նչ մասնիկ ավելացրիք։*

**Բառի այն մասնիկը, որ դրվելով արմատի կամ բառի վրա, նոր բառ է կազմում, կոչվում է ածանց (словообразовательная частичка):**

*Օրինակ՝* -ենի *(դեղձ—դեղձենի)*, -եղ *(համ—համեղ)*:

*Ածանց ունեցող բառը կոչվում է* ածանցավոր բառ (производное слово). *օրինակ՝ ան-վախ, աշակերտ-ուհի և այլն։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 178։ Հետևյալ բառերի վրա ավելացրե՛ք* ություն *ածանցը. ի՞նչ ածանցավոր բառեր կստացվեն.*

*գյուղացի, բանվոր, ընկեր, բարձր, խելոք, աշակերտ, ազատ, վստահ, լավ։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 179։ Հետևյալ բառերի վրա ավելացրե՛ք* եղեն *ածանցը. ի՞նչ ածանցավոր բառեր կստացվեն.*

*հագուստ, կանաչ, կտոր, աման, փայտ, խմոր։*

*Ածանցը դրվում է բառի կամ արմատի սկզբից կամ վերջից։ Արմատի կամ բառի սկզբից դրվող ածանցը կոչվում է նախածանց* (приставка). *օրինակ՝* ան-*մահ։*

*Արմատի կամ բառի վերջից դրվող ածանցը կոչվում է վերջածանց* (суффикс). *օրինակ՝ ընկեր-*ություն.

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 180։ Հետևյալ բառերի սկզբից դրե՛ք* ան *նախածանցը. ի՞նչ բառեր կստացվեն.*

*խելք, տուն, հանգիստ, վախ, միտ։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 181։ Կազմեցե՛ք բառեր հետևյալ վերջածանցներով.* -ություն, -ական, -ային, -եղեն, -իկ, -ակ, -ավոր, -վոր, -իչ, ուհի, -ք:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 182։ Կազմեցե՛ք բառեր հետևյալ նախածանցներով,* ան-, արտ-, վեր-:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 183։ Արտագրեցե՛ք միմյանց հետևից այն բառերը, որոնք նույն նախածանցը կամ վերջածանցն ունեն։*

*Տիգրանուհի, տաշտակ, թռչնիկ, Հայկուհի, արտասանել, փոքրիկ, աշակերտուհի, Լուսիկ, աննման, նավակ, բանվորուհի, արտագրել, քույրիկ, անակ:*

## § 37. ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԸ

### Приставки армянского языка

*Հայերենը համեմատաբար աղքատ է նախածանցներով:*

*Հայերենում հազիվ 20 նախածանց լինի, որոնցից են 6 ժխտական նախածանցները* (отрицательные приставки).

**ան** (в значении: без-, не-), —*անտուն, անդասակարգ, անպետք և այլն:*

**ա** (в том же значении)—*ագեղ, ագետ և այլն:*

**դժ** (в том же значении)—*դժգոհ, դժբախտ և այլն:*

*Մնացածները քիչ են գործածական:*

*Մյուս նախածանցների և արմատի միջև դրվում է* **ա** *ձայնավորը.*

**արտ** (в значении: вне-, пере-, вы-, от-, с-)— *արտապլանային, արտագրել, արտատպել և այլն:*

**համ** (в значении: равенства, тождества)— *համազոր, համագյուղացի և այլն:*

**համ** (в значении: все-, обще-)— *համամիութենական, համամարդկային և այլն:*

**հակ** (в значении: против-, анти)— *հակադրություն, հակասություն և այլն:*

**ներ** (в значении: в-, внутрь-)—*ներգրավել, ներպարտիական և այլն:*

**վեր** (в значении: воз, вос-, пере-, раз-) — *վերականգնել, վերամշակել և այլն:*

## § 38. ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ—суффиксы

*Հայերենը հարուստ է վերջածանցներով, ունի ավելի քան 100 վերջածանց.* օրինակ՝

**-ոց** *(դպրոց)*, **-ային** *(բանակային)*, **-եղ** *(համեղ)*, **-ություն** *(միություն)*, **-ենի** *(մայրենի)*, **-կոտ** *(վախկոտ)*, **-որդ** *(ճամփորդ)*, **-ուհի** *(ընկերուհի)*, **-ակ** *(նավակ)*, **-իկ** *(փոքրիկ) և այլն:*



*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 184: Արտագրեցե՛ք մի սյունակում ածանցավոր բառերը, մյուսում՝ նույն բառերի արմատները:*

*Դաշտային, աշակերտական, աշակերտություն, ընկերուհի, ուսուցիչ, գրիչ, սրբիչ, դարբնոց, մատնոց, անվերջ, ագեղ, դժբախտ, դժգոհ, վերադարձնել, վերահաստատել, ներդնել, ներշնչել, հակասել, համաժողովրդական, արտահայտել, արտագրել, շնիկ, անտուն, անակ, քույրիկ, Հրաչիկ, որսորդ, հայրենի, յուղոտ, խնձորենի:*

*Օրինակ՝* դաշտային—դաշտ:

## § 39. ԲԱՐԴ ԲԱՌԵՐ—сложные слова

**Մեկից ավելի արմատից բաղկացած բառերը կոչվում են բ ա ր դ  բ ա ռ ե ր:**

*Օրինակ՝*

մեծատառ *(բաղկացած է* մեծ *և* տառ *բառերից)*,

1. Բարդ բառերի մասերը կապվում են միմյանց «ա» հոդակապով (соединительный гласный звук). *օրինակ՝ սեղան-ա-տուն:*

*Լինում են հաճախ անհոդակապ բարդ բառեր.* օրինակ՝ *երեսսրբիչ, քամնեկ:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 185: Ի՞նչ արմատներից կամ բառերից են կազմված հետևյալ բարդ բառերը:*

*դասընկեր, գրատախտակ, գրասեղան, հեռագիր, բեռնատար, փոքրատառ, երեսսրբիչ, ձնծաղիկ, պահակատուն, կեսօր, այսօր, թաղամաս, մայրաքաղաք, բարեկարգ:*

2. Բառավերջի «ի»-ն միանալով «ա» հոդակապին՝ տալիս է «ե». օրինակ՝ *ոսկի-ագույն—ոսկեգույն:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 186: Կազմեցե՛ք բարդ բառեր հետևյալ արմատներից կամ բառերից. ի՞նչ բառեր կստացվեն.*

*հերթ և պահ, բարձր և ձայն, օղակ և վար, դաս և գիրք, տասն և երեք, մարդ և գետին, ձյուն և ծաղիկ, արև և մուտք, ինքն և թիռ, շարք և ցան, հեռու և խոս, հանք և փոր, հաց և հատիկ, գարի և ջուր, բար և կամ, ոսկի և գույն:*

*3. Բառը բարդման և ածանցման ժամանակ պահպանում է իր ուղղագրությունը. ուստի՝ եթե բառն սկսվում է «ը», «օ»*

կամ «է» գրերով, բարդության կամ ածանցման մեջ այդ գրերը պահպանվում են նաև բառամիջում.

օրինակ՝

ընկեր—խաղընկեր, անընկեր, օր—այսօր, կեսօր:

էջ—վայրէջք, է—որևէ, ինչևէ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 187։ Գրեցե՛ք բարդ կամ ածանցավոր բառեր, որոնց կազմում լինեն հետևյալ բառերը.

օգուտ, ընկեր, ընդունելի, օգնական, օդ, էական, ըմբռնելի:

Բարդ բառեր են կազմում նաև բառի կրկնությունից կամ տարբեր բառերի ճարադրումից (իրար կողքի դնելուց): Օրինակ՝ խումբ-խումբ, կամաց-կամաց, զույգ-զույգ, տեսակ-տեսակ, չորս-հինգ, դուրս գալ, ներս մտնել և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 188։ Կարդացե՛ք, գտե՛ք պարզ, բարդ և ածանցավոր բառերը:

## ՉՈՐՍԸ ՔՍԱՆՉՈՐՍԻ ԴԵՄ

(Հայրենական պատերազմի էպիզոդ)

Մեր հրաձգային զորամասը, որին օժանդակում էին տանկերը, ջախջախում էր գերմանական մի հենակետ: Հանկարծ մարտիկների գլխավերևում երևաց թշնամու 10 ռմբակոծիչ: Դրանց պաշտպանում էին 14 կործանիչ: Հակառակորդի վրա գրոհեց մեր կործանիչների քառյակը:

Գերմանական ռմբակոծիչների մարտաշարը վայրկենապես խախտվեց: Նետելով ռումբերը դատարկ դաշտի վրա, նրանք սկսեցին փախչել. մեր օդաչուները կռվի բռնվեցին ֆաշիստական կործանիչների դեմ:

Ահա ոչնչացվեց մեկ «մեսսերշմիտ»: Թշնամու ինքնաթիռների երամը նետվեց մեր երկու օդաչուների վրա: Բայց այստեղ գերմանական մեքենաներից մեկն ընկավ ավագ լեյտենանտ Կոստինի և լեյտենանտ Բագաևի գնդացիրների կրակի տակ: Մեքենան բոցավառվեց: Շուտով ցած գլորվեց հակառակորդի մեկ կործանիչ ևս: Մոտ կես ժամ տևեց օդային ճակատամարտը: Սպառվեցին ռազմամթերքն ու վառելանյութը: Պետք էր մարտից դուրս գալ: Այս պահին երկնքում երևացին մեզանից երեք կործանիչ ևս: Թշնամու ինքնաթիռները սարսափահար փախան: Մեր յոթ կործանիչները բարեհաջող վայրէջք կատարեցին իրենց օդանավակայանում:



### § 40. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ—сложно-сокращенные слова

Հապավումները կազմվում են հետևյալ եղանակներով.

1. Առաջին բառի կամ բառերի սկզբնամասով և վերջին ամբողջ բառով.

օրինակ՝

գյուղսովետ—գյուղական սովետ:

ժողկրթբաժին—ժողովրդական կրթության բաժին:

2. Բառերի սկզբնամասերով.

օրինակ՝

պետհրատ—պետական հրատարակչություն:

շրջգործկոմ—շրջանային գործադիր կոմիտե:

սոցապ—սոցիալական ապահովություն և այլն:

3. Բառերի սկզբնատառերով. այս դեպքում, եթե հապավվող բառերը հասարակ անուններ են, հապավումը գրվում է փոքրատառերով, իսկ եթե հատուկ անուններ են (հիմնարկության անուն, պետության անուն և այլն), գրվում է մեծատառերով.

օրինակ՝

բուհ—բարձրագույն ուսումնական հաստատություն:

ՍՍՌՄ—Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն:

ՀԼԿԵՄ—Հայաստանի Լենինյան Կոմունիստական Երիտասարդական Միություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 189։ Հետևյալ հապավումները գրել լրիվ բառերով.

ՀամԼԿԵՄ, ռայսովետ, աշխարհուրդ, մարզկոմ, ՍՄԿԿ, ջոկվար, ժողդատարան, քաղսովետ, ժողկրթբաժվար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 190։ Հետևյալ հապավումները գրել լրիվ բառերով.

գյուղսովետ, շրջգործկոմ, քաղսովետ, ՄՏԿ, պետթատրոն, ռուսմասվար, ԼԿԵՄ, կոլտնտեսություն, քաղկոմ, խնայդրամարկղ։

## § 41. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ—чередование звуков

Հայերենում շեշտը դրվում է վերջին վանկի վրա. ռուսերենում բառի շեշտն ընկնում է տարբեր վանկերի վրա։ Հայերենի ի, ու, ե (է) հնչյունները թույլ են։

Երբ այս և այլ փոփոխության ժամանակ բառի վերջին վանկի շեշտն անցնում է հաջորդ, նոր ավելացած վանկին, պատահում է, որ այդ ի, ու, ե (է) արմատական ձայնավորները, յա և ույ երկհնչյունները փոփոխության են ենթարկվում։ Այս երևույթը հայերենում կոչվում է հնչյունափոխություն (чередование гласных звуков)։

Հայերենում կան հնչյունափոխության հետևյալ դեպքերը։

1. Ու ձայնավորը.

ա) փակ վանկում փոխվում է «ը» ձայնավորի. օրինակ՝ ջուր—ջրի—ջրկիր, տուն—տնակ, մուկ—մկան, ձուկ—ձկան—ձկնորս և այլն.

բ) բաց վանկում դառնում է «վ». օրինակ՝

լեզու—լեզվի, կատու—կատվի, լու—լվի և այլն.

գ) երբեմն մնում է անփոփոխ. օրինակ՝

ութ—ութսուն, ութսունական, ուղտ—ուղտի—ուղտապան, ուրու—ուրուի և այլն.

դ) կամ սղվում է. օրինակ՝

անասուն—անասնի—անասնական, հատուկ—հատկություն և այլն։

2. Ի ձայնավորը փակ վանկում.

ա) փոխվում է «ը» ձայնավորի. օրինակ՝

կիր—կրի, գիր—գրի, գրավոր, սիրտ—սրտի—սրտոտ և այլն.

բ) կամ սղվում է. օրինակ՝

ամիս—ամսի—ամսաթիվ, ճահիճ—ճահճի—ճահճային և այլն։

Ի ձայնավորը բաց վանկում հաջորդ ձայնավորից առաջ երբեմն սղվում է, երբեմն էլ «ա» ձայնավորին միանալով դառնում է յա. օրինակ՝

թշնամի—թշնամական, բարի—բարություն, որդի—որդյակ, հոգի—հոգյակ և այլն։



3. Ե ձայնավորը.

ա) մեծ մասամբ չի փոխվում.

օրինակ՝

գետ—գետի, բերդ—բերդի, հայերեն—հայերենի և այլն.

բ) կամ փակ վանկում դառնում է «ի»

օրինակ՝

կես—կիսել,—կիսատ, պարտեզ—պարտիզպան և այլն.

Այս դեպքում «ե» ձայնավորը կարող է մնալ,

օրինակ՝

կես—կեսի (կամ կիսի), պարտեզ—պարտեզի։

4. Յա երկհնչյունը դառնում է «ե»,

օրինակ՝

պաշտոնյա — պաշտոնեություն, գործունյա — գործունեություն և այլն։

5. Ույ երկհնչյունը փակ վանկում.

ա) դառնում է «ու»,

օրինակ՝

թույլ—թուլակազմ, բույս—բուսական, լույս—լուսավոր և այլն։

6. Ա ձայնավորը սղվում է հազվադյուտ դեպքերում. օրինակ՝ ամառ—ամռան։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 191։ Հետևյալ բառերից կազմել այնպիսի ձևեր, որոնց մեջ ձայնավորը կամ երկհնչյունը ենթարկվի հնչյունափոխության.

դուռ, կուրծք, ձու, կավիճ, ուսուցիչ, միս, միտք, մեջ, կես, խուլ, բույս, ոսկյա, լուծ, գիր, նուշ, թիվ, ծույլ, համբույր, քույր։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 192։ Գտե՛ք հնչյունափոխության ենթարկված բառերի արմատները և գրեցե՛ք նրանց լրիվ ձևերը.

թղթի, գրքով, ամսից, մտքով, միջով, բուսական, լրագրավաճառ, թվանշան, դռնակ, կրծքանշան, ոսկեգույն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 193։ Գրեցե՛ք հետևյալ բառերի հնչյունափոխության չենթարկված ձևերը։

գրքի, սրտի, ջրի, կրի, կացնով, միջով, ծխի, գլխին, անդնդից, թղթի, բրնձի, մտքից, աղջկա, գծեր, տներ։

Օրինակ՝

գրքի—գիրք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 194։ Գրեցե՛ք 10 բառ, որոնք ենթարկվում են հնչյունափոխության։

Օրինակ՝

տուն—տնակ։

## § 42. ՀԻՄՔ ԵՎ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ—основа и окончание

Բառերը նախադասության մեջ միշտ էլ չեն պահպանում իրենց հիմնական ձևը, այլ համաձայն ունեցած դերի կամ բառերի հետ ունեցած առնչության՝ կրում են որոշ փոփոխություն։ Այդ փոփոխությունը լինում է գլխավորապես վերջից՝ կամ զանազան վերջավորություններ ստանալով կամ վերջին վանկի ձայնավորը փոփոխելով։

Օրինակ՝

սեղան, սեղան-ից, սեղան-ով.

ճայել-ի, ճայել-ու, ճայել-ուց.

գրեց-ի, գր-իր, կարդաց-եք, կարդ-աս, կարդաց-ի և այլն։

Յուրաքանչյուր բառ բաղկացած է երկու մասից՝ հիմքից և վերջավորությունից:

Երբ բառից հանում ենք վերջավորությունը, մնում է հիմքը. օրինակ՝ քարի, քարից, քարով բառաձևերի հիմքն է քար։

Վերջավորություններն են՝ ի, ից, ով:

Քարտաշի, քարտաշից, քարտաշով բառաձևերի հիմքն է քարտաշ, վերջավորություններն են՝ ի, ից, ով:

Հիմք կարող են լինել թե՛ պարզ, թե՛ բարդ և թե՛ ածանցավոր բառերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 195։ Գտե՛ք բառերի հիմքն ու վերջավորությունը. ցույց տվե՛ք պարզ և ածանցավոր բառերը։

### ԳԱՐՈՒՆ

Տարին չորս եղանակ ունի, բայց ամենից սիրունը, ամենից դուրեկանը գարունն է։

Սառած գետինը տաքանում է և սկսում է կանաչել։ Փայտացած ծառերը բացվում են, սար ու ձոր ծլում, ծաղկում են։

Երբ որ տեսնում ես գույն-գույն ծաղիկները արևի



տակ փայլելիս, կարծում ես, թե փոքրիկ մանուկներ են ժպտում երեսիդ։ Եվ երբ որ նորեկ երգեցիկ թռչունները էլ ձայն-ձայնի տված ծլվլում են, կարծես թե բոլոր շնչավորները ձեռք-ձեռքի տված պար են գալիս, զվարճանում, գարնան գալը շնորհավորում։

Ո՞վ ասես, անհամբեր չի սպասում գարնան գալուն։ Թե՛ մարդ, թե՛ գազան, թե՛ անասուն և թե՛ թռչուն ուզում են, որ գարունը գա և իրենց քաղցր ու անուշ արև տա։

## § 43. ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

Բառերն ըստ իմաստի լինում են նույնանիշ (синонимы), հականիշ (антонимы), համանիշ (синонимы) և նույնանուն (омонимы):

1. Նույնանիշ կոչվում են այն բառերը, որոնք իմաստով նույնն են. օրինակ՝

այտ—թուշ, շրթունք—շուրթ, գնալ—երթալ, մազ—հեր—վարս, պատուհան—լուսամուտ, անիվ—ակ, վաճառել—ծախել, վախ—երկյուղ, ուղի—ճանապարհ—ճամփա և այլն։

2. Համանիշ կոչվում են այն բառերը, որոնք նշանակությամբ խիստ մոտիկ են, բայց նույնը չեն և նուրբ տարբերություն ունեն միմյանցից. օրինակ՝

վերջ—վախճան, մտցնել—մուծել, մութ—խավար, ձի—երիվար—նժույգ և այլն։

3. Նույնանուն կոչվում են այն բառերը, որոնք ձևով նույնն են, բայց նշանակությամբ տարբեր. օրինակ՝

այր (մարդ), այր (քարայր), փող (դրամ), փող (խողովակ), սեր (կաթի սեր), սեր (սիրել), հոտ (բույր), հոտ (ոչխարների խումբ) և այլն։

4. Հականիշ կոչվում են այն բառերը, որոնք իմաստով միմյանց հակադիր են. օրինակ՝

հաստ—բարակ, երկար—կարճ, մեծ—փոքր, լույս—խավար և այլն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 196։ Կազմել նույնանիշ, համանիշ, նույնանուն և հականիշ բառերի ցանկ։

# ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ—ЧАСТИ РЕЧИ

*Բառերի տեսակները որոշվում են ըստ նրանց նշանակության, երբեմն նաև ըստ գործածության, և կոչվում են* խոսքի մասեր:

*Հայերենում խոսքի մասերը 9-ն են.* գոյական (существительное), ածական (прилагательное), թվական (числительное), դերանուն (местоимение), բայ (глагол), մակբայ (наречие), կապ (предлог и послелог), շաղկապ (союз), ձայնարկություն (междометие):

*Խոսքի մասերից 6-ը՝* գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, *նախադասության անդամներ են դառնում,* կապը *և* շաղկապը *կապող բառերի դեր են կատարում, իսկ* ձայնարկությունը *նախադասության կառուցման մեջ դեր չի խաղում, բայց նախադասությանը մի առանձին երանգ է տալիս:*

## § 44. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ—имя существительное

**Որևէ առարկա ցույց տվող բառը կոչվում է գոյական անուն կամ գոյական:**

Գոյական անունը *պատասխանում է հետևյալ հարցերին՝* ո՞վ, ի՞նչ, ո՞ւմ, ինչի՞, ումի՞ց, ինչի՞ց ումո՞վ, ինչո՞վ, ինչո՞ւմ:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 197: Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք գոյական անունները:*



## ՁՄՌԱՆ ԳԱԼԸ

*Ձմռան գալը ամենից շուտ զգում են թռչունները: Աշունը գալուն պես նրանց մեծ մասը խումբ-խումբ չվում է դեպի տաք երկրներ: Կան թռչուններ էլ, որ չեն չվում. նրանք ձմեռը մնում են մեզ մոտ:*

*Աշնան վերջին նրանց փետուրները ավելի են շատանում և երկարում:*

*Աշնան վերջին ծառերի տերևները թափվում են: Նրանք մերկանում են ու ասես թե պատրաստվում են քնի, մինչև որ գարնան արևը նորից նրանց արթնացնի: Կեղևը վերարկուի նման պինդ փաթաթված է ծառին և չի թողնում, որ ծառը մրսի ձմռան ցրտերից:*

*Աշնանը վայրի կենդանիների մորթիները ծածկվում են խիտ ու երկար մազերով:*

*Նրանք իրենց համար շինում են տաք որջեր: Որջերում մեծ քանակությամբ ձմռան պաշար են հավաքում: Սկյուռը հավաքում է ընկույզ, կաղին, սունկ և գկեռ: Նա ամբողջ ձմեռը, նստած իր տաք որջում, ուրախ-ուրախ կրծում է իր պաշարը և սպասում գարնան գալուն: Բայց կան վայրի կենդանիներ, որ ձմռան պաշար չեն հավաքում: Աղվեսը, գայլը ամբողջ ձմեռը սոված փորով դեսուդեն են թափառում՝ մի բան ճարելու, ուտելու, որ սովից չմեռնեն:*

## § 45. ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆ—нарицательное имя

**Միևնույն տեսակի ամեն մի առարկայի տրվող անունը կոչվում է հասարակ անուն:**

*Օրինակ՝*

մատիտ, պիոներ, ձկնիկ:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 198: Արտագրեցե՛ք հասարակ անունները:*

## ՄԵՐ ԴԱՍԱՐԱՆԸ

Մեր դասարանը մի մեծ սենյակ է։ Նա ունի հատակ, առաստաղ, չորս պատ և չորս անկյուն։ Պատերից երկուսը երկար են, երկուսը՝ կարճ։

Մեր դասարանի հատակը տախտակամած է և կարմիր ներկած։ Առաստաղը և պատերը սվաղված են գաջով ու սպիտակեցված կավիճով։

Մեր դասարանը լուսավոր է, ունի երկու փեղկանի մեկ դուռ և երեք մեծ լուսամուտ։ Հատակը, դռները և լուսամուտների փեղկերը շինված են փայտից։ Մեկ լուսամուտն ունի օդանցք։

Դասարանի մեջ շարված են նստարաններ։ Նստարանների առաջ դրված է մեկ սեղան և մեկ աթոռ՝ ուսուցչի համար։ Բոլոր նստարանները շինված են փայտից, նստարանները ներկված են կողքից դեղին, վրայից՝ սև գույնով։ Նստարաններն ունեն դարակներ՝ պայուսակները տեղավորելու համար։ Յուրաքանչյուր նստարանի վրա նստում են երկու աշակերտ։

Նստարանների դիմաց գտնվում է գրատախտակը, նրա գոգին դրված է կավիճը, իսկ կողքին կախված է ջնջոցը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 199։ Ուշադրություն դարձրե՛ք հետևյալ բառերի ուղղագրության վրա, արտասանեցե՛ք և արտագրեցե՛ք բառատետրերում։

Սենյակ, անկյուն, տախտակամած, գաջ, փեղկ, փայտ, օդանցք, առաջ, նստարաններ, մեջ, կողք, գույն, պայուսակ, յուրաքանչյուր, գրատախտակ, գոգ, ուսուցիչ, ոտք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 200։ Կազմեցե՛ք շարադրություն՝ «Մեր դասարանը»։



### § 46. ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ—собственное имя

**Միատեսակ առարկաներից միայն մեկին տրված անունը կոչվում է հ ա տ ու կ ա ն ու ն:**

Օրինակ՝

Արամ, Սևան, Երևան:

Հատուկ անուններ են անձանց, գյուղերի, քաղաքների, ծովերի, լճերի, լեռների, երկրների և այլ անուններ, ինչպես և կենդանիներին տրվող անունը։

Գրելիս հատուկ անունները սկսում ենք մեծատառով, ինչպես ռուսերենում։

### § 47. ՅԱ ԵՐԿՀՆՉՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 201։ Արտագրեցե՛ք «յա» երկհնչյուն ունեցող հետևյալ բառերը։

Մանյա, Մարուսյա, Վիկտորյա, Ամալյա, Ասյա:

Մարդկանց հատուկ անունների վերջում գրվում է «յա», բացի այն դեպքերից, երբ վերջավորության «ի»-ն շեշտվում է:

Օրինակ՝

Մարի՛ա, Լի՛ա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 202։ Գրեցե՛ք յա երկհնչյուն ունեցող մարդկանց հատուկ անուններ։

### § 48. ԻԱ ԵՐԿՁԱՅՆԱՎՈՐԸ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Աշխարհագրական հատուկ անունների վերջում գրվում է իա։

Օրինակ՝

Ֆրանսիա, Ասիա, Դանիա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 203։ Գրեցե՛ք իա վերջավորվող հատուկ անուններ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 204։ Ուշադիր կարդացե՛ք և գտե՛ք հատուկ անունները։ Գրեցե՛ք պարզ և բարդ ածանցավոր բառերը։

## ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

*Երևան կայարանից գնացք նստեցինք, գիշերով անցանք Լենինական ու Կիրովական քաղաքները։ Լուսաբացին մտանք Լոռու ձորը, իսկ կեսօրին հասանք Թբիլիսի։ Երեկոյան այդտեղից ճանապարհ ընկանք դեպի Բաքու։ Բաքու հասնելիս երևացին նավթահորերի աշտարակները և Կասպից ծովը։*

*Մենք ապրում ենք Անդրկովկասում։ Անդրկովկասում կա սովետական երեք եղբայրական ռեսպուբլիկա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան։ Հայաստանի մայրաքաղաքն է Երևանը, Վրաստանինը՝ Թբիլիսին, իսկ Ադրբեջանինը՝ Բաքուն։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 205։ Այբբենական կարգով գրեցե՛ք ձեր ընկերների անունները։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 206։ Այբուբենի ամեն մի տառով գրեցե՛ք մի հատուկ անուն՝ մարդու, քաղաքի, գյուղի, գետի, ծովի, սարի, տնային կենդանու և այլն։*

### § 49. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ
### Число существительных

Գոյական անունները ունենում են երկու թիվ՝ **եզակի** և **հոգնակի**:

Եզակի թիվ ունեցող գոյական անունը ցույց է տալիս մի առարկա. *օրինակ*՝ քար, մատիտ:

Հոգնակի թիվ ունեցող գոյականները ցույց են տալիս մեկից ավելի միատեսակ առարկաներ. *օրինակ*՝ քարեր, մատիտներ:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 207։ Կազմեցե՛ք գոյական անունների հոգնակին։*



| | | | |
|---|---|---|---|
| *պատ* | *պատեր* | *մատիտ* | *մատիտներ* |
| *քար* | . . . | *տետրակ* | . . . . . . . |
| *փայտ* | . . . | *պայուսակ* | . . . . . . . |
| *բույս* | . . . | *դպրոց* | . . . . . . . |
| *վարդ* | . . . | *ուսուցիչ* | . . . . . . . |
| *ուլ* | . . . | *աշակերտ* | . . . . . . . |

**Միավանկ գոյական անունների հոգնակին ունենում է եր, իսկ բազմավանկ գոյական անունների հոգնակին՝ ներ վերջավորություն:**

Բացառություն.—Մարդ *բառի հոգնակին լինում է* մարդիկ, կին *բառի հոգնակին լինում է* կանայք:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 208։ Գրեցե՛ք հինգ բազմավանկ բառեր և կազմեցե՛ք նրանց հոգնակին։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 209։ Գտե՛ք միավանկ և բազմավանկ բառերը և կազմեցե՛ք նրանց հոգնակին։*

### ԱՇՈՒՆ

*Դեղնած դաշտերին*
*Իջել է աշուն,*
*Անտառը կրկին*
*Ներկել է նախշուն։*

*Պաղ-պաղ մեգի հետ*
*Փչում է քամին.*
*Քշում է, տանում*
*Տերևը դեղին։*

*Տխուր հանդերից*
*Մարդ ու անասուն*
*Քաշվում են կամաց*
*Իրենց տունն ու բույն։*

(Հ. Թումանյան)

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 210։ Ուշադրություն դարձրե՛ք հետևյալ բառերի ուղղագրության վրա՝ գեղնած, իջել է, նախշուն, մեգ, տերև, մարդ, բույն։ Արտասանեցե՛ք այդ բառերը։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 211։ Գրեցե՛ք շարադրություն՝ «Աշուն» վերնագրով։*

Գառ, մուկ, դուռ, ձուկ, ճարս, ոտ, ձեռ, լեռ, եզ *միավանկ գոյական անունները հոգնակի թվում ունենում են* ներ. օրինակ՝ *գառ—գառներ։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 212։ Կազմեցե՛ք* մուկ, դուռ, ձուկ, ճարս, ոտ, ձեռ, լեռ, եզ *միավանկ բառերի հոգնակին։*

**«Ն»-ով վերջացող բազմավանկ բառերը հոգնակիում ունենում են երկու «ն», օրինակ՝ սեղան—սեղաններ։**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 213։ Արտագրեցե՛ք հոգնակի թիվ ունեցող գոյականները և ընդգծեցե՛ք նրանց հոգնակի վերջավորությունները։*

## ՏԱՐՎԱ ՈՐ ԵՂԱՆԱԿՆ Է

*Ես բերում եմ պայծառ արև և տաք օրեր։*

*Ես ծածկում եմ դաշտերը դալար խոտերով ու զարդարում անտառները կանաչ տերևներով։ Ես բերում եմ ծաղիկներ ու թիթեռներ, կանչում եմ թռչուններին հեռու երկրներից և աշխարհը լցնում երգերով։*

*Մի՞թե ինձ չեք սիրում։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 214։ Արտագրեցեք հոգնակի թիվ ունեցող գոյական անունները և կազմեցե՛ք նրանց եզակին, ապա արտագրեցե՛ք եզակի թիվ ունեցող գոյականները և կազմեցե՛ք նրանց հոգնակին։*

## ՏԱՐՎԱ ՈՐ ԵՂԱՆԱԿՆ Է

*Ես ոսկեզօծում եմ արտերը և կարմրում հասկերի գլուխները։ Ես կախ եմ անում այգիներում տանձ, խնձոր, դեղձ, խաղող։ Ես ճուտիկներին թռցնում եմ*



*բներից և հանում մանուկներին զով անտառը, աղբյուրների մոտ, ազատ սարերը։*

*Մի՞թե ինձ չեք սիրում։*

**Երբ առարկան որոշ է, նրա անվան վերջում գրվում է «ը» կամ «ն», որոնք կոչվում են որոշիչ հոդ (определенный артикль)։**

*Օրինակ՝*

Մեր դասարանի աշակերտը, մեր դասարանի աշակերտուհին։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 215։ Արտագրեցե՛ք որոշիչ հոդ ունեցող գոյականները, ընդգծեցե՛ք հոդը։ Ցույց տվեք հոդ չունեցող գոյականները։*

*Ձմեռն անցավ,*
*Եկավ գարուն.*
*Ջյունը հալվեց,*
*Լցվեց առուն։*

*Արև ծագեց*
*Արևելքից,*
*Ծիլեր քաշեց*
*Գետնի տակից։*

*Տաք հարավից*
*Եկան հավքեր,*
*Բույն հյուսեցին*
*Ընկեր-ընկեր։*

*Ծառը պտկեց,*
*Տվեց բողբոջ,*
*Առուն հանեց*
*Անուշ խոխոջ։*

*Փովեց կանաչ*
*Սարի լանջին,*
*Կարմրեց մորին*
*Թփի միջին։*

*Դաշտը թավիշ*
*Զգեստ հագավ,*
*Կանգնեց քարին,*
*Երգեց կաքավ։*

*Արտը գնաց*
*Ծնած մաքին,*
*Կաթը ավեց*
*Անուշ ձագին։*

*Կարապն իջավ*
*Ընկավ գետը,*
*Օձը գնաց՝*
*Ճուան իր հետը։*

*Մուկ ու մողես,*
*Միջատ գեռուն,*
*Արև ելան,*
*Եկավ գարուն։*

(Խնկո-Ապեր)

## § 50. ՀՈԼՈՎՈՒՄ—склонение

*Նախադասության մեջ գոյականները լինում են թե՛ ենթակա, թե՛ ստորոգյալ և թե՛ լրացում։*

*Օրինակ՝*

Աշակերտը գնաց դպրոց *(այս նախադասության մեջ աշակերտ գոյականը ենթակա է)։*

Կիմիկն աշակերտ է *(այս նախադասության մեջ աշակերտ գոյականը ստորոգյալ է կազմում)։*

Ուսուցիչը գովում է իր առաջադեմ աշակերտին *(այս նախադասության մեջ* աշակերտ *գոյականը լրացում է)։*

**Գոյականի այն փոփոխումը, որով արտահայտվում է գոյականի պաշտոնը նախադասության մեջ, կոչվում է հոլովում (склонение)։**

**Բառի հոլովման յուրաքանչյուր ձևը կոչվում է հոլով (падеж)։**

Հայերենում գոյականները ունեն յոթ հոլով՝
Ուղղական — именительный
Սեռական — родительный
Տրական — дательный
Հայցական — винительный
Բացառական — отложительный (исходный)
Գործիական — творительный
Ներգոյական — местный

*Հայերենին հատուկ հոլովներն են՝* բացառական *և* ներգոյական, *որ չկան ռուսերենում։*

## § 51. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎ—именительный падеж

**Գոյականի ուղղական հոլովը ցույց է տալիս նախադասության ենթական, գործող կամ լինող (եղող) առարկան։**

*Օրինակ՝*

Աշակերտը սովորում է դասը։
Դասարանը լուսավոր է։
Բանվորն աշխատում է գործարանում։

*Այս նախադասությունների մեջ* դասարանը, աշակերտը, բանվորը *ենթակա են և դրված են ուղղական հոլովով։*



*Ուղղական հոլովով են դրվում բաղադրյալ ստորոգյալ* (составное сказуемое) *կազմող գոյականները և գոյական լրացումները։*

*Օրինակ՝*

Պետիկն աշակերտ է։
Աշակերտ Պետիկը տուն գնաց։

*Այս նախադասությունների մեջ* աշակերտ *գոյականը դրված է ուղղական հոլովով։*

Ուղղական հոլովը *պատասխանում է* ո՞վ *կամ* ի՞նչ (ը), ովքե՞ր *կամ* ինչե՞ր *հարցերին։*

*Ուղղական ձևով դրվում է նաև կոչականը, որ ստանում է շեշտ, օրինակ՝ «Արի՛, արի՛, ո՛վ գարուն»։* Ո՛վ գարուն *ուղղական հոլովի ձևով է։*

*Հայերենի ուղղական հոլովի գործածությունը նման է ռուսերեն լեզվի ուղղական հոլովի գործածությանը։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 216։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք ուղղական հոլովով դրված գոյականները։*

### ԳԱՐՈՒՆ

*Եկել է գարուն,*
*Ծաղկել է այգին,*
*Երգում է առուն*
*Պարզ ու սրտագին։*

*Թշշում է ձորում*
*Գետը վարարած,*
*Ջրերը պարում,*
*Թռչում են առաջ։*

*Լսվում է զվարթ*
*Մուրճերի զնգոց,*
*Երգում է հպարտ*
*Մարդն ստեղծագործ։*

(Սարմեն)

## § 52. ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ—родительный падеж

Դասարանի *պատերին նկարներ կան։*
Աշակերտի *գիրքը նոր է։*
Պետիկի *տետրակն ընկավ։*

Այս նախադասությունների մեջ դասարանի բառաձևը ցույց է տալիս, որ պատերը դասարանինն են, աշակերտի բառաձևը ցույց է տալիս, որ գիրքը աշակերտինն է, Պետիկի բառաձևը ցույց է տալիս, որ տետրակը Պետիկինն է։

Դասարանի, աշակերտի, Պետիկի բառաձևերը գրված են սեռական հոլովով։

**Գոյականի սեռական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում, վերաբերում է մի ուրիշ առարկա կամ առարկաներ:**

Սեռական հոլովով գրված բառերը լինում են ենթակայի կամ որևէ այլ բառի լրացում։

Սեռական հոլովը պատասխանում է ո՞ւմ կամ ինչի՞ հարցին։ Ռուսերենի սեռականը նմանություն ունի հայերենին, միայն հակառակ դասավորությամբ. օրինակ՝ книга ученика— աշակերտի գիրքը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 217։ Արտագրեցե՛ք սեռական հոլովով դրված գոյականներն այն բառերի հետ, որոնց վերաբերում են նրանք։

## Ե Ր Ե Վ Ա Ն Ը

### 1

Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է։

Երևանը գտնվում է Զանգու գետի ձախ ափին։ Քաղաքը շրջապատված է պտղատու այգիներով և նորատունկ անտառներով։

Քաղաքն ունի շատ գեղեցիկ փողոցներ ու զբոսավայրեր։ Գլխավոր փողոցներն են՝ Լենինի անվան պողոտան, Ստալինի անվան պողոտան, Միկոյանի և Օրջոնիկիձեի անվան պողոտաները, Աբովյանի, Նալբանդյանի անվան փողոցները։ Գլխավոր փողոցներով անցնում են տրամվայները, տրոլեյբուսները և ավտոբուսները։ Քաղաքի հարավային մասում գտնվում է երկաթուղային



կայարանը։ Գնացքն ամեն օր ուղևորներ է փոխադրում դեպի Լենինական, Կիրովական, Թբիլիսի, Բաքու, Մոսկվա։

### 2

Երևան քաղաքի կենտրոնում գտնվում են Լենինի անվան ու Շահումյանի անվան հրապարակները։ Լենինի անվան հրապարակում կանգնած է Լենինի սքանչելի արձանը, իսկ քաղաքի հյուսիսային բարձրության վրա կանգնած է Ի. Վ. Ստալինի հոյակապ մոնումենտ — արձանը։

Քաղաքի զբոսավայրերից հայտնի են՝ Կոմսոմոլի անվան պարկը, Կիրովի անվան մանկական պուրակը, Քսանվեց կոմունարների անվան այգին, Մանկական երկաթուղին։ Գեղեցիկ է Հաղթանակի կամուրջը։

Ամառ թե ձմեռ, Երևանում կառուցում են ու կառուցում։ Քաղաքի բոլոր մասերում նորանոր շենքեր են բարձրանում։

Երևանում կան բազմաթիվ գործարաններ, դպրոցներ ու մանկապարտեզներ, ինստիտուտներ, թատրոններ ու կինոներ։

(Ընթերցանության դասագրքից)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 218։ Ընդգծեցե՛ք սեռական հոլովով դրված գոյականները։ Որոշեցե՛ք տարբերությունը ռուսերենից։

Դասարանի լուսամուտը։ Դպրոցի դուռը։ Ուսուցչի սեղանը։ Պիոների վզկապը։

## § 53. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ—дательный падеж

Աշակերտին մի գիրք տվեց իր ուսուցիչը։

Գրատախտակին մոտեցավ ուսուցիչը։

Այս նախադասությունների մեջ աշակերտին և գրատախտակին բառաձևերը գրված են տրական հոլովով։

**Գոյականի տրական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որին ենթական դիմում, մոտենում կամ տալիս է մի բան, որի օգտին կամ վնասին կատարում է գործողություն:**

*Ռուսերենում տրականի այս նշանակությունները համընկնում են հայերենին:*

*Գոյականի տրական հոլովը սովորաբար լինում է ստորոգյալի լրացում:*

Տրական հոլովը *պատասխանում է* ո՞ւմ *կամ* ինչի՞(ն) *հարցին:*

*Տրականը ցույց է տալիս նաև գործողության նպատակը, որ չի համընկնում ռուսերենին:*

*Օրինակ՝*

Լևիկը գնաց գրադարան գրքի (գիրք բերելու):

*Տրականը ցույց է տալիս նաև ժամանակ ու տեղ, որ նույնպես չի համընկնում ռուսերենին:*

*Օրինակ՝*

Ապրիլ ամսին ծաղկում են ծառերը:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 219: Կարդացե՛ք, գտե՛ք տրական հոլովով գործածված գոյական անունները, գրեցե՛ք ստորոգյալի հետ և ցույց տվեք՝ ի՞նչ հարցի են պատասխանում:*

*Մանյան հանդիպեց Անահիտին: Սոնյան նամակ գրեց հայրիկին: Պապիկը մոտեցավ դարակին: Լևոնը ծաղկեփունջը հանձնեց ուսուցչին: Ջանասեր Աշոտը կարդացածը պատմեց մայրիկին: Ձյունը դիպվել է լեռան գագաթին: Անձրևի կաթիլները դիպչում են քարին:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 220: Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք տրական հոլովով դրված գոյական անունները:*

## ԵՐԳ ՍԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ

*Բազմած մեր սեգ լեռների մեջ,*
*Աչքդ հառած երկնքին,*



*Ժպտում ես դու, ականջ դնում*
*Ալիքների զիլ երգին:*

*Անթիվ դարեր ապրել ես դու*
*Մեր աշխարհում հարազատ,*
*Բայց հոսել են քո ջրերը*
*Ապարդյուն ու անաշխատ:*

*Այժմ առատ լույս ես տալիս*
*Քաղաքներին, գյուղերին,*
*Կյանք ես տալիս, բերք ես տալիս*
*Կոլխոզային դաշտերին:*

(Հ. Հայրապետյան)

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 221: Գտե՛ք տրական հոլովով գործածված գոյականները, արտագրեցե՛ք ստորոգյալի հետ:*

## ԽՈԶՆ ՈՒ ԿԱՐԱՊԸ

*Ինչպես է լինում, լճակի ափին,*
*Խոզն է հանդիպում մի օր կարապին:*
*Կարապի տեսքը ինչ լեզվով գովես,*
*Գեղեցկություն է նա ամբողջապես:*
*Սակայն ծաղրում է խոզը կարապին.*
*— Նայեցեք դուք մի այս այլակերպին.*
*Ինչ գարշելին է, որքա՜ն այլանդակ,*
*Արեգակի տակ*
*Չկա մի էակ,*
*Որ լինի այսչափ տգեղ, անպիտան,*
*Սիրտս կճաքի՝ նմանվեմ սրան...*
*Եվ ընթացք չտանք ծաղրի տարափին,*
*Ո՞վ է ում ծաղրում—խոզը՝*
*կարապին...*

(Մ. Կորյուն)



Հայոց լեզու 5—7 դաս.—7

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 222։ Տրական հոլովով գործածեցե՛ք պիոներ, գետ, դպրոց բառերը։

## § 54. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ—винительный падеж

**Գոյականի հայցական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որն անմիջապես իր վրա է կրում ենթակայի կատարած գործողությունը։**

Ռուսերենում հայցականը այս իմաստով նույնն է հայերենի հետ։

Օրինակ՝

Ուսուցիչը գովում է աշակերտին։

Ես գովում եմ մեր դասարանը։

Սովետական Բանակը ջախջախեց թշնամուն։

Այս նախադասությունների մեջ դասարանը, որ կրում է իր վրա ես ենթակայի գործողությունը (գովում եմ), աշակերտին, որ կրում է իր վրա ուսուցիչը ենթակայի գործողությունը (գովում է) և թշնամուն, որ կրում է իր վրա Սովետական Բանակը ենթակայի գործողությունը, դրված են հայցական հոլովով։

Գոյականի հայցական հոլովը լինում է սովորաբար ստորոգյալի լրացում։

Հայցական հոլովը պատասխանում է ո՞ւմ կամ ի՞նչ(ը) հարցին։

Հայցական հոլովը ցույց է տալիս նաև գործողության տեղ, ժամանակ, չափ և նույնպես համընկնում է ռուսերենին.

օրինակ՝

Հայրս գնաց քաղաք։ Մեր աշխատանքը տևեց հինգ օր։

Գնացքը տասը կիլոմետր հեռացավ քաղաքից։

Քաղաք, հինգ օր և տասը կիլոմետր բառաձևերը նույնպես դրված են հայցական հոլովով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 223։ Կարդացե՛ք և գտե՛ք հայցական հոլովով գործածված գոյական անունները ստորոգյալների հետ։ Կազմեցե՛ք նախադասություններ։

Մեզ մոտ՝ Երևանում, կա գործարան, որը բամբակը մաքրում է սերմերից։ Մաքուր բամբակը ուղարկում են Լենինական։ Այնտեղ կան գործարաններ, որտեղ բամբակից տեսակ-տեսակ կտորներ են պատրաստում։

Բամբակի սերմերը չեն փչացնում։ Ուղարկում են մի ուրիշ գործարան։ Այնտեղ մեքենայով սերմից յուղ են հանում. այդ յուղից պատրաստում են օճառ և ներկեր։

Սերմի մնացորդները չեն փչացնում։ Մամլում են, քուսպ դարձնում ու կերակրում անասուններին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 224։ Կազմեցե՛ք նախադասություններ և հայցական հոլովով գործածեցե՛ք հետևյալ գոյականները. պիոներ, գետ, դպրոց։

## § 55. ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Գոյականի բացառական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որից սկսվում է ենթակայի գործողությունը։

Օրինակ՝

Աշակերտից ուսուցիչը ստացավ մի գիրք։

Պտուղը պոկվեց ճյուղից։

Գոյականի բացառական հոլովը լինում է սովորաբար ստորոգյալի լրացում։

Բացառական հոլովը ցույց է տալիս նաև այն տեղը, որտեղից սկսվում է ենթակայի գործողությունը։

Օրինակ

Դաշտից վերադարձավ հնձվորը։

Բացառական հոլովը պատասխանում է ումի՞ց կամ ինչի՞ց հարցերին։ Ռուսերենում այս հոլովը գոյություն չունի, արտահայտվում է от, из, с նախդիրներով՝ սեռական հոլովի հետ և за նախդիրով՝ հայցական հոլովի հետ (за руку-ձեռքից)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 225։ Բացառական հոլովով գործածեցե՛ք պիոներ, գետ, դպրոց բառերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 226։ Կարդացե՛ք և գտե՛ք բացառական հոլովով գործածված գոյականները։ Որոշեցե՛ք, թե ի՞նչ հարցի են պատասխանում։



*Փիսոն կանչեց մուկիկին,*
*Մուկը բռնեց փիսիկից,*
*Փիսոն բռնեց շնիկից,*
*Շունը բռնեց թոռնիկից,*
*Թոռը բռնեց տատիկից,*
*Տատը բռնեց պապիկից,*
*Պապը բռնեց շաղգամից,*
*Ու վեց հոգով միասին*
*Հա քաշեցին, քաշեցին,*
*Շաղգամը հողից հանեցին։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 227։ Կազմեցե՛ք նախադասություններ և բացառական հոլովով գործածեցե՛ք* պիոներ, գետ *և* դպրոց *գոյականները։*

### § 56. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ—творительный падеж

*Սուրիկը գրում է* մատիտով։
*Մենք գնում էինք* դաշտով։
Աշակերտով *հպարտանում է ուսուցիչը։*
*Արամն իր* ընկերներով *գնաց պիոներական ճամբար։*

Մատիտով, անտառով, աշակերտով *և* ընկերներով *բառաձևերը դրված են գործիական հոլովով։*



**Գոյականի գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան, ա) որի միջոցով, միջով, վրայով, որով կամ բ) որի հետ միասին կատարվում է ենթակայի գործողությունը։**

*Ռուսերենում գործիականը հիմնականում համընկնում է հայերենին։*

*Գոյականի գործիական հոլովը լինում է սովորաբար ստորոգյալի լրացում։*

Գործիական հոլովը *պատասխանում է* ումո՞վ *կամ* ինչո՞վ *(նաև* որտեղո՞վ*) հարցերին։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 228։ Գտե՛ք գործիական հոլովով գործածված գոյականները։ Որոշեցե՛ք մյուս գոյականների հոլովը։*

*Անտառն իր կանաչով, թփերով, գեղեցիկ լորենիներով, սիրուն կեչիներով, հսկա կաղնիներով բնության զարդն է։ Գետերն ու գետակները, առուներն ու աղբյուրները ամեն տեղ շրջապատված են անտառներով, ծառերով, բույսերով։*

*Ոզնին կերակրվում է մկներով, խխունջներով, թրթուրներով և դաշտի ու այգու այլ վնասատուներով։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 229։ Լրացրե՛ք՝ ինչո՞վ . . . . . . .*
*Գրում են . . . . . . . . Փորում են . . . . . . .*
*Հնձում են . . . . . . . . Դիզում են . . . . . . .*
*Տաշում են . . . . . . . . Կոփում են . . . . . . .*
*Ջրում են . . . . . . . . Զարդում են . . . . . . .*
*Որոշեցե՛ք՝ ո՞ր հոլովով են դրված լրացնող գոյականները։*

### § 57. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ—местный падеж

**Գոյականի ներգոյական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որի մեջ կատարվում է ենթակայի գործողությունը։**

*Այս հոլովը զուգադիպում է ռուսերենի* предложный *հոլովին, բայց միայն* в *և* на *նախդիր բառերով՝* (в поле, на заводе):

*Դասարանում պարապում են Լուսիկն ու Աշոտը։*
*Դաշտում աշխատում է տրակտորը։*
*Գործարանում աշխատում է բանվորը։*

Դասարանում, դաշտում *և* գործարանում *բառաձևերը դրված են ներգոյական հոլովով։*

Ներգոյական հոլովով դրված գոյականները լինում են սովորաբար ստորոգյալի լրացում։

Ներգոյական հոլովը պատասխանում է ո՞ւմ մեջ կամ ինչո՞ւմ (նաև որտե՞ղ) հարցերին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 230։ Ուշադիր կարդալ, գտնել ներգոյական հոլովով գործածված գոյականները, արտագրել այն նախադասությունները, որոնց մեջ դրանք գործածված են։ Որոշել մյուս գոյականների հոլովը։

### ԱՆՏԱՌԸ

Սովետական մարդիկ փոխում են բնությունը։ Հյուսիսում, որտեղ առաջ միայն մամուռ էր աճում, այժմ ծփում են ցորենի արտերը։ Անապատներում, որտեղ բույս չկար, այժմ կանաչին են տալիս այգիները։

Գեղեցիկ ծառերով զարդարվում են մեր քաղաքները, գյուղերը, ճանապարհները։ Դաշտերում բարձրանում են երիտասարդ անտառները։ Ամեն տեղ ծառ են տնկում, ջրամբար են պատրաստում, ջրանցք են փորում։

Այնտեղ, որտեղ ցորենի դաշտերը այրվում էին երաշտից, որտեղ քամիները քշում տանում էին դաշտի լավ հողը, այլևս անբերրիություն չի լինի. այդ վայրերում աղբյուրները կշատանան, ջրամբարները կլցվեն մաքուր ջրով, իսկ ծառերի խիտ ու երկար շարքերը կկանգնեն քամիների առաջ։

Ապա թող քամին փորձի իր ուժը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 231։ Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք ներգոյական հոլովով գործածված գոյականները։

Լինում է մի սար,
Այն սարում մի ծառ,
Այն ծառում փչակ,



Փչակում մի բույն,
Բնում երեք ձագ,
Ու վրան կկուն։

(Հովհ. Թումանյան)

Մարդ և կենդանի ցույց տվող գոյական անունները ներգոյական հոլով չունեն։

Դրանց ներգոյականի փոխարեն գործ է ածվում սեռական հոլովը մեջ բառի հետ. օրինակ՝ աշակերտի մեջ, թռչունի մեջ, հորթի մեջ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 232։ Սովորեցե՛ք հոլովները և նրանց համապատասխան հարցերը՝ պատասխանելով այդ հարցերին նախադասություններով։

Ո՞վ, ո՞ւմ, ումի՞ց, ումո՞վ հարցերը տրվում են անձ (личность) ցույց տվող գոյական անուններին, իսկ ի՞նչ, ինչի՞, ինչի՞ն, ինչի՞ց, ինչո՞վ, ինչո՞ւմ հարցերը տրվում են իր (вещь) ցույց տվող գոյական անուններին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 233։ Արտագրեցե՛ք և հարցերի փոխարեն գրե՛ք աշակերտ բառը համապատասխան ձևով։

(Ո՞վ) սովորում է։ (Ո՞ւմ) գիրքը հին էր։
Ուսուցիչը մի նոր գիրք տվեց (ո՞ւմ)։
Ուսուցիչը սիրում է իր (ո՞ւմ)։
(Ումի՞ց) գոհ է ուսուցիչը։
Ուսուցիչը հպարտանում է իր գերազանցիկ (ումո՞վ)։

## § 58. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Գոյականները ցույց են տալիս կա՛մ անձ, կա՛մ իր. օրինակ՝

անձ՝

Կոլյա, Պետիկ, Զուլիկ, Վանյա, Հրաչյա, ուսուցիչ, աշակերտ, դիրեկտոր և այլն։

իր՝

փայտ, մատիտ, արկղ, հաց, գրիչ, սեղան, աթոռ և այլն։

Անձ ցույց տվող գոյականները մարդկանց հատուկ և հասարակ անուններն են։

*Օրինակ՝*

Հրաչիկ, Արփիկ, Գոհար, գործավար, հրամանատար, պիոներ, նախագահ:

*Հաճախ կենդանին կարող է առնվել որպես անձ:*

*Օրինակ՝*

Դրանք մեր կատվին ծեծեցին (ո՞ւմ—կատվին):

*Գոյականների այս երկու խմբերից յուրաքանչյուրը նախադասության մեջ գործ է ածվում որոշյալ կամ անորոշ առումով: Որոշյալ առումով գործածվող բառերն ստանում են «ը» կամ «ն» հոդը:*

*Օրինակ՝*

Ջոկատավարը մոտեցավ մի աշակերտի (*աշակերտի*—անորոշ առումով է գործածված):

Ջոկատավարը մոտեցավ մեր դպրոցի աշակերտին (*աշակերտին*—որոշյալ առումով է գործածված):

*Հայցական հոլովով դրված* անձ *և* իր *ցույց տվող գոյականները տարբեր վերջավորություններ են ստանում:*

*Օրինակ՝*

Հայց.—ես տեսա քո *գիրքը* (իր):

Հայց.—Ես տեսա քո *աշակերտին* (անձ):

## § 59. ՀՈԼՈՎՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

### ԱՆՁԻ ԱՌՈՒՄՈՎ

Եզակի

| Հոլով | Հարցեր | Անորոշ | Որոշյալ |
|---|---|---|---|
| Ուղղ. | ո՞վ | աշակերտ | աշակերտը |
| Սեռ. | ո՞ւմ | աշակերտի | աշակերտի |
| Տր. | ո՞ւմ | աշակերտի | աշակերտին |
| Հայց. | ո՞ւմ | աշակերտ(ի) | աշակերտին |
| Բաց. | ումի՞ց | աշակերտից | աշակերտից |
| Գործ. | ումո՞վ | աշակերտով | աշակերտով |
| Ներգ. | — | — | — |



*Գոյականների հոգնակին հոլովվում է եզակիի նման. հոլովական նույն վերջավորությունները ավելանում են հոգնակի ձևի վրա:*

Հոգնակի

| Հոլով | Հարցեր | Անորոշ | Որոշյալ |
|---|---|---|---|
| Ուղղ. | ովքե՞ր | աշակերտներ | աշակերտները |
| Սեռ. | ո՞ւմ | աշակերտների | աշակերտների |
| Տր. | ո՞ւմ | աշակերտների | աշակերտներին |
| Հայց. | ո՞ւմ | աշակերտներ(ի) | աշակերտներին |
| Բաց. | ումի՞ց | աշակերտներից | աշակերտներից |
| Գործ. | ումո՞վ | աշակերտներով | աշակերտներով |
| Ներգ. | — | — | — |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 234: Նախադասություններ կազմելով՝ աշակերտ բառի նման հոլովեցե՛ք* ուսուցիչ, պիոներ, Արամ *գոյական անունները:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 235: Արտագրեցե՛ք և հարցերի փոխարեն գրե՛ք* բաժակ *գոյականի համապատասխան ձևերը:*

*(Ի՞նչը) սեղանի վրա է: (Ինչի՞) ջուրը մաքուր չէ: (Ինչի՞ն) մոտենում է Արան: Արան վերցնում է (ի՞նչը):*

*Արան ջուրը թափում է (ինչի՞ց): Արան (ինչո՞վ) ջուր է խմում: Այժմ (ինչո՞ւմ) մաքուր ջուր կա:*

### ԻՐԻ ԱՌՈՒՄՈՎ

Եզակի

| Հոլով | Հարցեր | Անորոշ | Որոշյալ |
|---|---|---|---|
| Ուղղ. | ի՞նչ(ը) | բաժակ | բաժակը |
| Սեռ. | ինչի՞ | բաժակի | բաժակի |
| Տր. | ինչի՞(ն) | բաժակի | բաժակին |
| Հայց. | ի՞նչ(ը) | բաժակ | բաժակը |
| Բաց. | ինչի՞ց | բաժակից | բաժակից |
| Գործ. | ինչո՞վ | բաժակով | բաժակով |
| Ներգ. | ինչո՞ւմ | բաժակում | բաժակում |

Հոգնակի

| Հոլով | Հարցեր | Անորոշ | Որոշյալ |
|---|---|---|---|
| Ուղղ. | ինչե՞ր(ը) | բաժակներ | բաժակները |
| Սեռ. | ինչե՞րի | բաժակների | բաժակների |
| Տր. | ինչերի՞(ն) | բաժակների | բաժակներին |
| Հայց. | ինչե՞ր(ը) | բաժակներ | բաժակները |
| Բաց. | ինչերի՞ց | բաժակներից | բաժակներից |
| Գործ. | ինչերո՞վ | բաժակներով | բաժակներով |
| Ներգ. | ինչերո՞ւմ | բաժակներում | բաժակներում |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 236: Նախադասություններ կազմելով՝* բաժակ *բառի նման հոլովեցե՛ք հետևյալ գոյական անունները.*

գետ, ծով, սար, աշխատանք, Երևան:

*Սեռական հոլովում գոյականներն ունեն* ի, ու, ան, յան, ոջ, վա *վերջավորությունները, հոգնակիում ունենում են միայն* ի *վերջավորությունը:* Ենք *և* ոնք *վերջավորություն ունեցող գոյականները ունեն միայն հոլովման հոգնակի ձևեր և սեռականում* ց *վերջավորությունը:*

*օրինակ՝* Արամենք—Արամենց *և այլն:*

Հայր, մայր և եղբայր *բառերը սեռականում արմատական* այ *երկհնչյունը փոխում են* ո *ձայնավորի:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 237: Կարդացե՛ք, որոշեցե՛ք՝ յուրաքանչյուր գոյական ո՞ր հոլովով է գրված:*

## ԴՈՒ ԱՆՄԱՀ ԵՍ

*Ես կանգնած եմ նկարիդ դեմ կարոտով,*
*Մեր մեծ ընկեր, մեր թանկագին ուսուցիչ,*
*Ես հուզմունքից թրթռացող վառ սրտով*
*Քեզ եմ նայում, մեր առաջնորդ, մեր Իլյիչ:*

*Դու ժպտում ես իմ Լենինյան անկյունից,*
*Քեզ պատել եմ չթառամող վարդերով,*



*Էլեկտրական լապտերների լույսերից*
*Քեզ համար շող պսակ հյուսել կարոտով:*

*Ո՞վ է ասում՝ հեռացել ես, դու չկաս.*
*Դու ապրում ես մեր ծաղկավարդ աշխարհում:*
*Դու անմահ ես, միշտ կլինես, կմնաս,*
*Քո սիրելի թոռնիկների սրտերում:*

(Գ. Բորյան)

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 238: Որոշեցե՛ք գոյական անունների հոլովը:*

## ՁՄԵՌԸ

### I

*Զայրացել էր ձմեռը: Նա մտածեց բոլոր շնչավորներին ջնջել երկրի երեսից: Ամենից առաջ սկսեց թռչուններից. ձանձրացրել էին նրանք իրենց ծլվլոցով ու ճղճղոցով:*

*Փչեց ձմեռը իր սառը քամին, պոկեց տերևները բոլոր ծառերից, ժողովեց ու թափեց ճանապարհների վրա: Ո՞ւր գնային թռչունները: Հավաքվեցին ու մտածեցին, հետո երամներ կազմեցին և աղմկելով, սարերի վրայով, ծովերի վրայով թռան դեպի տաք երկրներ: Մնաց միայն ճնճղուկը, նա էլ վախից ձայնը կտրեց:*

### II

*Տեսավ ձմեռը, որ թռչուններին չի հասնի, հարձակվեց գազանների վրա: Դաշտերը ծածկեց ձյունով, անտառը՝ ձյունակույտերով, ծառերին հագցրեց սառույցե կեղև ու բաց թողեց բուք ու սառնամանիք: Բայց գազանները չվախեցան: Մի մասը տաք մուշտակներ ունեն, մյուսները խոր բները մտան: Սկյուռը փչակում ընկույզ էր կրծում, արջն իր որջում թաթերն էր ծծում,*

*նապաստակը ցատկոտում էր ու տաքանում, իսկ, ձիերը, կովերը, ոչխարները, վաղուց մտել էին գոմերը, խոտ էին ուտում ու խմում գոմի գոլ ջուրը։*

*Ավելի կատաղեց ձմեռը և հասավ ձկներին։ Ավելի դաժան սառնամանիքներ ուղարկեց։ Սառնամանիքները եկան, առանց մուրճի, առանց մեխի կամուրջներ կապեցին գետերի ու լճերի վրա. Ջրերի երեսը ծածկվեց սառույցով։ Ձկներն ավելի խորը գնացին. սառույցե ծածկոցի տակ ավելի տաք էր։*

III

*Բայց ավելի շատ ձմեռը կատաղեց, երբ տեսավ, որ նույնիսկ երեխաները չեն վախենում իրենից։ Սահնակ էին քշում, չմուշկ խաղում, դահուկով սահում, ձյունե մարդ շինում, ձնագնդով խփում։ Ձմեռը չարությունից կմշտում էր մեկի ականջը, սառեցնում մյուսի քիթը, բայց երեխաները վերցնում էին ձյունը և շփում սառած տեղերը. կրակի պես տաքացնում էր։ Տեսավ ձմեռը, որ ոչինչ չի կարողանում անել, բարկությունից լաց եղավ։ Լսվում էր արցունքի կաթկթոցը։*

*Գարունը մոտենում էր։*

(Ուշինսկի)

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 239։ Որոշեցե՛ք յուրաքանչյուր գոյականի հոլովը։*

## ԻՆՉՊԵՍ ԷԻՆ ԱՊՐՈՒՄ ՄԱՐԴԻԿ ՀՆՈՒՄ

*Հնում մարդիկ այնպես չէին ապրում, ինչպես հիմա։ Կար ժամանակ, երբ ոչ քաղաքներ կային, ոչ գյուղեր և ոչ էլ շենքեր։*

*Դա շատ դարեր առաջ է եղել։*

*Երկիրը ծածկված էր հաստ սառույցով, որ չէր հալ-*



*վում նույնիսկ ամռանը։ Այնտեղ, ուր չկար սառույց, աճում էին մամուռներ և ցածր թփուտներ։ Թափառում էին հաստ մորթի հագած գազաններ՝ արջեր, մամոնտներ, հյուսիսային եղջերուներ և այլն։*

*Մարդիկ դեռևս չէին կարող տներ շինել, այլ շինում էին հասարակ հյուղեր կամ ապրում էին այրերում, հագուստի փոխարեն հագնում էին գազանների մորթիներ։*

*Այդպես էին ապրում նախամարդիկ։*

*Նրանք ծանոթ չէին մետաղին՝ ոչ պղնձին, և ոչ էլ երկաթին։ Նրանք որսի էին գնում քարով, մահակով կամ տեգով։ Քարը տաշում էին, սրում, հետո մատղաշ կեղևով կապում էին փայտին, և դառնում էր քարե կացին կամ բրիչ։ Քարից պատրաստում էին նիզակ ու նետեր։ Նետում էին աղեղով։ Քարից պատրաստում էին դանակներ և քերիչներ. քարե դանակներով կտրատում էին իրենց ուտելիքը, քերիչներով մաքրում գազանի մորթին։ Որովհետև այն ժամանակվա զենքերն ու աշխատանքի գործիքները քարից էին, դրա համար նախամարդկանց անվանում են քարե դարի մարդիկ։*

(Մ. Կովալյովսկի)

## § 60. ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐ

Суффиксы, образующие имена существительные

**-ակ** (в значении уменьшительном, ласкательном или презрительном). *առվակ, տնակ, որդյակ, հոգյակ, գրչակ, իմաստակ և այլն։*

**-ակ** (в значении действующего лица, орудия и пр.). *բուժակ, պահակ, սահնակ և այլն։*

**-անք** (в значении абстрактных существительных). *գովասանք, զարմանք, խնդրանք և այլն։*

**-իք** (в значении предметов потребления или действия,

имеющего быть совершенным). *ուտելիք, խմելիք, վառելիք, գրելիք, ասելիք և այլն։*

-**իչ** (в значении действующего лица или орудия действия). *ուսուցիչ, նկարիչ, կտրիչ, գրիչ և այլն։*

-**ություն** (в значении абстрактного существительного или собирательного). *ընկերություն, միություն, շինարարություն, աշակերտություն, բանվորություն։*

-**ուհի** (в значении женского пола). *աշակերտուհի, ուսուցչուհի, ընկերուհի, բարեկամուհի և այլն։*

-**ում** (в значении процесса действия). *զարգացում, նվաճում, կառուցում, ուսուցում և այլն։*

-**արան** (в значении места). *ննջարան, դատարան, թեյարան, ճաշարան և այլն։*

-**ք** (большей частью в значении абстрактных существительных). *միտք, խելք, խոսք և այլն։*

*Բայց՝ ոտք, ձեռք, աչք և այլն, կոնկրետ գոյականներ են։ Կան նաև այլ ածանցներ, ինչպես օրինակ,*

-**անակ** *(մրցանակ)* -ան *(վիպասան, ծորան)*, -եստ *(պահեստ)*, ուստ *(գալուստ)*, մունք *(ցուցմունք)*, յուն *(հնչյուն)*, -որդ *(որսորդ)*, -վոր, -ավոր *(բանվոր, աշխատավոր)*, -վածք *(ճեղքվածք)*, -պան *(ձիապան)*, -ոց *(թիկնոց, դպրոց)* -իկ *(ոաղմիկ, թափառաշրջիկ) և այլն։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 240։ Կարդալ, պատմել, որոշել գոյականների թիվը, հոլովը. գտնել գոյականակերտ ածանցները։*

*Սոսնովսկին արդեն մոտենում էր թշնամու կրակակետին։*

*«Պետք է կտրել գնդացրային կրակը», այդ միտքն էր մեխվել Սոսնովսկու գլխում։*

*Այլևս ոչ մի ուժ չէր կարող ետ պահել նրան իր հանդուգն մտքից։*

*Նա զգուշորեն ուսերի թիկնոցը նետեց, որ չխանգարի։*

*Մի քանի քայլ կուզեկուզ գնաց, ապա՝ «Հանուն*



*Հայրենիքի, հանուն Ստալինի» գոչելով, ճարպիկ ոստյունով հարձակվեց հակառակորդի գնդացրի վրա։ Բռնեց փողը և գերմարդկային ուժով սկսեց սեղմել դեպի ցած՝ իր մարմնով փակելով գլխանցքը։*

*Երբ գնդացիրը լռեց, սովետական մարտիկները փոթորկի նման նետվեցին թշնամու վրա։ Նրանց աննահանջ մարտի էր մղում կոմերիտական Սոսնովսկու առասպելական արարքը։ Մարտը ահեղ էր։ Ծուխն ու բոցը ծածկել էին մարտիկներին։ Հրետանային ուժեղ կրակով, ավտոմատներով, նռնակներով նրանք քարուքանդ արին ֆաշիստների ամրությունները։*

*Հրամանը կատարված էր։ Սովետական մարտիկները գրավեցին թշնամու կրակակետը։*

*Կովի դաշտում թափված էին ֆաշիստական զինվորների ու սպաների դիակույտերը։*

*Իսկ այնտեղ, կոմերիտական Սոսնովսկին, գնդացրի պողպատե փողը գրկած, ձեռքն առաջ պարզած, դեռ կանչում էր ընկերներին։*

(Արաքս. «Տափաստանի առյուծը»)

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 241։ Գտնել* իք, իչ, ություն, ուհի *և* ք *ածանցով գոյականներ և հիշել այդ ածանցների գրությունը։*

# ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

# ИМЯ ПРИЛАГАТЕЛЬНОЕ

## § 61. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

**Ածական անունը ցույց է տալիս առարկայի որևէ որպիսություն կամ վերաբերություն.**

*այսինքն՝ առարկայի ինչպիսի կամ ինչից լինելը, ում կամ ինչին վերաբերելը։*

Օրինակ՝

ա) լավ, մեծ, փոքր, կարմիր, ջանասեր, եռանդուն *և այլն։*

*Այս ածականները ցույց են տալիս առարկայի հատկություն* (качество).

բ) փայտյա, երկաթյա, հրեղեն, ոսկեղեն *և այլն։*

*Այս ածականները ցույց են տալիս առարկայի ինչից լինելը. օրինակ՝*

փայտյա դուռ—*կապակցության մեջ* փայտյա *ածականը ցույց է տալիս, որ դուռը փայտից է.*

երկաթյա դուռ—*կապակցության մեջ* երկաթյա *ածականը ցույց է տալիս, որ դուռը երկաթից է.*

գ) լեռնային, ցամաքային, ժողովրդական, գյուղացիական *և այլն։*

*Այս ածականները ցույց են տալիս, թե ինչի՞ կամ ու՞մ է վերաբերում առարկան. օրինակ՝* լեռնային կլիման *կապակցության մեջ* լեռնային *ածականը ցույց է տալիս, որ կլիման հատուկ է, վերաբերում է լեռներին։*

Ածականները *պատասխանում են* ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր *հարցերին։*



## § 62. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Նախադասության մեջ հայերենի ածականները սովորաբար գործ են ածվում որպես թե՛ ենթակայի և թե՛ ստորոգյալի լրացում։**

*Ածականները օժանդակ բայի հետ միասին դառնում են ստորոգյալ։*

*Օրինակ՝*

Լավ պիոները նաև լավ սովորում է։

*Այս նախադասության մեջ* լավ *ածականը գործ է ածվում և՛ որպես ենթակայի լրացում, և՛ որպես ստորոգյալի լրացում։*

Սեդայի առողջությունը լավ է։

*Այս նախադասության մեջ* լավ *ածականը ստորոգյալ է կազմում։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 242։ Արտագրել ածականը գոյականի հետ և ընդգծել ածականը։ Ցույց տալ՝ որպես ինչ է գործածված ածականը։*

### ԳԱՐՈՒՆ

*Աչքը բացեց զուլալ առուն,*
*Տեսավ դրսում տաք է, գարուն…*
*Տեսավ՝ գարնան այդ վաղ պահին*
*Ծառ են տնկում իր ափերին։*

*Տեսավ՝ ուրախ հավք ու թռչուն*
*Գեղգեղում են, իրար կանչում։*
*Աշխատանքով ժիր ու եռուն,*
*Տեսավ՝ դուրս է ելնում մեղուն…*

*Տեսավ մանկանց նա կարմրաթուշ,*
*Որ խաղում են, երգում անուշ,*
*Տեսավ մարդկանց ջահել ու ծեր,*
*Խանդավառված դաշտ են լցվել։*

*Տեսավ՝ դաշտում կոլխոզական*
*Վար են անում տրակտոր, գութան։*
*Նայեց երկար, ժպտաց առուն,*
*Ինքն էլ հոսեց-վազեց հեռուն։*

(Վ. Գրիգորյան)

## § 63. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ—категории прилагательных

*Ածականները լինում են երեք տեսակ՝* որակական (качественные), հարաբերական (относительные) *և* հատկացական (притяжательные)․

**Ո ր ա կ ա կ ա ն ածականը ցույց է տալիս առարկայի համեմատելի որակությունը, ինչպիսի լինելը:**

*Օրինակ՝*

գեղեցիկ, լայն, բարձր, ամենագեղեցիկ, լավագույն և այլն:

*Որակական ածականներն ունենում են համեմատության աստիճաններ* (степени сравнения), *օրինակ՝ լավ, ավելի լավ, լավագույն կամ ամենալավ։*

**Հ ա ր ա բ ե ր ա կ ա ն ածականը ցույց է տալիս մի առարկայի ոչ համեմատելի հատկություն:**

*Հաճախ առարկայի որակությունը առաջացած է լինում մի այլ առարկայի նյութից։*

*Այդ պատճառով հարաբերական ածականը ցույց է տալիս առարկայի ինչից լինելը, ում կամ ինչին վերաբերելը։*

*Օրինակ՝*

Քարե տուն, երկաթյա դուռ:

*Այս կապակցությունների մեջ* քարե *ածականը ցույց է տալիս, որ տունը քարից է,* երկաթյա *ածականը ցույց է տալիս, որ դուռը երկաթից է։*

**Հ ա տ կ ա ց ա կ ա ն ածականները ցույց են տալիս առարկայի հատկության վերաբերություն կամ պատկանելություն:**

Օրինակ՝

հայրական (խնամք), մայրական (սեր), աշակերտական (տետր)․ *ածականները ցույց են տալիս, որ այդ հատկությունները վերաբերում են հորը, մորը, աշակերտին։*



*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 243։ Կազմել պատմվածք, որի մեջ գործածել հետևյալ ածականները։*

*կանաչ, բազմերանգ, հոտավետ, փարթամ, գեղեցիկ, ոսկյա, ուրախ, զվարթ, ջինջ, փայտյա։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 244։ Գտնել ածականը և ցույց տալ, թե որպես ինչ է գործածված։*

*Խմբավորել ածականները։*

*Արտագրել որակական ածականները։*

### ԾԱՂԻԿՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

Մեղու

*Բարև՛, բարև՛, կապույտ ծաղիկ,*
*Ա՜խ, ինչ լավն ես ու դալար,*
*Թող քո սրտից մեղուն քաղի*
*Անուշ հյութեր իր համար։*

Ծաղիկ

*Պստիկ մեղու,*
*Ճստիկ մեղու,*
*Աշխատասեր ու արի,*
*Ո՞ւր ես տանում,*
*Ի՞նչ ես անում*
*Փոշին դու իմ թերթերի։*

Մեղու

*Կապույտ ծաղիկ, նուրբ ու նախշուն,*
*Բացված գարնան հովի հետ,*
*Ես քո հյութից մեղր եմ քաշում*

Համով, հոտով բուրավետ։
Առավոտից մինչ ուշ գիշեր
Շրջում եմ դաշտ ու այգի,
Չէ՞ որ ես էլ անդամն եմ ժիր
Մեր երջանիկ համայնքի։
Ի՞նչ է մեղուն համայնքից դուրս,—
Թույլ ու չնչին և անզոր,
Իսկ իր հսկա համայնքի մեջ
Ե՛վ ուժեղ է, և՛ հզոր։
Մենք միասին հաշտ ու ուրախ
Աշխատում ենք և դատում։

### Ծաղիկ

Արի՛, արի՛, սիրո՛ւն մեղու,
Ե՛վ ժրաջան և՛ կայտառ,
Բաց եմ արել թերթիկներս,
Արի՛, քաղի՛ր, հյութը տա՛ր։

(Մ. Կորյուն)

## § 64. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

**Ածականները գոյականների հետ գործածվելիս չեն հոլովվում, ինչպես ռուսերենում, այլ մնում են անփոփոխ։**

*Օրինակ՝*

| | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|
| Ուղղ. | մեծ տետրակ | մեծ տետրակներ |
| Սեռ. | մեծ տետրակի | մեծ տետրակների |
| Տր. | մեծ տետրակի | մեծ տետրակների |
| Հայց. | մեծ տետրակ | մեծ տետրակներ |
| Բաց. | մեծ տետրակից | մեծ տետրակներից |
| Գործ. | մեծ տետրակով | մեծ տետրակներով |
| Ներգ. | մեծ տետրակում | մեծ տետրակներում |



## § 65. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

*Ածականները գոյականաբար գործածվելիս հոլովվում են (մեծ մասամբ որոշյալ առումով) գոյականների նման.*

*Օրինակ՝*

| | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|
| Ուղղ. | լավը | լավերը |
| Սեռ. | լավի | լավերի |
| Տր. | լավին | լավերին |
| Հայց. | լավը *կամ* լավին | լավերը *կամ* լավերին |
| Բաց. | լավից | լավերից |
| Գործ. | լավով | լավերով |
| Ներգ. | լավում | լավերում |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 245։ Կարդալ և ցույց տալ ածականները, որոշել նրանց տեսակը, գործածությունը գոյականի հետ։*

*Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը։*

*Արևի առաջին ճառագայթների ներքո Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողերով, որ աչք էին շլացնում։ Արագածի պսակաձև գագաթը չէր երևում։ Նա դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մշուշով, որպես ամոթխած հարսիկ, որ սքողում է յուր դեմքը անթափանցիկ շղարշով։ Կանաչապատ դաշտավայրը, ցողված մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով։ Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի ալեկոծությամբ։*

*Գեղեցիկ էր այդ առավոտը։*

(Րաֆֆի)

## § 66. ԱԾԱԿԱՆԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐ

Суффиксы, образующие имена прилагательные

-ական (в значении притяжательности). *աշակերտական, ժողովրդական, երիտասարդական և այլն։*

-ենի (в том же значении). *մայրենի, հայրենի և այլն։*

-ային (в значении происхождения или относительности качества). *դաշտային, լեռնային, հյուսիսային, ածխային և այլն։*

-ե *կամ* յա (в значении материала, из чего сделан предмет). *երկաթե, փայտյա, քարե, ոսկյա և այլն։*

-եղեն (в значении материала, от чего произошло качество). *ոսկեղեն, հրեղեն, նյութեղեն և այլն։*

-եղ (в значении полноты качества). *համեղ, հյութեղ, ուժեղ և այլն։*

-ոտ (в значении полноты или сильно выраженного качества). *մսոտ, ոսկրոտ, փշոտ, յուղոտ և այլն։*

-կոտ *(վախկոտ)*, ուն *(զգայուն)*, յան *(հանգստյան)*, ավոր *(հեռավոր)*, -ալի *(ձանձրալի)*, -ելի *(սիրելի) և այլն։*

*Հայերենում շատ գործածական է* ան *ժխտական նախածանցը* (отрицательная приставка), *որ կազմում է ածականներ, համապատասխանելով ռուսերեն* не-, без- *նախածանցներին. օրինակ՝ անպետք*—ненужный, негодный, *անտուն*—бездомный *և այլն։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 246։ Ավելացնել ածանցով կազմված ածականների օրինակները։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 247։ ա). Արտագրել յուրաքանչյուր ածական այն գոյականի հետ, որի հատկությունն է ցույց տալիս. բ). ցույց տալ՝ որպես ի՞նչ է գործածված ամեն մի ածական. գ). գտնել ածանցավոր ածականները և որոշել ածանցը։*

## ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ԳԱՐՈՒՆԸ

*Մեր երկրի գարունն սկսվում է Արարատյան դաշտում։ Այնտեղ է բացվում առաջին ծաղիկը, և բարձր բարդենու վրա բույն շինում արագիլը։*



*Ով որ գարնանը մտնում է Արարատյան դաշտը, ամենից առաջ բարդենիների կատարին տեսնում է գարնան այդ ավետաբերին։ Մի ոտքի վրա կանգնած իր բնի մեջ, նա նայում է լայնատարած դաշտին, որը շրջապատված է մեծ լեռնագոտիներով։*

*Գարուն է, և գարունն ավելի է գեղեցկացնում Արարատյան դաշտը։ Ծառաստանները ծաղկել են սպիտակ, վարդագույն ծաղիկներով։ Դաշտը վեր է ածվել հեքիաթային մի ծաղկանոցի, որի մեջ փռվել են գյուղերը։ Ամեն տեղ երևում է շինարարություն։ Կոլտնտեսականները քանդում են հին տները, հին, դառը հուշերի պես։ Հին տների փոխարեն, լայն փողոցների վրա, տնամերձ պարտեզների մեջ, բարձրանում են գեղեցիկ երկհարկանի լուսավոր տներ, շրջապատված դեղձենիներով, ծիրանիներով, խաղողի թփերով։ Ծաղկած պարտեզներում տներն ասես երևում են մեծ ծաղկեփնջերի մեջ։*

*Գիշեր ժամանակ Արարատյան դաշտի գյուղերում ծառերի ու ծաղիկների միջից շողում են Իլյիչի լամպերը, և թվում է, թե կախարդական մեծ հրավառություն է ստեղծված դաշտում մեկ։*

*Մեծ խճուղու վրա, որը կիսում է Արարատյան դաշտը, ստվերախիտ ծառերի հովանու ներքո, գեղեցիկ հուշաղբյուրներ են շինված Հայրենական Մեծ պատերազմում ընկած հերոսների հիշատակին։ Վարդագույն տուֆից կառուցված կամարակապ հուշաղբյուրներից հոսում է մեր ձյունապատ լեռներից բերված վճիտ սառնորակ աղբյուրների ջուրը, որն առաջ գուցե միայն եղնիկներն էին խմում։ Արարատյան դաշտի գյուղերն առաջ խմելու ջուր չունեին և խմում էին առուների ու ճահճի ջուր, որը հիվանդություններ էր բերում։ Միայն Սո-*

*վետական իշխանությունն էր, որ նրանց հացի և խաղաղության հետ նաև ջուր տվեց։ Այդ վճիտ ջրերի վրա էլ բարձրանում են ընկած հերոսների հուշարձանները, որոնք անմահացնում են թե ընկած քաջերի հիշատակը, թե այդ շինարարությունը։*

*Դարեր կանցնեն, բայց հուշաղբյուրները ժողովրդի մեջ հերոսների հիշատակը անթառամ կպահեն։*

(Հ. Մկրտչյան)

# ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

## ИМЯ ЧИСЛИТЕЛЬНОЕ

### § 67. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

**Թվական անունը ցույց է տալիս առարկայի որևէ թիվ կամ կարգ։**

*Օրինակ՝*

հինգ, ութսունհինգերորդ, տասներորդ, վաթսուներորդ, վեցական *և այլն։*

*Նախադասության մեջ թվականները սովորաբար գործ են ածվում որպես լրացում։*

*Օրինակ՝*

Երեք ընկերներ զբոսանքի գնացին։

Հինգերորդ դասարանը ուսման գերազանցիկներ շատ ունի։

*Այս նախադասությունների մեջ* երեք *և* հինգերորդ *թվականները լրացումներ են։*

*Թվականները կարող են օժանդակ բառի հետ կազմել ստո-*
րոգյալ։

*Օրինակ՝*

Մի ձեռքի մատների թիվը հինգ է։

Հինգերորդ դասարանի աշակերտների թիվը երեսունվեց է։

*Այս նախադասությունների մեջ* հինգ *և* երեսունվեց *թվականները կազմում են* հինգ է *և* երեսունվեց է *բաղադրյալ ստորոգյալները։*

*Թվականները գործ են ածվում նաև որպես* ենթակա։

*Օրինակ՝*

Հինգը երեքից մեծ թիվ է։

*Այս նախադասության մեջ* հինգ *թվականը գործ է ածվում որպես ենթակա:*

*Թվական անունները լինում են երեք տեսակ՝* քանակական (количественные), դասական (порядковые) *և* բաշխական (распределительные).

## § 68. ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

### Количественные числительные

**Քանակական թվականները ցույց են տալիս առարկաների թիվը, քանակը:**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 248: Սովորեցե՛ք թվականները և նրանց ուղղագրությունը:*

| | | |
|---|---|---|
| *մեկ 1* | *տասնմեկ 11* | *քսան 20* |
| *երկու 2* | *տասներկու 12* | *քսանմեկ 21* |
| *երեք 3* | *տասներեք 13* | *քսաներկու 22* |
| *չորս 4* | *տասնչորս 14* | *քսաներեք 23* |
| *հինգ 5* | *տասնհինգ 15* | *քսանչորս 24* |
| *վեց 6* | *տասնվեց 16* | *քսանհինգ 25* |
| *յոթ 7* | *տասնյոթ 17* | *քսանվեց 26...* |
| *ութ 8* | *տասնութ 18* | *երեսուն 30* |
| *ինը (կամ՝ ինն)* | *տասնինը կամ* | |
| *տասը 10* | *տասնինն 19* | |

| | | |
|---|---|---|
| *երեսունմեկ 31* | *վաթսուն 60* | *ինը հարյուր 900* |
| *երեսուներկու 32* | *յոթանասուն 70* | *հազար 1000* |
| *երեսուներեք 33* | *ութսուն 80* | *հինգ հազար 5000* |
| *երեսունչորս 34...* | *իննսուն 90* | *միլիոն 1.000.000* |
| *քառասուն 40* | *հարյուր 100* | *միլիարդ 1.000.000.000* |
| *հիսուն 50* | *երկու հարյուր 200...* | |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 249: Բառերով գրել հետևյալ թվականները.*

*27, 76, 137, 12, 69, 44, 2376, 20, 70, 90, 8, 3, 5, 7894, 127 346:*



## § 69. ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

### Порядковые числительные

**Դասական թվականները ցույց են տալիս առարկայի կարգը ըստ հաջորդականության. օրինակ՝**

| | | | |
|---|---|---|---|
| *առաջին* | I | *տասնմեկերորդ* | XI |
| *երկրորդ* | II | *տասներկուերորդ* | XII |
| *երրորդ* | III | *տասներեքերորդ* | XIII |
| *չորրորդ* | IV | *տասնչորսերորդ* | XIV |
| *հինգերորդ* | V | *տասնհինգերորդ* | XV |
| *վեցերորդ* | VI | *տասնվեցերորդ* | XVI |
| *յոթերորդ* | VII | *տասնյոթերորդ* | XVII |
| *ութերորդ* | VIII | *տասնութերորդ* | XVIII |
| *իններորդ* | IX | *տասնիններորդ* | XIX |
| *տասներորդ* | X | *քսաներորդ* | XX *և այլն:* |

*Դասական թվականների ածանցն է* -երորդ, *իսկ երկու, երեք, չորս բառերի համար՝* րորդ, *օրինակ՝ հինգերորդ, վեցերորդ, բայց՝ երկրորդ, երրորդ, չորրորդ:*

Երրորդ և չորրորդ *բառերը գրվում են երկու «ր»-ով (րր):*

*Դասական թվականները գրվում են.*

*ա) հռոմեական թվանշաններով՝* I, II, III, IV *և այլն.*

*բ) հայերենի այբբենական կարգով՝ ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ժա, ժբ և այլն.*

*գ) արաբական թվանշաններով. այդ դեպքում թվանշանից հետո գրվում է միացման գիծ (-) և* րդ *երկտառը.* օրինակ՝ *2-րդ (երկրորդ), 3-րդ (երրորդ), 4-րդ (չորրորդ), 5-րդ (հինգերորդ) և այլն, իսկ առաջին բառը գրվում է 1-ին, որ կարող է ըստ տեղի և պահանջի կարդացվել նաև* մեկին;

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 250: Բառերով գրել հետևյալ թվականները.*
*1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 29-րդ, 37-րդ, 268-րդ, 3999-րդ, 76759-րդ:*

## § 70. ԲԱՇԽԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

### Распределительные числительные

**Բաշխական** թվականները ցույց են տալիս առարկաների բաշխումը ըստ հավասար քանակի:

*Օրինակ՝*

յուրաքանչյուր շարքում տեսնում եմ վեցական աշակերտ:

*Յուրաքանչյուր* քանակականից *կարելի է կազմել* բաշխական *թվական, ավելացնելով* ական *ածանցը։*

*Օրինակ՝*

յոթ-յոթական, տասը-տասնական *և այլն։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 251։ Կազմել հետևյալ թվականների բաշխականը.*

*1, 3, 4, 9, 15, 20, 21, 25։*

## § 71. ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

### Разряды числительных по составу слова

*Թվականներն ըստ կազմության լինում են՝* պարզ (простые), բարդ (сложные) *և* բաղադրյալ (составные):

*Պարզ թվականները կազմված են մեկ արմատից։*

*Օրինակ՝*

մեկ, հինգ, տասը:

*Բարդ թվականները կազմված են մեկից ավելի արմատից։*
*Բարդ թվականները գրվում են մեկ բառով։*

*Օրինակ՝*

տասներեք, քսանհինգ, հիսունվեց *և այլն։*

*Բաղադրյալ թվականները բաղադրված են երկու և ավելի անկախ բառերից։*

*Բաղադրյալ թվականներ կազմող բառերը գրվում են առանձին։*

*Օրինակ՝*

վեց հազար երկու հարյուր հիսունչորս:



*Հայերենի պարզ թվականներն են* մեկից *մինչև* տասը, *ապա՝* քսան, հարյուր, հազար, միլիոն *և* միլիարդ *բառերը։ Բարդ թվականներն են* տասնմեկից *մինչև 99, այսինքն՝* երկանիշ թվերի անունները. *բաղադրյալ են մնացած թվականները։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 252։ Խմբավորելով ըստ կազմության՝ գրեցե՛ք հետևյալ թվական անունները. 3, 4, 23, 28, 31, 49, 79, 164, 239, 5672, 13477, 125975։*

## § 72. ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

### Склонение числительных

*1. Հայերենում թվականները գոյականների հետ գործածվելիս չեն հոլովվում մինչդեռ ռուսերենում հոլովվում են։*

*Օրինակ՝*

| | Եզակի | Եզակի |
|---|---|---|
| Ուղղ. | երեք մարդ | հինգերորդ մարդ |
| Սեռ. | երեք մարդու | հինգերորդ մարդու |
| Տր. | երեք մարդու(ն) | հինգերորդ մարդու(ն) |
| Հայց. | երեք մարդու(ն) | հինգերորդ մարդու(ն) |
| Բաց. | երեք մարդուց | հինգերորդ մարդուց |
| Գործ. | երեք մարդով | հինգերորդ մարդով |

*2. Առանձին՝ գոյականաբար գործածվելիս թվականները հոլովվում են՝ ստանալով գոյականների հոլովական վերջավորությունները։*

| | *Եզակի* | *Եզակի* |
|---|---|---|
| *Ուղղ.* | *քսանը* | *քսաներորդը* |
| *Սեռ.* | *քսանի* | *քսաներորդի* |
| *Տր.* | *քսանին* | *քսաներորդին և այլն։* |
| *Հայց.* | *քսանը* | |
| *Բաց.* | *քսանից* | |
| *Գործ.* | *քսանով* | |
| *Ներգ.* | *քսանում* | |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 253։ Բառերով գրեցե՛ք 11—30 թվերը, կազմեցե՛ք այդ թվերի դասականները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 254։ Բառերով գրեցե՛ք հետևյալ թվերը. 3245, 879, 9993, 15759, 22365, 179782։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 255։ Գրեցե՛ք հինգ նախադասություն, որոնց մեջ գործածված լինի թվականը գոյականի հետ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 256։ Գտե՛ք և որոշեցե՛ք թվականները. որոշեցե՛ք բառերի կազմությունը։

## ՄԱՀԸ ՀԱՂԹՈՂ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Կլետսկայայի շրջանում ֆաշիստական մի խումբ տանկեր ու զրահապատ ավտոմոբիլներ թափանցեցին մեր զորքերի դասավորության շրջանը։ Գվարդիական չորս զրահահարներ՝ Բելիկովը, Ալեյկինովը, Բոլոտոն և Սամոյլովը պառկեցին բլրակի վրա։

Նրանք ետ քաշվելու հրաման չէին ստացել և մնացին բնագծում, մինչև որ կտրվեցին իրենց զորամասից։

Բռնկվեց անհավասար մարտը. երկու հակատանկային հրացան ունեցող չորս մարդու վրա շարժվում էին մոտ 30 տանկ։ Գվարդիականները չսասանվեցին։ Նրանք հավատում էին իրենց զենքին, իրենց հաղթությանը։ Առաջին համազարկերը վնասեցին երկու տանկ։ Ֆաշիստները ետ քաշվեցին, որպեսզի պայտաձև շրջապատեն բլրակը և վերջ դնեն խիզախներին։

Գվարդիականները հանգիստ սպասում էին թշնամուն։ Նրանք մտածում էին ոչ թե իրենց մահվան, այլ թշնամուն ոչնչացնելու մասին։ Եվ երբ տանկերը հռնդալով և հուր ժայթքելով սողացին գվարդիականների վրա, հերոսների ձեռքում հրացանները կրակում էին է՛լ ավելի արագ, է՛լ ավելի դիպուկ։



Ֆաշիստական 15 տանկ բոցավառվեցին անհավասար մարտի դաշտում։ Մնացածները նահանջեցին սովետական չորս մարտիկների չտեսնված հաստատակամության առաջ։ Չորս գվարդիականներ ետ մղեցին թշնամու տանկային գրոհը և իրենք մնացին ողջ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 257։ Բառերով գրել հետևյալ թվերը. գրել նաև այդ թվերի դասականները։

2, 3, 4, 9, 12, 13, 19, 22, 27, 39, 41, 70; 75, 80, 83, 89, 99, 1999։

Օրինակ՝

ութ—ութերորդ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 258։ Բառերով գրել 1—20 թվերը. գրել նաև նույն թվերի դասականները և բաշխականները։

Օրինակ՝

տասնմեկ—տասնմեկերորդ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 259։ Բառերով գրել 21—30 թվերը. գրել նաև նույն թվերի դասականները և բաշխականները։

Օրինակ՝

քսանմեկ—քսանմեկերորդ...

# ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ—МЕСТОИМЕНИЯ

## § 73. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*1.* Պիոները *պարապում է։ Նա դաս է սովորում։*

*Այս երկրորդ նախադասության մեջ* նա *բառը փոխարինում է* պիոներ *գոյականին։*

*2. Մայիսի 1-ին փողոցով անցնում էր* մեծ *բազմություն։* Այսպիսի *բազմություն առաջին անգամ էի տեսնում։*

*Վերջին նախադասության մեջ* այսպիսի *բառը փոխարինում է* մեծ *ածականին։*

*3. Աշակերտն ստացավ* վեց *մատիտ։* Այսքան *մատիտ նա դեռ չէր ունեցել։*

*Վերջին նախադասության մեջ* այսքան *բառը փոխարինում է* վեց *թվականին։*

*4) Աշոտը դասը* գերազանց *պատասխանեց։ Նա միշտ դասը* այսպես *է պատասխանում։*

Այսպես *բառը փոխարինում է* գերազանց *մակբային* (наречие)։

*Այս չորս խմբերից յուրաքանչյուրը բաղկացած է երկու նախադասություններից։ Երկրորդ նախադասությունների մեջ* նա, այսպիսի, այսքան, այսպես *բառերը փոխարինում են առաջին նախադասություններից հայտնի տվյալ գոյականին, ածականին, թվականին կամ մակբային։ Մեկ ուրիշ նախադասության մեջ նրանք կփոխարինեն մեկ ուրիշ գոյականի, ածականի, թվականի և մակբայի, որովհետև դերանունները մյուս խոսքի մասերի նման չեն, չունեն կոնկրետ իմաստ, նրանք գոյական են, ածական են, թվական են և մակբայ են ընդհանուր առումով։*



**Դերանունները ցույց են տալիս առարկա, որպիսություն, թիվ և գործողության հանգամանքներ ընդհանուր առումով:**

*Ուստի դերանունները կարող են փոխարինել գոյականի, ածականի, թվականի և մակբայի։*

## § 74. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

### Разряды местоимений

*Դերանունները իրենց նշանակությամբ ստորաբաժանվում են հետևյալ տեսակների՝*

*1.* Անձնական—личные. *ես* я, *դու* ты, *նա* он, *ինքը (-ս, -դ)* сам.

*2.* Ցուցական—указательные. *սա, դա* это, этот, эта, *նա* тот, та, то, *այս, այդ* это, эта, этот, *այն* тот, та, то, *սույն* сие, это, *նույն, միևնույն* тот же, тот же самый, *մյուս* другой, *այսպես, այնպես* так, *նույնպես* так же, *այսպիսի այդպիսի, այնպիսի* такой, *նույնպիսի* такой же, *այսքան, այդքան, այնքան* столько, столь, *նույնքան* столько же, *այսչափ, այդչափ, նույնչափ* в такой мере, *այստեղ* здесь, сюда, *այնտեղ* там, туда, *նույնտեղ* там же, *այդտեղ* там, туда:

*3.* Փոխադարձ—взаимные. *միմյանց, իրար, մեկմեկու* друг друга:

*4.* Հարցական—вопросительные. *ո՞վ* кто?, *ի՞նչ* что?, *ո՞ր* который?, *քանի՞, որքա՞ն* сколько?, *որչա՞փ* в какой мере?, *ի՞նչ չափ* в какой мере?, *որպե՞ս* как?, *որպիսի՞, ինչպիսի՞* какой?, *ինչպե՞ս* как?, *քանի՞երորդ* который по порядку?, *որտե՞ղ* где?, *ո՞ւր* куда?, *ե՞րբ* когда?։

*5.* Հարաբերական—относительные. *Նույն դերանուններն են, ինչ որ հարցականները, բայց առանց հարցական իմաստի և նշանի։*

*6.* Որոշյալ—определенные. *ամեն* каждый, всякий, *ամենքը* все, *բոլորը* все, всё, *յուրաքանչյուր* каждый, любой, *ամբողջ* весь, *ամենը, ամեն ինչ* всё, *յուրաքանչյուր ոք* каждый человек, *ամեն ոք* каждый человек:

*7.* Անորոշ—неопределенные. *ինչ-որ* что-то, *ինչ-ինչ* ка-

кие-то, *ոմն* кто-то, некто, *մեկը* кто-то *(անորոշ իմաստով)*, *այսինչ* такой-то, *այնինչ* такой-то, *մի քանիսը* некоторые, *ուրիշ*, *այլ* другой, *որևէ* кто-либо, *ինչևէ* что-либո, *երբևէ* когда-либо, *ուր որ է* откуда-то, *ինչ որ է* все равно что:

8. ժխտական—отрицательные: *ոչ ոք* никто, *ոչինչ* ничто, *ոչ մի*, *ոչ մեկը* ни один (одна, одно):

## § 75. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

### Личные местоимения

**Անձնական դերանունները անձ են ցույց տալիս և խոսքի մեջ գրվում են անձերի անվան փոխարեն:**

*Անձնական դերանուններ են՝* ես, ինքս, դու, ինքդ, նա, ինքը:

1. Ես, ինքս я, я сам *կոչվում են առաջին դեմքի անձնական դերանուն, քանի որ խոսողը դնում է իր անվան փոխարեն.*

*օրինակ՝*

—Ես որոշել եմ գերազանցիկ լինել,—ասում է Պետիկը:

Ես *բառը* Պետիկը *գործ է ածում իր անվան փոխարեն:*

2. Դու, ինքդ ты, ты сам *բառերը կոչվում են երկրորդ դեմքի անձնական դերանուններ, քանի որ խոսողը գործ է ածում խոսակցի, այսինքն՝ այն անձի անվան տեղ, որին դիմում է ինքը՝ խոսողը.*

*օրինակ՝*

— Դու մեզ մի՛ խանգարիր,—ասում է Պետիկը Կիմիկին:

*Այս նախադասության մեջ* դու *բառը գործ է ածվում Կիմիկի անվան փոխարեն, քանի որ նրան է դիմում Պետիկը:*

3. Նա, ինքը он, он сам *բառերը կոչվում են երրորդ դեմքի անձնական դերանուն, քանի որ գործ են ածվում ոչ խոսողի և ոչ էլ խոսակցի, այլ մի երրորդ անձի անվան փոխարեն, որի մասին խոսում են.*

*օրինակ՝*

Ուսուցիչը խոսում է: Նա պատմում է Լենինի մասին:

*Այս խոսքի մեջ* նա *դերանունը գործ է ածվում* ուսուցիչը *գոյականի փոխարեն:*



*Անձնականն առանձնապես շեշտելու համար հաճախ գործ են ածվում* ես ինքս, դու ինքդ, նա ինքը:

*Անձնական դերանունները ինքնին միշտ որոշյալ են, թեև որոշող հոդ չեն ստանում. այդ պատճառով էլ նրանց հայցականը միշտ նման է տրականին:*

*Անձնական դերանունները նախադասության մեջ գործ են ածվում որպես ենթակա (օրինակ՝ Նա գնաց), որպես ստորոգյալ կազմող բառ (օրինակ՝ Գագիկը նա է) և որպես լրացում (օրինակ՝ Ես տեսա նրան):*

— *ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 260: Գտնել և որոշել անձնական դերանունների դեմքը և հոլովը: Ցույց տալ, թե որպես ինչ են գործածված:*

## ՍՏԱԼԻՆԻ ՆԿԱՐԻ ԱՌԱՋ

*Ես կանգնած եմ պատկերիդ դեմ*
*Եվ նայում եմ, նայում անվերջ,*
*Եվ իմ գալիք կյանքն եմ տեսնում*
*Քո խորն ու ջինջ աչքերի մեջ:*

*Եվ կարծես թե ամեն անգամ*
*Դու ժպտում ես ու ինձ ասում.*
*— Լա՛վ սովորիր, խելոք որդյակ,*
*Որ չմնաս դու անուսում:*

*Անձնական դերանունների սեռական հոլովը (իմ, քո, մեր, ձեր) կոչվում է* ստացական *դերանուն* (притяжательное местоимение):

Անձնական դերանունների հոլովումը

| Թիվ | Հոլով | I դեմք | II դեմք | III դեմք |
|---|---|---|---|---|
| Եզակի | Ուղղ. | ես, ինքս | դու, ինքդ | նա, ինքը |
| | Սեռ. | իմ | քո | նրա, իր, յուր |
| | Տր. | ինձ | քեզ | նրան, իրեն |
| | Հայց. | ինձ | քեզ | նրան, իրեն |
| | Բաց. | ինձնից, ինձանից | քեզնից, քեզանից | նրանից, իրենից |
| | Գործ. | ինձնով, ինձանով | քեզնով, քեզանով | նրանով, իրենով |
| | Ներգ. | ինձնում, ինձանում | քեզնում, քեզանում | նրանում, իրենում |
| Հոգնակի | Ուղղ. | մենք, ինքներս | դուք, ինքներդ | նրանք, իրենք |
| | Սեռ. | մեր | ձեր | նրանց, իրենց |
| | Տր. | մեզ | ձեզ | նրանց, իրենց |
| | Հայց. | մեզ | ձեզ | նրանց, իրենց |
| | Բաց. | մեզնից, մեզանից | ձեզնից, ձեզանից | նրանցից, իրենցից |
| | Գործ. | մեզնով, մեզանով | ձեզնով, ձեզանով | նրանցով, իրենցով |
| | Ներգ. | մեզնում, մեզանում | ձեզնում, ձեզանում | նրանցում, իրենցում |



*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 261։ Գտնել անձնական դերանունները, ցույց տալ նրանց դեմքը, թիվը և հոլովը։*

*Դու քաղցր ես, հող իմ հայրենի,*
*Չկա քեզնից պայծառ անուն,*
*Բայց վտանգի ահեղ ժամին,*
*Երբ սպառնում է թշնամին,*
*Դու ավելի ես քաղցրանում։*
*Դու տվել ես ինձ կյանք, արյուն,*
*Ա՛ռ իմ արյունը քեզ։*
*Ես դեմ կերթամ քո թշնամուն,*
*Որ դու պայծառ ապրես։*

(Ն. Զարյան)

## § 76. ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

### Указательные местоимения

**Ցուցական դերանունները մատնացույց են անում առարկա, հատկություն, թիվ կամ գործողության ու եղելության հատկանիշ։**

*Օրինակ՝*

Սա մի ջանասեր աշակերտ է:

*Ցուցական դերանուններն են՝* սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, մյուս, այսպես, այդպես, այնպես, նույնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, նույնչափ, այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ:

*Ցուցական դերանունները խոսքի մեջ գործ են ածվում որպես ենթակա (օրինակ՝ մի օր* սա *եկավ), որպես լրացում (օրինակ՝* սրա *խոսքին հավատա), որպես ստորոգյալ կազմող (օրինակ՝ մեր սիրելի գիրքն* այս *է)։*

Սա, դա, նա *հաճախակի գործ են ածվում նաև իրերի անունների փոխարեն և այդ դեպքում հայցականը լինում է նույնպես* սա, դա, նա:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 262։ Կազմեցե՛ք նախադասություններ՝ գործածելով բոլոր ցուցական դերանունները։*

## Ցուցական դերանունների հոլովումը

| Թիվ | Հոլով | Անձ | | | Իր | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Եզակի | Ուղղ. | սա | դա | նա | այս | այդ | այն |
| | Սեռ. | սրա | դրա | նրա | սրա | դրա | նրա |
| | Տր. | սրան | դրան | նրան | սրան | դրան | նրան |
| | Հայց. | սրան | դրան | նրան | այս | այդ | այն |
| | Բաց. | սրանից | դրանից | նրանից | սրանից | դրանից | նրանից |
| | Գործ. | սրանով | դրանով | նրանով | սրանով | դրանով | նրանով |
| | Ներգ. | սրանում | դրանում | նրանում | սրանում | դրանում | նրանում |
| Հոգնակի | Ուղղ. | սրանք | դրանք | նրանք | սրանք | դրանք | նրանք |
| | Սեռ. | սրանց | դրանց | նրանց | սրանց | դրանց | նրանց |
| | Տր. | սրանց | դրանց | նրանց | սրանց | դրանց | նրանց |
| | Հայց. | սրանց | դրանց | նրանց | սրանք | դրանք | նրանք |
| | Բաց. | սրանցից | դրանցից | նրանցից | սրանցից | դրանցից | նրանցից |
| | Գործ. | սրանցով | դրանցով | նրանցով | սրանցով | դրանցով | նրանցով |
| | Ներգ. | սրանցում | դրանցում | նրանցում | սրանցում | դրանցում | նրանցում |



## § 77. ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

### Вопросительные местоимения

**Հարցական դերանունները արտահայտում են հարցում առարկայի, որպիսության, թվի և գործողության հանգամանքների մասին:**

*Օրինակ՝*

Այստեղ ո՞վ է ինձ կանչում:
Ինչպիսի՞ գիրք ես առել:
Քանի՞ հոգի եք:

*Հարցական դերանունները են՝* ո՞վ, ի՞նչ, ո՞ր, քանի՞, որքա՞ն, որչա՞փ, ի՞նչ չափ, որպե՞ս, որպիսի՞, ինչպիսի՞, քանի՞երորդ, որտե՞ղ, ո՞ւր, ե՞րբ, ինչո՞ւ:

*Հարցական դերանունները գործ են ածվում հարցական նախադասությունների մեջ և լինում են ենթակա, ստորոգյալ կազմող բառ և լրացում.*

*օրինակ՝*

Ո՞վ է բերել գիրքը (ո՞վ՝ ենթակա):
Ո՞ւմ է կանչում նա (ո՞ւմ՝ լրացում):
Դու ո՞վ ես (ո՞վ՝ ստորոգյալ կազմող բառ):

*Հարցական դերանունները ունենում են հարցական նշան (՞):*

*Նույն դերանունները առանց հարցի կոչվում են* հարաբերական (относительные):

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 263: Արտագրել դերանունները և որոշել դրանց տեսակը, հոլովը և թիվը: Որոշել նաև՝ նախադասության ինչ անդամներ են դերանունները:*

## ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄԱՐԴԸ

*Մի հզոր առյուծ նստել էր ճանապարհին: Գազանները գալիս էին, դողալով անցնում այդ ճանապարհով:*

*Առյուծը հարցրեց նրանց.*

*— Ինչու եք փախչում, այդ ում անից եք գարհուրած փախչում:*

Նրանք պատասխանեցին.

— Դու էլ փախի՛ր, որովհետև ահա գալիս է մարդը։

Առյուծն ասաց.

— Ո՞վ է մարդը, ի՞նչ է նա, ո՞րն է նրա ուժը և ի՞նչ կերպարանք ունի նա, որ փախչում եք նրանից։

Նրանք պատասխանեցին.

— Կգա, քեզ կտեսնի և վա՜յ քո օրին։

Ահա հանդից գալիս է մի հողագործ մարդ։

Առյուծն ասաց նրան.

— Միթե դու ես այն մարդը, որ փախցնում ես գազաններին.

Նա ասաց.

— Այո, ես եմ։

Առյուծն ասաց։

— Արի կռվենք.

Մարդն ասաց.

— Լա՜վ, կռվենք, բայց քո զենքերը քո վրա են, իսկ իմը՝ տանն են, արի նախ քեզ կապեմ, որպեսզի չփախչես, մինչև ես գնամ, զենքերս վերցնեմ գամ ու պա կռվենք։

Առյուծն ասաց.

— Լա՛վ, կապի՛ր ինձ, շուտ գնա և ե՛տ դարձիր։

Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ կապեց կաղնի ծառին. մի մեծ փայտ կտրեց ծառից և սկսեց խփել առյուծին։

Առյուծը բացագանչեց.

— Եթե դու մարդն ես, ավելի ամո՛ւր ու ավելի անխնա խփիր իմ կողերին, որովհետև իմ խելքին այդ է արժանի։

(Այգեկցի)



## § 78. ՀՈԴ—артикль

**Որոշյալ առումով գոյականները, դերանուններից մի քանիսը և գոյականաբար գործածվող բառերը ստանում են ստացական կամ որոշող հոդ։**

1. Ստացական հոդերն են ս, դ, ը, ն, որոնք ունեն հատկացական նշանակություն (смысл принадлежности) և փոխարինում են իմ, քո, նրա, և իր դերանուններին։

օրինակ՝

Գիրքդ բաց արա։

Գիրքս ընկավ. գրքերս կորան. գրքերդ վերցրու, հռչակը (նրա) տարածվել է աշխարհով մեկ։

**Գիրքս, գիրքդ, գրքերս, գրքերդ, հռչակը** ձևերը կարելի է փոխարինել «իմ գիրքը», «իմ գրքերը», «քո գրքերը», «նրա հռչակը» ձևերով։

2. Որոշող հոդն է ը կամ ն, որ դրվելով բառի վրա, արտահայտում է առարկայի որոշ կամ ծանոթ լինելը.

օրինակ՝

Այս գիրքը քոնն է։ Այդ բարդին բարձրահասակ է։

Բաղաձայնով վերջավորվող բառերը ստանում են ը հոդը, իսկ ձայնավորով վերջավորվողները՝ ն հոդը.

օրինակ՝

մատիտը, թուղթը, բայց՝ կատուն, գինին, Մարոն և այլն։

Երբ որոշյալ բառին հաջորդող բառն սկսվում է ձայնավորով կամ սպ, ստ, սկ, սթ, սք, զգ, զբ, շտ, սփ երկբաղաձայնով և նրանցից առաջ արտասանվում է թույլ ը, նախորդ բառի ը որոշող հոդը հաճախ դառնում է ն.

օրինակ՝

Գիրքն ընկավ։ Սոնիկն ասաց։ Պետիկն ստացավ մի գիրք։ Աշակերտն զբոսնում էր։

*Կարելի է նաև ը հոդը չփոխարինել ն հոդով, հատկապես այն դեպքում, երբ խոսքի մեջ բառերը դանդաղ են հաջորդում միմյանց։*

*Հայերեն հոդերը կարող են գործածվել նաև ցուցական իմաստով.*

*օրինակ՝*

Ամսույս 25-ին, *այսինքն՝* այս ամսի 25-ին։

*Ս, դ հոդերը կարող են գործածվել նաև անձնական դերանունների փոխարեն. այդ դեպքում նրանք կոչվում են* դիմորոշ.

*օրինակ՝*

Մենք՝ ուսուցիչներս, դուք աշակերտներդ...

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 264։ Գտնել հոդերը և ցույց տալ, թե ինչի փոխարեն են դրված.*

*— Կուրծքս սարալանջ,*
*Մեջքս թիկնավետ,*
*Ե՞րբ գամ գերանդով*
*Զափվելու քեզ հետ։*
*Մի՛ դժգոհիր, դաշտ,*
*Քեզ չե՛մ խնայի,*
*Ատլաս զգեստից,*
*Երգից չե՛մ նայի։*
*Ջնջուն գերանդով*
*Խոտդ կհարեմ,*
*Սիրուն շարքերով*
*Լասեր կշարեմ։*
*Ու վերջին օրը*
*Հողդ կպաչեմ.*
*«Շեն ես, շե՛ն մնաս»*
*Սրտանց կկանչեմ։*

(Խնկո-Ապեր)



# ԲԱՅ – ГЛАГОЛ

## § 79. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

**Մի բան անել կամ լինել ցույց տվող բառերը կոչվում են բայ։**

*Օրինակ՝*

բերել, տանել, կարմրել, մեծանալ։

Նա գրեց, նա կարմրեց, նա մեծացավ, ծաղիկը բացվելու է *և այլն։*

Բայերը *պատասխանում են* ի՞նչ անել, *(արել է, արեց և այլն) կամ* ի՞նչ լինել *(եղել է, եղավ) հարցերին։ Խոսքի մեջ բայերը գործ են ածվում երկու ձևով՝*

Անդեմ (неличные) *կամ* դերբայական *և* դիմավոր (личные)։

*Խոսքի մեջ բայի փոփոխությունը դերբայական և դիմավոր ձևերով կոչվում է* խոնարհում։

## § 80. ԴԵՐԲԱՅՆԵՐ ԿԱՄ ԲԱՅԻ ԱՆԴԵՄ ՁԵՎԵՐ

### Неличные формы глагола

**Դերբայներ կոչվում են բայի անդեմ ձևերը։**

*Դերբայները ցույց են տալիս գործելու կամ լինելու գաղափար, մի քանիսը նաև գործելու կամ լինելու ժամանակ։*

*Օրինակ՝*

խոսել, գնացել, սովորում, քնած, լողալ *և այլն։*

*Հայերեն գրական լեզվի մեջ գործ են ածվում յոթ դերբայներ. դրանք են՝*

Անորոշ *դերբայ*՝ խմել, կարդալ
Անկատար *դերբայ*՝ խմում, կարդում
Ապառնի *դերբայ*՝ խմելու, կարդալու
Վաղակատար *դերբայ*՝ խմել, կարդացել
Հարակատար *դերբայ*՝ խմած, կարդացած
Ենթակայական *դերբայ*՝ խմող, կարդացող
Ժխտման *դերբայ*՝ (չեմ) խմի, (չես) կարդա

## § 81. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

### Неопределенная форма глагола

**Անորոշ դերբայը ցույց է տալիս գործելու կամ լինելու ընդհանուր գաղափարը:**

Անորոշ *դերբայը պատասխանում է* ի՞նչ անել *կամ* ի՞նչ լինել *հարցերին։*

*Օրինակ՝*

լսել, գնալ, գրել, կարդալ, հզորանալ, ծաղկել, ամրանալ *և այլն։*

*Անորոշ դերբայն ունենում է* ել *կամ* ալ *վերջավորություն* (окончание), լ *բաղաձայնը անորոշ դերբայի բուն* վերջավորությունն է, ե *և* ա *ձայնավորները* խոնարհիչներ են (признаки спряжения):

*Բոլոր այն բայերը, որոնք անորոշ դերբայում ունեն «ե» խոնարհիչը, կոչվում են «ե» խոնարհման բայեր* (глаголы первого спряжения)։

*Օրինակ՝*

խոսել, գրել, կտրել, կակղել, թափել *և այլն։*

*Բոլոր այն բայերը, որոնք անորոշ դերբայում ունեն «ա» խոնարհիչը, կոչվում են «ա» խոնարհման բայեր* (глаголы второго спряжения):



*Օրինակ՝*

գնալ, մնալ, կարդալ, աղալ *և այլն։*

*Որևէ բայ անվանելու համար ասվում է նրա* անորոշ դերբայը:

*Օրինակ՝*

վազեց—վազել, խաղում է—խաղալ:

*Անորոշ դերբայը հոլովվում է գոյականի նման և նախադասության մեջ կարող է լինել թե ենթակա, թե ստորոգյալ կազմող բառ և թե լրացում։*

*Օրինակ՝*

Շատ կարդալը օգուտ է տալիս (կարդալ *ենթակա*):

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 265. Կազմել նախադասություններ և հետևյալ անորոշ դերբայները գործածել իբրև ենթակա, իբրև լրացում և իբրև ստորոգյալ.*

*ծաղկել, նետել, պատմել, խոսել։*

## § 82. ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

### Деепричастие настоящего времени

**Անկատար դերբայը ցույց է տալիս ընթացքի մեջ գտնվող գործողություն կամ եղելություն:**

*Օրինակ՝*

գրում, քայլում:

*Անկատար դերբայը նախադասության մեջ առանձին և անկախ չի գործածվում, այլ օժանդակ բայի հետ (եմ, ես, է և այլն) կազմում է ստորոգյալ։*

*Օրինակ՝*

Նա գրում է նամակ:
Արան կարդում է իր գրածը:

*Անկատար դերբայի վերջավորությունն է* ում. *անկատար դերբայն ունի նաև* ելիս, ալիս *վերջավորությունները։*

*օրինակ՝*

խոսելիս, տեսնելիս, մտնելիս, կարդալիս *և այլն։*

*Այդ դերբայները ցույց են տալիս կողմնակի գործողություն, որի ընթացքում կատարվում է գլխավոր գործողությունը.*

*օրինակ՝*

*Դպրոց* մտնելիս *գլխարկներս հանում ենք։*

Գալ, լալ, տալ *բայերի անկատար դերբայն ունի միայն* ալիս *վերջավորություն (գալիս, լալիս, տալիս)։*

## § 83. ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ
## Деепричастие будущего времени

**Ապառնի դերբայը ցույց է տալիս կատարելիք գործողություն կամ եղելություն։**

*Օրինակ՝*

լսելու, գնալու, սովորելու *և այլն։*

*Ապառնի դերբայը նախադասության մեջ գործ է ածվում որպես ստորոգյալ կազմող բառ (ստանում է օժանդակ բայ)։*

*օրինակ՝*

Գալու է համաշխարհային Հոկտեմբերը։

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 266։ Գտնել անկատար դերբայները և կազմել այդ բայերի ապառնի դերբայները։ Կազմել մյուս բայերի անկատար դերբայը։*

## ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ
### (Ժողովրդական հեքիաթ)

*Առյուծը ծերացել էր, թաթերը թուլացել էին, ատամները թափվել էին, էլ չէր կարողանում որս բռնել։ Նա մտածեց խորամանկությամբ որս ճարել, պառկեց քարայրում ու հիվանդ ձևացավ։ Գազանները գալիս էին նրան տեսության։ Բայց ոչ ոք ետ չէր դառնում։ Առյուծը բռնում էր նրանց և ուտում։*



*Եկավ նաև աղվեսը, կանգնեց քարայրի մուտքի առջև և հարցրեց.*

*— Ինչպե՞ս է առողջությունդ։*

*Առյուծը պատասխանեց.*

*— Վատ է. ինչո՞ւ ներս չես գալիս, բարեկամս։*

*Աղվեսը պատասխանեց.*

*— Կգայի, բայց տանդ շուրջը թողած հետքերը ուրիշ բան են ասում. շատերն են ներս մտել, իսկ ոչ ոք դուրս չի եկել։*

## § 84. ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ
## Деепричастие прошедшего времени

**Վաղակատար դերբայը ցույց է տալիս անցյալում կատարված վերջացած գործողություն կամ եղելություն։**

*Օրինակ՝*

գրել, կարդացել, լսել, գնացել *և այլն։*

*«Ե» խոնարհման կանոնավոր բայերի վաղակատար դերբայը նման է անորոշին.*

*օրինակ՝*

| Վաղակատար դերբայ | Անորոշ դերբայ |
|---|---|
| գրել (եմ) | գրել |
| խոսել (եմ) | խոսել |

*«Ա» խոնարհման բայերինը տարբեր են.*

*օրինակ՝*

| Վաղակատար դերբայ | Անորոշ դերբայ |
|---|---|
| գնացել | գնալ |
| կարդացել | կարդալ |
| աղացել | աղալ |

*Վաղակատար դերբայը նախադասության մեջ առանձին և անկախ չի գործածվում, այլ օժանդակ բայի հետ (եմ, ես և այլն) կազմում է ստորոգյալ։*

*Օրինակ՝*

Ես կարդացել եմ «Անուշ» պոեմը: Օնիկը սովորել է իր դասերը:

*Վաղակատար դերբայի վերջավորությունն է* ել, ացել *կամ* եցել:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 267. Գտեք վաղակատար դերբայական ձևերը:*

## ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

*Մեծ է մեր Հայրենիքը: Նրա բնակչությունը բաղկացած է տարբեր ժողովուրդներից, որոնք կազմում են ազգերի մի մեծ ընտանիք, մի մեծ սովետական ժողովուրդ: Այդ ընտանիքի ամենամեծ եղբայրը ռուս ժողովուրդն է: Մեր Հայրենիքը փորձել են նվաճել շատերը, բայց միշտ ջախջախվել են: Գերմանական շուն ասպետները, շվեդները, Նապոլեոնը զանազան ժամանակներում հարձակվել են մեր երկրի վրա, բայց ռուս մեծ ժողովուրդը բոլորին ջախջախել է և դուրս է քշել իր երկրից: Ռուս մեծ ժողովուրդը՝ միացած իր բոլոր եղբայր ժողովուրդների հետ, ջախջախեց նաև ֆաշիստական օկուպանտներին և մաքրեց մեր հայրենի երկիրը նրանցից:*

## § 85. ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ
### Причастие прошедшего времени

**Հարակատար դերբայը ցույց է տալիս անցյալում կատարված մի գործողություն, որ դարձել է հատկություն** *(հատկանիշ կամ անցողիկ)*:

*Օրինակ՝*

լսաց, քնած, կարդացած, գնացած *և այլն:*

*Հարակատար դերբայը նախադասության մեջ գործ է ածվում որպես ստորոգյալ կազմող բառ (օժանդակ բայի հետ միասին).*

*Օրինակ՝*

Նստած եմ մի օր ու միտք եմ անում...

(Հովհ. Թումանյան)

*Հարակատար դերբայը նախադասության մեջ գործ է ածվում նաև որպես ենթակա և որպես լրացում.*

*օրինակ՝*

Ասածդ (ենթակա) կատարվեց:
Կարդացած (լրացում) գիրքդ դեռ պետք կգա:

*Հարակատար դերբայի վերջավորությունն է* ած, ացած *կամ* եցած *(գրած, գնացած, վախեցած):*

## § 86. ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ
### Подлежащее причастие

**Ենթակայական դերբայը ցույց է տալիս գործողություն կատարող կամ այդ հատկությունն ունեցող:**

*Օրինակ՝*

լսող, կարդացող, գնացող *և այլն:*

*Ենթակայական դերբայը նախադասության մեջ գործ է ածվում որպես ենթակա, որպես լրացում և որպես ստորոգյալ կազմող բառ (եմ, ես, է... բայի օգնությամբ).*

*օրինակ՝*

Կարդացողը (ենթակա) գիտուն կլինի:
Կարդացող (լրացում) աշակերտը շատ բան կիմանա:
Նա լավ կարդացող է (ստորոգյալ):

*Ենթակայական դերբայի վերջավորությունն է* ող, ացող *կամ* եցող *(գրող, գնացող, մտեցող):*

## § 87. ԺԽՏՄԱՆ ԴԵՐԲԱՅ—негативное деепричастие

**Ժխտման դերբայը ցույց է տալիս ժխտման ենթակա կատարելիք գործողություն կամ եղելություն:**

*Օրինակ՝*

կարդա, գրի (չեմ կարդա, չես կարդա, չի կարդա...
չեմ գրի, չես գրի, չի գրի...):

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 268: Աղյուսակում տրված եղանակով կազմեցեք բայերի դերբայական բոլոր ձևերը:*

| Անորոշ | Անկատար | Ապառնի | Վաղակատար | Հարակատար | Ենթակայական | Ժխտման |
|---|---|---|---|---|---|---|
| հավաքել | հավաքում | հավաքելու | հավաքել | հավաքած | հավաքող | հավաքի |

խաղալ, բռնել, լռել, աղալ, վազել, քայլել, դողալ, գնալ:

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 269: Գտեք դերբայները և որոշեցեք նրանց տեսակները:*

### ՄՈՍԿՎԱ

*Մոսկվան մեր մեծ հայրենիքի կենտրոնն է:*

*Ամեն օր տարբեր կողմերից Մոսկվա են գալիս շատ գնացքներ: Մարդիկ Մոսկվա են գալիս, որպեսզի պատմեն իրենց աշխատանքի մասին և իմանան, թե ինչպես կարելի է լավ աշխատել:*

*Եվ Մոսկվան ամեն րոպե պատրաստ է ընդունելու այդ բազմահազար այցելուներին:*

*Կայարանների առջև, հրապարակներում պատրաստ շարված են տաքսիները, որոնք իսկույն մոտենում են հյուրերին, որպեսզի նրանց տանեն այնտեղ, ուր անհրաժեշտ է: Այնքան շատ են ավտոմեքենաները, որ*



*շատ անգամ նրանք անցնում են խմբեր կազմած: Չնայած դրան, փողոցներում խիստ կարգ ու կանոն է տիրում:*

*Փողոցները ուղիղ են ու լայն, իսկ շենքերը՝ բազմահարկ: Շատ փողոցներ այնքան լայն են, որ նրանց մեջտեղով կանաչ պուրակներ են ձգվում:*

*Սքանչելի է Մոսկվայի մետրոն, նրա մարմարյա կայարանների շարժվող աստիճանները աննման են: Սակայն ամենից գեղեցիկը Կրեմլն է: Երբ արև է լինում, նրա շողերի տակ ցոլցլում են Կրեմլի շենքի պղնձյա գմբեթները: Կրեմլի պարսպի ներսում սպիտակ շենքեր են բարձրանում:*

*Կրեմլի պատերի մոտ է* Լենինի *և* Ստալինի *դամբարանը:*

*Ով գալիս է Մոսկվա, աշխարհի ոչ ծայրից էլ լինի, նա իր առաջին պարտքն է համարում այցելել հանճարեղ Լենինի և Ստալինի դամբարանը:*

*Այնտեղ, խոնարհած դրոշների տակ, միշտ թարմ ծաղիկների մեջ, հանգչում են մեծ Լենինը և Ստալինը: Նրանց աջ ու ձախ կողմերում պատվո պահակներ են կանգնած:*

*Դամբարանից քիչ հեռու Լենինի թանգարանն է: Մեծ և հզոր է Մոսկվան: Երբ մարդ ծանոթանում է այդ քաղաքին, նրա սիրտը լցվում է հպարտությամբ, և նա բացագանչում է.*

*«Թող հավերժ ապրի մեր մեծ Հայրենիքը, թող հավերժ կանգուն մնա սիրելի Մոսկվան»:*

(Ա.Ն. Սաճինյան)

## § 88. ԴԵՄՔ—лицо

Բայի դիմավոր ձևը ունենում է երեք դեմք։

1. Առաջին դեմքը *ցույց է տալիս խոսողի գործողությունը կամ եղելությունը։*

*Օրինակ՝*

գրեցի (ես), կարդացի (ես), նստել եմ (ես) *և այլն։*

2. Երկրորդ դեմքը *ցույց է տալիս խոսակցի գործողությունը կամ եղելությունը։*

*Օրինակ՝*

գրեցիր (դու), կարդացիր (դու), նստել ես (դու) *և այլն։*

3. Երրորդ դեմքը *ցույց է տալիս ոչ խոսողի և ոչ էլ խոսակցի, այ մի ուրիշ տարրկայի գործողությունը կամ եղելությունը, որի մասին խոսվում է։*

*Օրինակ՝*

գրեց (նա), կարդաց (նա), նստել է (նա) *և այլն։*

## § 89. ԹԻՎ—число

*Դեմքի հետ միասին բայի եղանակային ձևը ցույց է տալիս նաև թիվը, այսինքն՝ թե գործող կամ լինող անձը մե՞կ է, թե՞ մեկից ավելի։*

*Օրինակ՝*

գրեմ, գրիր, գրեց, գրի, գրում է։

*Այս ձևերից հայտնի է դառնում, որ գրողը մի հոգի է, մինչդեռ՝*

գրեցին, գրեն, գրում են *ձևերից երևում է, որ գրելու գործողություն կատարողները մեկից ավելի են։*

*Բայն ունի երկու թիվ՝* եզակի թիվ (единственное число) *և* հոգնակի թիվ (множественное число)։



**Երբ բայը ցույց է տալիս, որ գործող կամ լինող անձը մեկ հոգի է, բայի թիվը եզակի է, իսկ երբ գործող կամ լինող անձերը մեկից ավելի են, բայի թիվը հոգնակի է։**

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 270։ ա) Որոշել բայերի դեմքը և թիվը։ բ) Որոշել դերբայների տեսակները։*

## ԾԻՏՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԸ

*Մի անգամ բակում կանգնած նայում էի մեր տանիքի տակ շինված ծիծեռնակի բնին։*

*Հենց այդ ժամանակ երկու ծիծեռնակներն էլ թռան, և բույնը դատարկ մնաց։*

*Տանիքից մի ծիտ թռավ, եկավ նստեց բնի եզրին, ապա արագ բնի մեջ մտավ։*

*Հետո բնից գլուխը հանեց ու ծլվլաց։*

*Քիչ հետո ծիծեռնակներից մեկը եկավ ու բույնը մտավ, բայց երբ անկոչ հյուրին տեսավ, ծղրտաց, թևերը թափահարեց ու թռավ գնաց։*

*Ծիտը բնում նստած ծլվլում էր։*

*Մեկ էլ հանկարծ մի խումբ ծիծեռնակներ եկան. բոլորն էլ մոտեցան բնին, կարծես ծտին տեսնելու համար ու էլի թռան, գնացին։*

*Ճնճղուկը չվախեցավ. գլուխը դեսուդեն էր դարձնում ու ծլվլում էր։*

*Ծիծեռնակները էլի եկան, մոտեցան բնին, ինչ-որ բան արին ու էլի թռան, գնացին։*

*Նրանցից ամեն մեկը կտուցով ցեխ էր բերում և կամաց-կամաց բնի անցքը ծեփում։*

*Էլի գնացին, էլի եկան ծիծեռնակները, ավելի ու ավելի ծեփեցին, անցքը փոքրանում էր ու փոքրանում։*

*Ծիծեռնակները բնի անցքը բոլորովին ծեփեցին և սկսեցին ծղրտալով տան շուրջը պտտվել։*

## § 90. ԺԱՄԱՆԱԿ—время

*Բայի ժամանակը ցույց է տալիս ենթակայի գործողության կամ եղելության ժամանակը։*

*Բայի հիմնական ժամանակները երեք են՝* ներկա, անցյալ *և* ապառնի։

**1. Ներկա ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կամ եղելությունը սկսվել է և խոսելու վայրկյանին դեռ շարունակվում է։**

*Օրինակ՝*

գրում եմ, կարդում եմ քո գիրքը։

**2. Անցյալ ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կամ եղելությունը տեղի է ունեցել խոսելու վայրկյանից առաջ։**

*Օրինակ՝*

գրում էի, գրեցի, կարդացել էի քո գիրքը։

**3. Ապառնի ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կամ եղելությունը տեղի է ունենալու խոսելու վայրկյանից հետո։**

*Օրինակ՝*

գրելու եմ, կարդալու եմ։

*Ներկան, անցյալը և ապառնին կարող են լինել բազմաթիվ։ Այսօրվա համեմատությամբ երեկն անցյալ է, իսկ նախանցյալ օրը՝ ավելի վաղանցյալ է, 3-րդ, 4-րդ, 5-րդ օրերն է՛լ ավելի վաղ անցյալ են, քան նախանցյալ օրը։ Նույնը և ապառնին. վաղը այսօրվա համեմատությամբ ապառնի է, այսօրը երեկվա համեմատությամբ նույնպես ապառնի է, երեկը նախանցյալ օրվա համեմատությամբ նույնպես ապառնի է։ Այդ իսկ պատճառով ներկա, անցյալ և ապառնի ժամանակները մի քանի տեսակ են լինում։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 271։ Ուշադիր կարդալ, գտնել բայերի դիմավոր ձևերը և որոշել նրանց ժամանակը։*

*Դաշտում թողնելով գարնանացանը շարունակող տղաներին՝ բրիգադիր Ենոքը քայլերն ուղղեց դեպի գյուղ։ Հարկավոր էր հանդիպել կոլտնտեսության նախագահին և լուծել սերմացուի պակասի հարցը։*



*Գարնան արևը դեռ նոր մայրամուտ էր թեքվել, ու դաշտում փռվել էր դուրեկան հովը։*

*Վարած արտերից բարձրացող հողի թարմ բույրը տարածվել էր շուրջը, և Ենոքին թվում էր, թե հիմա հենց հողն է շնչում, որ հողն առողջ է, երիտասարդ, ինչպես ինքը։*

*Ինչ-որ մի երգ մռմռալով, բրիգադիրը դանդաղ շարժվում էր առաջ։*

*Հասնելով ճանապարհի եզրին վեր բարձրացած մենավոր ծառին՝ Ենոքը մի պահ կանգ առավ, հետո նստեց ծառի տակ և հայացքը ներքևում փռված գյուղին հառեց։*

*Գեղեցիկ էր գյուղն այստեղից. ամբողջովին ծառերի մեջ թաղված, նրա կղմինդրյա տանիքներ ունեցող տներն ասես կակաչի պես բարձրացել էին հենց նոր երևացող կանաչի մեջ ու մայր մտնող արևի ճառագայթներից փայլում էին հիմա, պսպղում, կարծես արևը ջրերին էր ընկել՝ փրփրաբաշ, խոյացող ջրերին։*

*Ամեն ինչ խաղաղ էր հիմա այնտեղ՝ գյուղում. աշխատող ձեռքը դուրս էր եկել դաշտ, և ոչ ոք չէր վրդովում նրա անդորրը։*

*Հիմա գարնանացան է, և գյուղը՝ կոլտնտեսությունը, միայն դրա մասին էր մտածում։*

*Ենոքը զմայլված դիտում էր շուրջը, և երգը, որ դեռ նրա շրթունքներին էր, գարնան հովի հետ տարածվում էր չորս բոլորը, գնում էր հեռու-հեռուները։*

*Գեղեցիկ էր գարունը, գեղեցիկ էր կյանքը։*

(Գ. Բես. «Բրիգադիր Ենոքը»)

## § 91. ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

### Утвердительное спряжение

*Բայի հաստատական կամ դրական բնույթի խոնարհումը կատարվում է կամ պարզ ձևով, օրինակ՝* գրեցի, գրիր, գրեմ, *կամ* դերբայով *և* եմ *բայով, օրինակ՝* գրում եմ:

*Բայի խոնարհումը կատարվում է հետևյալ եղանակներում՝* սահմանական, հրամայական, ըղձական, պայմանական *կամ* ենթադրական *և* հարկադրական:

## § 92. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

### Изъявительное наклонение

**1. Սահմանական եղանակի ձևերը ցույց են տալիս ստույգ կատարվող, կատար(վ)ելիք կամ կատար(վ)ած գործողություն:**

*Օրինակ՝*

Մի օր գնացի դպրոց և հանդիպեցի անծանոթի:

*2. Սահմանական եղանակն ունի ինը ժամանակ՝* ներկա (настоящее время), անցյալի անկատար (прошедшее несовершенное время), ապառնի (будущее время), անցյալի ապառնի (будущее прошедшего времени), վաղակատար (давнопрошедшее время), անցյալի վաղակատար (давнопрошедшее прошедшего времени), հարակատար (прошедшее результативное время), անցյալի հարակատար (результативное прошедшего времени) *և* անցյալ կատարյալ (прошедшее совершенное время):

*Սահմանական եղանակի ժամանակների մեծ մասի կազմության մեջ մասնակցում է օժանդակ բայը:*

Օժանդակ բայ *է կոչվում «եմ» բայը, երբ նախադասության մեջ միանալով զանազան բառերին կամ դերբայներին կազմում է ստորոգյալ:*

*Օրինակ՝*

Աշակերտը սովորում է դասը *(ստորոգյալ է օժանդակ բայը անկատար դերբայի հետ):*



Կոստյան գնացել է տուն *(ստորոգյալ է օժանդակ բայը վաղակատար դերբայի հետ):*

Իմ բոլոր գնահատականները նշանակված են *(ստորոգյալ է օժանդակ բայը հարակատար դերբայի հետ):*

## § 93. ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

### Спряжение вспомогательного глагола

| *Ներկա* | | *Անցյալ* | |
|---|---|---|---|
| *Եզակի* | *Հոգնակի* | *Եզակի* | *Հոգնակի* |
| *եմ* | *ենք* | *էի* | *էինք* |
| *ես* | *եք* | *էիր* | *էիք* |
| *է* | *են* | *էր* | *էին* |

*Սահմանական եղանակի* ներկա, անցյալի անկատար, ապառնի, անցյալի ապառնի, վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար *ժամանակները կազմվում են խոնարհվող բայի համապատասխան դերբայի և օժանդակ բայի ներկա ու անցյալ ժամանակների բարդությամբ և կոչվում են* բաղադրյալ ժամանակներ. օրինակ՝

| Դերբայ | Օժանդակ բայ | Սահմանական եղանակի ժամանակ |
|---|---|---|
| *անկատար՝ խմում* | *ներկա՝ եմ* | *ներկա՝ խմում եմ* |
| *անկատար՝ խմում* | *անցյալ՝ էի* | *անցյալի անկատար՝ խմում էի* |
| *ապառնի՝ խմելու* | *ներկա՝ եմ* | *ապառնի՝ խմելու եմ* |
| *ապառնի՝ խմելու* | *անցյալ՝ էի* | *անցյալի ապառնի՝ խմելու էի* |
| *վաղակատար՝ խմել* | *ներկա՝ եմ* | *վաղակատար՝ խմել եմ* |
| *վաղակատար՝ խմել* | *անցյալ՝ էի* | *անցյալի վաղակատար՝ խմել էի* |
| *հարակատար՝ խմած* | *ներկա՝ եմ* | *հարակատար՝ խմած եմ* |
| *հարակատար՝ խմած* | *անցյալ՝ էի* | *անցյալի հարակատար՝ խմած էի* |

**Օժանդակ բայը ցույց է տալիս դեմք, թիվ և դերբայով արտահայտվող գործողության կատարումը՝ ներկա կամ մի անցյալ ժամանակի հարաբերությամբ:**

## § 94. ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Правописание вспомогательного глагола

*1. Օժանդակ բայի ներկա ժամանակի ձևերն սկսվում են «ե» տառով, բացի եզակի երրորդ դեմքից, որ լինում «է».* եմ, ես, է, ենք, եք, են:

*2. Օժանդակ բայի անցյալ ժամանակի ձևերն սկսվում են «է» տառով.*

էի, էիր, էր, էինք, էիք, էին:

*Օժանդակ բայը, նայած տրամաբանական շեշտին, կարող է դրվել դերբայից հետո կամ նրանից և այլ բառերից առաջ:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 272: Կարդալ և դիտել, թե ինչպե՞ս են սկսվում օժանդակ բայի անցյալ ձևերը. կազմել մյուս ձևերը: Կազմել բոլոր բայերի դերբայները:*

*Մթնշաղին, երբ օդաչուները թփերի հետևը թաքնըված, ականջները սրած լսում էին ամեն մի սոսափյուն, աղջիկը եկավ՝ ձեռքին մի մեծ հաց:*

*— Կերե՛ք,— ժպտալով ասաց Գալյան,— և գնանք, թե չէ տանեցիք ինձ կփնտրեն:*

*Նա նստեց կոճղի վրա և մտածում էր, որ այժմ անպատճառ կասի նրանց, թե որքան թանկ է Սովետական Բանակը նրա համար և որքան է ատում ֆաշիստ զինվորներին: Բայց դուրս է գալիս, որ կան շատ դժվար արտասանելի բառեր, թեև նրանք ապրում են սրտի խորքում: Գալյան լուռ նայում էր օդաչուներին, որոնք բավականությամբ ուտում էին նրա բերած հացը: Ժամանակ առ ժամանակ օդաչուներն ուրախ-ուրախ ժըպտում էին աղջկան: Այն ժամանակ նա մինչև ականջները կարմրում էր և աչքերը ցած գցում:*



*Անտառի կածաններով Գալյան նրանց դուրս բերեց ֆաշիստների թիկունքից:*

*— Այժմ վտանգավոր չէ,— կամաց ասաց նա և թեթևությամբ շունչ առավ:— Գնաք բարով, օդաչու քեռիներ:*

*Օդաչուները ամուր սեղմեցին Գալյայի ձեռքը, գնացին դեպի արևելք: Արդեն բավական հեռացել էին, երբ ձայն տվին աղջկան.*

*— Փոքրիկ աղջիկ, բայց ինչ է քո անունը:*

*Գալյան ասաց իր անունը և թփերի մեջ անհետացավ:*

(Կոնոնենկո. «Աղջիկը»)

## ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Составные личные формы изъявительного наклонения

## § 95. ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆՑՅԱԼԻ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Настоящее и прошедшее несовершенное время

Ներկա *և* անցյալի անկատար *ժամանակները ցույց են տալիս, որ* ենթակայի գործողությունը սկսվել ու ընթացքի մեջ է *(ներկայի կամ անցյալի համեմատությամբ):*

*Օրինակ՝*

խմում եմ, կարդում եմ, խմում էի, կարդում էի:

Ներկա *ժամանակը կազմվում է* անկատար *դերբայով (խըմում, կարդում) և օժանդակ բայի* ներկայով *(եմ, ես, է...):*

*Օրինակ՝*

| Եզակի | Հոգնակի | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| խմում եմ | խմում ենք | կարդում եմ | կարդում ենք |
| խմում ես | խմում եք | կարդում ես | կարդում եք |
| խմում է | խմում են | կարդում է | կարդում են |

Անցյալի անկատար *ժամանակը կազմվում է* անկատար *դերբայով (խմում, կարդում) և օժանդակ բայի* անցյալով *(էի, էիր, էր...).*

*օրինակ՝*

| Եզակի | Հոգնակի | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| խմում էի | խմում էինք | կարդում էի | կարդում էինք |
| խմում էիր | խմում էիք | կարդում էիր | կարդում էիք |
| խմում էր | խմում էին | կարդում էր | կարդում էին |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 273։*

*1. Արտագրել ներկա ժամանակով գործածված բայերը և կազմել նրանց անցյալի անկատարը։*

*2. Արտագրել անցյալի անկատար ժամանակով գործածված բայերը և որոշել յուրաքանչյուրի դեմքն ու թիվը։*

## ԱՆՑՅԱԼԻՑ

*Դրանից հետո երեք օր էլ հնձում էին գյուղացիները։ Նրանք համարյա չէին հանգստանում, ոչ ուտում էին, ոչ խմում։ Գիշեր-ցերեկ դաշտում էին անցկացնում, մոռացել էին իրենց մրոտ խրճիթները, ուր կյանքն այնքան դժվար էր ու դաժան։ Նրանք կարծես հարբել էին աշխատանքից, հյութալի խոտի առատ բուրմունքից, այդ բոլոր հարստությունից։ Իսկ չորրորդ օրը, կեսօրին, դաշտում տարածվում է մի ահաբեկ ճիչ՝ «Զինվորները գալիս են»։ Կարծես խոտհարքը դող ընկավ։ Կանայք խոտ շուռ տալը դադարեցրին. գյուղացիներն անհանգիստ նայում էին ճանապարհին, որտեղ շարժվում էր մութ պատը։*

*Ամբողջովին կարմրած, շոգից շնչասպառ, գյուղացիների առջև կանգնած էր նահանգապետը։*

*Նրանք չէին հնձում, այլ լուռ ամբոխ դարձած՝ կանգնել, մռայլ կերպով նայում էին զինվորներին և ճիպոտները բարձած սայլերին, որոնց շուրջը դես-դեն էին ընկնում ոստիկանները։*

(Ի. Տուրգենև. «Գյուղացիների դատը»)



## § 96. ԱՊԱՌՆԻ ԵՎ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

### Будущее время и будущее прошедшего времени

**Ապառնին և անցյալի ապառնին ցույց են տալիս ենթակայի կատարելիք գործողությունը (ներկայի կամ անցյալի նկատմամբ)։ Օրինակ՝ խմելու եմ, կարդալու եմ, խմելու էի, կարդալու էի։**

Ապառնին *կազմվում է* ապառնի *դերբայով (խմելու, կարդալու) և օժանդակ բայի* ներկայով *(եմ, ես, է...).*

*օրինակ՝*

| Եզակի | Հոգնակի | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| խմելու եմ | խմելու ենք | կարդալու եմ | կարդալու ենք |
| խմելու ես | խմելու եք | կարդալու ես | կարդալու եք |
| խմելու է | խմելու են | կարդալու է | կարդալու են |

Անցյալի ապառնին *կազմվում է* ապառնի *դերբայով (խմելու, կարդալու) և օժանդակ բայի* անցյալով *(էի, էիր, էր)։*

*Օրինակ՝*

| Եզակի | Հոգնակի | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| խմելու էի | խմելու էինք | կարդալու էի | կարդալու էինք |
| խմելու էիր | խմելու էիք | կարդալու էիր | կարդալու էիք |
| խմելու էր | խմելու էին | կարդալու էր | կարդալու էին |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 270։ Գտեք ապառնի ժամանակով գործածված բայաձևերը։ Կազմեցեք բայերի ներկա և անցյալի ապառնի ձևերը։*

## Գ Ա Ր Ո Ւ Ն

*Շուտով գարունը գալու է։*
*Ձյունը կհալվի։*
*Փոքրիկ առվակները դեպի գետն են վազելու։*
*Ձյունի տակից դուրս է գալու ձնծաղիկը։*
*Հենց ձյունը հալվի թե չէ, հողի միջից ծլելու ու վեր են բարձրանալու խոտերն ու ծաղիկները։*

*Թփերի մոտ, անտառի արևոտ կողմում բացվելու են մանուշակները։*

*Մեղուները փեթակներից դուրս են թռչելու, ծաղիկների մեջ կեր են որոնելու։*

*Գարնանը մեր կոլտնտեսության եռուն աշխատանքները սկսվելու են։*

*Կոլտնտեսության ոչխարների հոտերը սարն են տանելու։*

*Հոտի առջևից գնալու են այծերը։*

*Հոտը տանելու է հովիվ Մացակը։*

*Գառների և ուլերի հոտն էլ նրանց հետևից քշելու են գառնարածները։*

### Ապառնի դերբայով կազմվող ժամանակների սխեման

*Ապառնի դերբայ*

| *խմելու, կարդալու* |
|---|

*Ապառնի* — *Անցյալի ապառնի*

| *եմ, ես, է, ենք, եք, են* | *էի, էիր, էր, էինք, էիք, էին* |
|---|---|
| *Օժանդակ բայի ներկա ժամանակ* | *Օժանդակ բայի անցյալ ժամանակ։* |

## § 97. ՎԱՂԱԿԱՏԱՐ ԵՎ ԱՆՑՅԱԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ

### Давнопрошедшее время и давнопрошедшее прошедшего времени

**Վ ա ղ ա կ ա տ ա ր ժամանակները ցույց են տալիս, որ ենթակայի գործողությունը արդեն անցել, վերջացել է (ներկայի կամ անցյալի համեմատությամբ)։**



*Օրինակ՝*

Խմել եմ, կարդացել եմ, խմել էի, կարդացել էի։

Վաղակատար *ժամանակը կազմվում է* վաղակատար *դերբայով (խմել, կարդացել) և օժանդակ բայի* ներկայով *(եմ, ես, է...)։*

*Օրինակ՝*

| Եզակի | Հոգնակի | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| խմել եմ | խմել ենք | կարդացել եմ | կարդացել ենք |
| խմել ես | խմել եք | կարդացել ես | կարդացել եք |
| խմել է | խմել են | կարդացել է | կարդացել են |

Անցյալի վաղակատարը *կազմվում է* վաղակատար *դերբայով (խմել, կարդացել) և օժանդակ բայի* անցյալով։

*Օրինակ*

| Եզակի | Հոգնակի | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| խմել էի | խմել էինք | կարդացել էի | կարդացել էինք |
| խմել էիր | խմել էիք | կարդացել էիր | կարդացել էիք |
| խմել էր | խմել էին | կարդացել էր | կարդացել էին |

### Վաղակատար դերբայով կազմվող ժամանակների սխեմա

*Վաղակատար դերբայ*

| *խմել, կարդացել* |
|---|

*Վաղակատար* — *Անցյալի վաղակատար*

| *եմ, ես, է, ենք, եք, են* | *էի, էիր, էր, էինք, էիք, էին* |
|---|---|
| *Օժանդակ բայի ներկա ժամանակ* | *Օժանդակ բայի անցյալ ժամանակ* |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 274։ Արտագրել վաղակատար ժամանակով գործածված բայերը, կազմել նրանց անցյալի վաղակատարը։*

*Գարուն է եկել,*
*Ծառերն են ծաղկել,*
*Մանուշակ ու վարդ*
*Բացվել են զվարթ։*

*Թռչուն ու մրջյուն*
*Շինում են նոր բույն,*
*Կանաչ ու ծաղկունք*
*Սփռել են բուրմունք։*

*Սոխակ ու գետակ*
*Հոսում են արագ,*
*Թիթեռ ու բզեզ*
*Բացել են հանդես։*

(Վ. Վարդանյան)

## § 98. ՀԱՐԱԿԱՏԱՐ ԵՎ ԱՆՑՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐ

### Результативное прошедшего времени

**Հարակատար ժամանակները ցույց են տալիս ենթակայի մի գործողություն, որը դարձել է նրա հատկությունը (ժամանակավոր կամ մշտական):**

*Օրինակ՝*

Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին...

(Վ. Տերյան)

Նստած եմ մենակ ու միտք եմ անում:

(Հ. Թ.)

Ես կանգնած էի մի բլրակի վրա:

Հարակատար *ժամանակը կազմվում է* հարակատար *դերբայով (խմած, կարդացած) և օժանդակ բայի* ներկայով *(եմ, ես, է...).*

*օրինակ՝*

| Եզակի | Հոգնակի | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| խմած եմ | խմած ենք | կարդացած եմ | կարդացած ենք |
| խմած ես | խմած եք | կարդացած ես | կարդացած եք |
| խմած է | խմած են | կարդացած է | կարդացած են |



Անցյալի հարակատարը *կազմվում է* հարակատար *դերբայով (խմած, կարդացած) և օժանդակ բայի* անցյալով *(էի, էիր, էր...)։*

*Օրինակ՝*

| Եզակի | Հոգնակի | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| խմած էի | խմած էինք | կարդացած էի | կարդացած էինք |
| խմած էիր | խմած էիք | կարդացած էիր | կարդացած էիք |
| խմած էր | խմած էին | կարդացած էր | կարդացած էին |

Գրել *և նման բայերի հարակատար ձևերը գործածական չեն։ Հարակատարի ձևեր ունեն* նստել, կանգնել, պառկել, քնել *և նման բայերը, այլև «վ» ածանց ունեցող բայերը, ինչպես գրվել, կանչվել, ծեծվել և այլն։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 275։ Արտագրել անցյալի հարակատարով գործածված բայերը և կազմել նրանց հարակատար ժամանակը։*

## ԲԻՐՅՈՒԿ

*(Անցյալից)*

*Անտառապահի խրճիթը բաղկացած էր մի սենյակից՝ մրոտած, ցածրիկ ու դատարկ. մի պատառոտված մուշտակ կախված էր պատից։ Նստարանի վրա ընկած էր միփողանի հրացան, անկյունում թափված էին փալասներ։ Սեղանի վրա վառվում էր մարխը, որի լույսը մերթ բարձրանում էր, մերթ իջնում հանգչելու չափ։ Սենյակի ուղիղ մեջտեղը կախված էր երեխայի ճոճը, որ կապված էր մի երկար ձողի ծայրին։ Փոքրիկ աղջիկը լապտերը հանգցրեց, նստեց մի փոքրիկ աթոռի և սկսեց աջ ձեռքով ճոճն օրորել, ձախով մարխը շտկել։ Նայեցի շուրջս, սիրտս ճմլվեց, սխալ բան էր գիշերը գյուղացու խրճիթ մտնելը։*

(Տուրգենև)

### Հարակատար դերբայով կազմվող ժամանակների սխեման




## § 99. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՊԱՐԶ ԺԱՄԱՆԱԿԸ

### ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ—прошедшее совершенное время

**Անցյալ կատարյալը ցույց է տալիս, որ ենթակայի գործողությունը կատարվել վերջացել է անցյալում, առանց հարաբերվելու որևէ այլ ժամանակի:**

*Օրինակ՝*

Արան գրքերը վերցրեց ու դպրոց գնաց:

*Անցյալ կատարյալը համապատասխանում է ռուսերենի կատարյալ կերպի անցյալին:*

*Անցյալ կատարյալ ժամանակը սահմանական եղանակի միակ պարզ ժամանակն է, որ կազմում ենք բայարմատով՝ ավելացնելով նրան* եցի, եցիր, եց, եցինք, եցիք, եցին *վերջավորությունները առաջին խոնարհման բայերի համար և* ացի, ացիր, աց, ացինք, ացիք, ացին *վերջավորությունները՝ երկրորդ խոնարհման բայերի համար:*



*Օրինակ՝*

| Եզակի | Հոգնակի | Եզակի | Հոգնակի |
|---|---|---|---|
| գր-եցի | գր-եցինք | կարդ-ացի | կարդ-ացինք |
| գր-եցիր | գր-եցիք | կարդ-ացիր | կարդ-ացիք |
| գր-եց | գր-եցին | կարդ-աց | կարդ-ացին |

*Կանոնավոր բայերի անցյալ կատարյալի բուն վերջավորություններն են՝* ի, իր,—, ինք, իք, ին, *իսկ* եց *և* աց *մասնիկները անցյալ կատարյալի հիմքի մասերն են* (գրեց, կարդաց):

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 276: Գտնել անցյալ կատարյալով գործածված բայերը և որոշել դրանց դեմքը և թիվը: Կազմել այդ բայերի սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակները:*

### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՑՅԱԼԻ ՊԱՅՔԱՐԻՑ

*Լույսը բացվեց: Թշնամի բանակները նայեցին միմյանց: Ահռելի էր պարսից բանակը. կարծես սև անտառ լիներ դաշտում բուսած: Զորքի հետևում կանգնեցրել էին հարբեցրած փղերին: Նրանք իրենց կնճիթները վեր ու վար էին շարժում, ոտներով հողը փորում և սպասում կռվին:*

*Հնչեց պարսից շեփորը, որից հետո՝ հայոց շեփորը:*

*Եվ սկսվեց կռիվը:*

*Ավարայրի դաշտը դղրդաց մարդկանց, փղերի ու ձիերի ոտների դոփյունից: Սուրացին նետերը, լսվեցին վիրավորների հառաչանքները:*

*Պարսիկ զինվորներն առաջ անցան և սկսեցին գետը մտնել: Հայ զինվորները նույնպես գետը մտան: Կռիվը սաստկացավ:*

*Վտանգ կար, որ պարսիկները կարող են շրջապատել հայերին: Վարդանն այդ մասին զգուշացրեց զորքերին:*

*Դրանից հետո Վարդանը հանկարծ հարձակվեց թշնա-*

մու զորքերի միջին մասի վրա։ Պարսիկները այդպիսի հանդգնություն չէին սպասում։ Կռիվն ավելի սաստկացավ։ Հայերն անխնա կոտորում էին պարսիկներին։ Բայց թշնամին էլ իր ուժերը կենտրոնացրեց Վարդանի դեմ։

Սկսվեց անհավասար հերոսական կռիվ։

Հայ մարտիկները, անձնվիրաբար կռվելով ընկնում էին մեկ-մեկ, բայց և լավ հարվածում էին պարսիկներին և թուլացնում նրանց ուժերը։ Հերոսի մահով ընկավ նաև ինքը՝ Վարդան Մամիկոնյանը։

Իրենց զորավարի մահից հետո, հայ զինվորները կռիվը շարունակեցին հայկական լեռներում։ Պարսից զորքը այդ կռիվներից հոգնեց և ջլատվեց. Նա ջախջախված էր։ Պարսից թագավորը հայերին ստրկացնելու իր հանդուգն միտքը թողեց։

Հայերի հերոսությունը, հայրենասիրությունը և անձնվիրությունը հաղթեցին։

(Դ. Դեմիրճյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 277։ Կազմել վերևի հատվածում եղած բայերի անցյալ կատարյալ ժամանակի եզակի և հոգնակի երկրորդ դեմքերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 278։ Արտագրել ընդգծված բայերը և ըստ աղյուսակում ցույց տրված ժամանակների՝ կազմել նրանցից յուրաքանչյուրի մյուս ժամանակները։

| Ներկա | Անցյալի անկատար | Վաղակատար | Անցյալի վաղակատ. | Անցյալ կատարյալ | Ապառնի |
|---|---|---|---|---|---|
| կազմում են | կազմում էին | կազմել են | կազմել էին | կազմեցին | կազմելու են |



## ՊՈՉԱՏ ԱՂՎԵՍԸ

(Առակ)

Աղվեսը թակարդն ընկավ, պոկեց պոչն ու փախավ։
Սկսեց մտածել, թե ինչպես իր ամոթը թաքցնի։
Նա գնաց կանչեց աղվեսներին և սկսեց համոզել նրանց, որ պոչերը կտրեն։

— Պոչը,— ասում է,— բոլորովին ավելորդ է, միայն իզուր ավելորդ բեռ ենք հետևներիցս քարշ տալիս։

Եվ ահա մի աղվես ասում է.

— Ա՜, դու այդպես չէիր խոսի, եթե պոչատ չլինեիր։

Պոչատ աղվեսը լռեց ու հեռացավ։

### § 100. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ—повелительное наклонение

**Հրամայական եղանակն արտահայտվում է գործելու կամ լինելու հրաման, թելադրանք, հորդոր։**

Օրինակ՝

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,
Կարդա՛, գրի՛ր տարին բոլոր։

Հրամայական եղանակն ունի միայն մի՝ երկրորդ դեմք, բայց երկու թիվ՝ եզակի և հոգնակի։

«Ե» խոնարհման կանոնավոր բայերն ունեն եզակի թվում իր վերջավորություն, իսկ հոգնակի թվում՝ եցեք (որոշ բառեր ունեն եք)։

Օրինակ՝

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| գրի՛ր | գրեցե՛ք |
| խոսի՛ր | խոսեցե՛ք |
| լսի՛ր | լսեցե՛ք |

«Ա» խոնարհման կանոնավոր բայերն ունենում են եզակի թվում ա և հոգնակի թվում՝ ացեք վերջավորություն։

*Օրինակ՝*

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| կարդա՛ | կարդացե՛ք |
| գնա՛ | գնացե՛ք |
| մնա՛ | մնացե՛ք |

*Հրամայական բայերի վերջին վանկի վրա սովորաբար դրվում է շեշտ (՛)։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 279։ Արտագրել և ընդգծել հրամայական եղանակի բայերը։ Որոշել հրամայական եղանակով գործածված բայերի դեմքը և թիվը։ Բացատրել կետադրությունը։*

КԱՐԴԱ՛, ԳՐԻ՛Ր

*Իմ ժիր մանուկ, կարդա՛, գրի՛ր,*
*Ջգտի՛ր լույսի, գիտության.*
*Ամբողջ սրտով դու գիրք սիրի՛ր,*
*Գրքերը քեզ ուժ կտան։*

*Կարդա՛, գրի՛ր, իմ ժիր մանկիկ,*
*Սովորի՛ր միշտ գերազանց,*
*Որ դառնաս դու խիզախ մարտիկ*
*Հայրենիքիդ փառապանծ։*

(Սարմեն)

## § 101. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ—Желательное наклонение

**Ըղձական եղանակին պատկանող բայաձևերը ցույց են տալիս մի բան անելու կամ լինելու ցանկություն, իղձ, տենչանք (ներկայի կամ անցյալի համեմատությամբ)։**

*Ըղձական եղանակն ունի երկու պարզ ժամանակ՝* ապառնի (будущее время) *և* անցյալի ապառնի (будущее прошедшего времени)։

Ըղձական ապառնին *կազմվում է* անորոշ *դերբայից, որի մեջ վերջավորությունը փոխարինվում է* մ, ս,—, նք, ք, ն *վերջավորություններով։*



*Օրինակ՝*

«Ե» խոնարհում

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| խմեմ | խմենք |
| խմես | խմեք |
| խմի | խմեն |

«Ա» խոնարհում

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| կարդամ | կարդանք |
| կարդաս | կարդաք |
| կարդա | կարդան |

*«Ե» խոնարհման բայերը ըղձական ապառնի ժամանակի երրորդ դեմքում ունենում են* ի *վերջավորություն, բայց երբեմն նաև* ե *վերջավորություն, որ հնացած է։*

*Օրինակ՝*

գրե, ճնչե, խոսե *և այլն։*

*Ըղձական ապառնիի տարբեր ձևերը, երբեմն նաև* թող *բառի հետ գործ են ածվում հրամայական՝ ունենալով շեշտ։*

*Օրինակ՝*

գրե՛նք, խոսե՛նք, կարդա՛նք *և այլն։*
գնա՛նք մենք այնտեղ... թո՛ղ գա։

Ըղձական անցյալի ապառնին *կազմվում է* անորոշ *դերբայից, որի մեջ -լ փոխարինվում է* ի, իր, ր, ինք, իք, ին *վերջավորություններով։*

*Օրինակ՝ (անորոշ դերբայ՝* խմել, կարդալ)։

«Ե» խոնարհում

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| խմեի | խմեինք |
| խմեիր | խմեիք |
| խմեր | խմեին |

### «Ա» խոնարհում

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| կարդայի | կարդայինք |
| կարդայիր | կարդայիք |
| կարդար | կարդային |

*«Ա» խոնարհիչի և դեմքի վերջավորությունների միջև գտնվող «յ»-ն ձայնակապ է։*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ըղձական* ապառնիի *և* անցյալի ապառնիի *վերջավորությունները գիտվում են իբրև բայական վերջավորություններ և գրվում են ե-ով. գրեմ, գրեիր, գրեր և այլն։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 280։ Արտագրել ըղձական եղանակով գործածված բայերը իրենց լրացումների հետ միասին՝ փակագծերում ցույց տալով դրանց անցյալի ապառնի ձևը։*

*Կեսօրվա դեմ նստեմ քարին,*
*Փչեմ, կանչեմ ոչխարներին,*
*Գետում ջրեմ*
*Ու տուն բերեմ։*

*Աստ կթեմ մաքիները,*
*Ես էլ ուտեմ կաթի սերը,*
*Մի քիչ մնամ,*
*Հանգստանամ...*
*Հոտը առնեմ ելնեմ սարը,*
*Նորից երգեմ, մինչ խավարը*
*Փռվի ձորում,*
*Սև սարերում։*

(Հ. Շիրազ. «Փոքրիկ հովիվը»)

*Օրինակ՝*

Կեսօրվա դեմ նստեմ (նստեի) քարին։



### Ըղձական եղանակի սխեման

*Ըղձական եղանակ*




| | |
|---|---|
| *խմեմ, կարդամ* | *խմեի, կարդայի* |
| *խմես, կարդաս* | *խմեիր, կարդայիր* |
| *խմի, կարդա* | *խմեր, կարդար* |
| *խմենք, կարդանք* | *խմեինք, կարդայինք* |
| *խմեք, կարդաք* | *խմեիք, կարդայիք* |
| *խմեն, կարդան* | *խմեին, կարդային* |

## § 102. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Условное или предположительное наклонение

**Պայմանական եղանակի ձևերը ցույց են տալիս պայմանով կամ ենթադրաբար կատարվելիք գործողություն** *(ներկայի կամ անցյալի համեմատությամբ)։*

*Օրինակ՝*

Եթե ինձ մոտ գաս, քեզ մի լավ գիրք կտամ:

**Պայմանական եղանակի ձևերը գործածվում են հաճախ ստույգ կատարվելիք գործողություն կամ եղելություն ցույց տալու համար:**

*Օրինակ՝*

Կգնամ տուն, կհանգստանամ:

Պայմանական *եղանակը կազմվում է* ըղձական *եղանակի ձևերից, որոնց սկզբից ավելացվում է «կ» մասնիկը։*

*Օրինակ՝*

| Ըղձական | Պայմանական |
|---|---|
| գնամ | կգնամ |
| գնայի | կգնայի |

*«Կ» մասնիկը կոչվում է* պայմանական եղանակիչ (условная модальная частица) *և գրվում է բայահիմքի հետ միշտ միասին։*

*Պայմանական կամ ենթադրական եղանակն ունի երկու ժամանակ՝* ապառնի՝ (будущее время) *և* անցյալի ապառնի (будущее прошедшего времени):

Պայմանական *կամ* ենթադրական ապառնին *կազմվում է* ըղձական *ապառնիից, որի վրա ավելանում է «կ» պայմանական եղանակիչը։*

*Օրինակ՝*

«Ե» խոնարհում

| Եզակի | | Հոգնակի | |
|---|---|---|---|
| **Ըղձական** | **Պայմանական** | **Ըղձական** | **Պայմանական** |
| խմեմ | կխմեմ | խմենք | կխմենք |
| խմես | կխմես | խմեք | կխմեք |
| խմի | կխմի | խմեն | կխմեն |

«Ա» խոնարհում

| Եզակի | | Հոգնակի | |
|---|---|---|---|
| **Ըղձական** | **Պայմանական** | **Ըղձական** | **Պայմանական** |
| կարդամ | կկարդամ | կարդանք | կկարդանք |
| կարդաս | կկարդաս | կարդաք | կկարդաք |
| կարդա | կկարդա | կարդան | կկարդան |

Պայմանական անցյալի ապառնին *կազմվում է* ըղձական անցյալի ապառնիից, *որի վրա ավելանում է «կ» պայմանական եղանակիչը։*



*Օրինակ՝*

«Ե» խոնարհում

| Եզակի | | Հոգնակի | |
|---|---|---|---|
| **Ըղձական** | **Պայմանական** | **Ըղձական** | **Պայմանական** |
| խմեի | կխմեի | խմեինք | կխմեինք |
| խմեիր | կխմեիր | խմեիք | կխմեիք |
| խմեր | կխմեր | խմեին | կխմեին |

«Ա» խոնարհում

| Եզակի | | Հոգնակի | |
|---|---|---|---|
| **Ըղձական** | **Պայմանական** | **Ըղձական** | **Պայմանական** |
| կարդայի | կկարդայի | կարդայինք | կկարդայինք |
| կարդայիր | կկարդայիր | կարդայիք | կկարդայիք |
| կարդար | կկարդար | կարդային | կկարդային |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 281։ Արտագրեցեք հատվածը, պայմանական կամ ենթադրական եղանակի բայերը գործածեցեք սահմանական ապառնիով։*

*Կանգնում է Ակոբը ճամփին, շունչ առնում, նայում ներքևի լուսաշխարհին. մտածում է. ահա կանցնի մի երկու տարի, հիդրոկայանը կյանք կտա նոր գործարաններին, իսկ այնտեղ, ձորի լանջին, սարի վրա կբարձրանա Լենինի հսկա արձանը և լույսերով ողողված՝ աչքերը կդարձնի դեպի հեռուները...*

*Ու այդ ժամանակ Ակոբը նայելով այդ բոլորին, կզգա, որ ծանր աշխատանքի օրերից միայն մի մեծ, քաղցր հիշողություն է մնացել մեջը...*

(Արազի «Լույսերը»)

## § 103. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ—побудительное наклонение

**Հարկադրական եղանակի ձևերը ցույց են տալիս անհրաժեշտաբար կամ որոշ մղումով կատարվելիք գործողություն** *(ներկայի կամ անցյալի համեմատությամբ)։*

Հարկադրական *եղանակը կազմվում է* ըղձական *եղանակի ձևերից, որոնց առաջ դրվում է* պիտի *կամ* պետք է:

*Օրինակ՝*

| **Ըղձական** | **Հարկադրական** |
|---|---|
| խմեմ | պիտի խմեմ |
| կարդամ | պիտի կարդամ |
| խմեի | պիտի խմեի |
| կարդայի | պիտի կարդայի |

Պիտի-*ին կոչվում է* հարկադրական եղանակիչ (модальное слово): *Հարկադրական եղանակն ունի երկու ժամանակ՝* ապառնի (будущее *և* անցյալի ապառնի (будущее прошедшего времени):

Հարկադրական ապառնին *կազմվում է* ըղձական ապառնիի *ձևերից, որոնց առաջ դրվում է* պիտի *հարկադրական եղանակիչը:*

*Օրինակ՝*

| | |
|---|---|
| պիտի խմեմ | պիտի կարդամ |
| պիտի խմես | պիտի կարդաս |
| պիտի խմի *և այլն* | պիտի կարդա *և այլն:* |

Հարկադրական անցյալի ապառնին *կազմվում է* ըղձական անցյալի ապառնիի *ձևերից, որոնց առաջ դրվում է* պիտի *հարկադրական եղանակիչը:*

*Օրինակ՝*

«Ե» խոնարհում

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| պիտի խմեի | պիտի խմեինք |
| պիտի խմեիր | պիտի խմեիք |
| պիտի խմեր | պիտի խմեին |



«Ա» խոնարհում

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| պիտի կարդայի | պիտի կարդայինք |
| պիտի կարդայիր | պիտի կարդայիք |
| պիտի կարդար | պիտի կարդային |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 282: Արտագրել պայմանական եղանակի բայերը և որոշել նրանց ժամանակը, թիվը և դեմքը: Կազմել բայերի հարկադրական եղանակի ձևերը:*

*Կանչի երկիրը քեզ հետ. կմեծանաս դու,*
*Ժամանակը կարծաթի մազերդ մի օր,*
*Եվ խնդությունը կյանքի քո պայծառ հոգում*
*Ոսկի մի երգ կդառնա, ոսկի մի օրոր:*
*Օրորոցում կնիրհի մի լուսե մանուկ,*
*Կկախվի քո հայացքը նրա սնարին,*
*Կշշնջան շուրթերդ մի պայծառ անուն,*
*Ու մեզ մի երգ կհնչի մի նոր քնարից:*
*Ու մեզ մի երգ կհնչի մի նոր քնարից,*
*Օրորոցում կնիրհի մանուկը լուսե,*
*Իսկ մենք կժպտանք նրան ամեն մի քարից,*
*Եվ սյուների վրայից որպես վառ լույսեր:*

(Գ. Սարյան. «Տարեդարձի երգ»)

*Օրինակ՝*

*Պայմանական կամ ենթադրական եղանակ*
*Կանչի*—ապառնի, եզակի, երրորդ դեմք:
*Հարկադրական եղանակ*
*Պիտի անչի:*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 283: Կազմել բայերի բոլոր դերբայներն ու եղանակային ձևերը:*

Գնալ, մնալ, երգել, ցանել, վարել, ապրել, խաղալ, պառկել, ծաղկել:

## § 104. ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

*Հաստատական կամ դրական խոնարհում*

Սահմանական եղանակ

*«Ե» խոնարհում՝* նստել — *«Ա» խոնարհում՝* մնալ

| Թիվ | Դեմք | Ներկա (անկատար) | |
|---|---|---|---|
| Եզակի | I | Նստում եմ | Մնում եմ |
| | II | Նստում ես | Մնում ես |
| | III | Նստում է | Մնում է |
| Հոգնակի | I | Նստում ենք | Մնում ենք |
| | II | Նստում եք | Մնում եք |
| | III | Նստում են | Մնում են |

| Թիվ | Դեմք | Անցյալի անկատար | |
|---|---|---|---|
| Եզակի | I | Նստում էի | Մնում էի |
| | II | Նստում էիր | Մնում էիր |
| | III | Նստում էր | Մնում էր |
| Հոգնակի | I | Նստում էինք | Մնում էինք |
| | II | Նստում էիք | Մնում էիք |
| | III | Նստում էին | Մնում էին |

| Թիվ | Դեմք | Ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | Նստելու եմ | Մնալու եմ |
| | II | Նստելու ես | Մնալու ես |
| | III | Նստելու է | Մնալու է |
| Հոգնակի | I | Նստելու ենք | Մնալու ենք |
| | II | Նստելու եք | Մնալու եք |
| | III | Նստելու են | Մնալու են |



| Թիվ | Դեմք | Անցյալի ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | Նստելու էի | Մնալու էի |
| | II | Նստելու էիր | Մնալու էիր |
| | III | Նստելու էր | Մնալու էր |
| Հոգնակի | I | Նստելու էինք | Մնալու էինք |
| | II | Նստելու էիք | Մնալու էիք |
| | III | Նստելու էին | Մնալու էին |

| Թիվ | Դեմք | Վաղակատար | |
|---|---|---|---|
| Եզակի | I | Նստել եմ | Մնացել եմ |
| | II | Նստել ես | Մնացել ես |
| | III | Նստել է | Մնացել է |
| Հոգնակի | I | Նստել ենք | Մնացել ենք |
| | II | Նստել եք | Մնացել եք |
| | III | Նստել են | Մնացել են |

| Թիվ | Դեմք | Անցյալի վաղակատար | |
|---|---|---|---|
| Եզակի | I | Նստել էի | Մնացել էի |
| | II | Նստել էիր | Մնացել էիր |
| | III | Նստել էր | Մնացել էր |
| Հոգնակի | I | Նստել էինք | Մնացել էինք |
| | II | Նստել էիք | Մնացել էիք |
| | III | Նստել էին | Մնացել էին |

| Թիվ | Դեմք | Հարակատար | |
|---|---|---|---|
| Եզակի | I<br>II<br>III | Նստած եմ<br>Նստած ես<br>Նստած է | Մնացած եմ<br>Մնացած ես<br>Մնացած է |
| Հոգնակի | I<br>II<br>III | Նստած ենք<br>Նստած եք<br>Նստած են | Մնացած ենք<br>Մնացած եք<br>Մնացած են |

| Թիվ | Դեմք | Անցյալի հարակատար | |
|---|---|---|---|
| Եզակի | I<br>II<br>III | Նստած էի<br>Նստած էիր<br>Նստած էր | Մնացած էի<br>Մնացած էիր<br>Մնացած էր |
| Հոգնակի | I<br>II<br>III | Նստած էինք<br>Նստած էիք<br>Նստած էին | Մնացած էինք<br>Մնացած էիք<br>Մնացած էին |

| Թիվ | Դեմք | Անցյալ կատարյալ | |
|---|---|---|---|
| Եզակի | I<br>II<br>III | Նստեցի<br>Նստեցիր<br>Նստեց | Մնացի<br>Մնացիր<br>Մնաց |
| Հոգնակի | I<br>II<br>III | Նստեցինք<br>Նստեցիք<br>Նստեցին | Մնացինք<br>Մնացիք<br>Մնացին |



## Հրամայական եղանակ

| Թիվ | Դեմք | «Ե» խոնարհում | «Ա» խոնարհում |
|---|---|---|---|
| Եզակի | II | Նստի՛ր | Մնա՛ |
| Հոգնակի | II | Նստեցե՛ք | Մնացե՛ք |

## Ըղձական եղանակ

| Թիվ | Դեմք | Ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I<br>II<br>III | Նստեմ<br>Նստես<br>Նստի | Մնամ<br>Մնաս<br>Մնա |
| Հոգնակի | I<br>II<br>III | Նստենք<br>Նստեք<br>Նստեն | Մնանք<br>Մնաք<br>Մնան |

| Թիվ | Դեմք | Անցյալի ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I<br>II<br>III | Նստեի<br>Նստեիր<br>Նստեր | Մնայի<br>Մնայիր<br>Մնար |
| Հոգնակի | I<br>II<br>III | Նստեինք<br>Նստեիք<br>Նստեին | Մնայինք<br>Մնայիք<br>Մնային |

Պայմանական կամ ենթադրական եղանակ

| Թիվ | Դեմք | Ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | կնստեմ | կմնամ |
| | II | կնստես | կմնաս |
| | III | կնստի | կմնա |
| Հոգնակի | I | կնստենք | կմնանք |
| | II | կնստեք | կմնաք |
| | III | կնստեն | կմնան |

| Թիվ | Դեմք | Անցյալի ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | կնստեի | կմնայի |
| | II | կնստեիր | կմնայիր |
| | III | կնստեր | կմնար |
| Հոգնակի | I | կնստեինք | կմնայինք |
| | II | կնստեիք | կմնայիք |
| | III | կնստեին | կմնային |

Հարկադրական եղանակ

| Թիվ | Դեմք | Ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | պիտի նստեմ | պիտի մնամ |
| | II | պիտի նստես | պիտի մնաս |
| | III | պիտի նստի | պիտի մնա |
| Հոգնակի | I | պիտի նստենք | պիտի մնանք |
| | II | պիտի նստեք | պիտի մնաք |
| | III | պիտի նստեն | պիտի մնան |



| Թիվ | Դեմք | Անցյալի ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | պիտի նստեի | պիտի մնայի |
| | II | պիտի նստեիր | պիտի մնայիր |
| | III | պիտի նստեր | պիտի մնար |
| Հոգնակի | I | պիտի նստեինք | պիտի մնայինք |
| | II | պիտի նստեիք | պիտի մնայիք |
| | III | պիտի նստեին | պիտի մնային |

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 284։ Խոնարհել* բռնել, գնալ, քնել, վազել, խաղալ *բայերը։*

## § 105. ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

### Отрицательное (негативное) спряжение

*Ժխտական խոնարհումը, որ արտահայտում է գործողության կատարման կամ եղելության ժխտումը, բացասումը, կազմվում է հաստատական խոնարհումից՝ «չ» ժխտական մասնիկի օգնությամբ։*

*1. Բաղադրյալ ժամանակները կազմելու համար «չ» մասնիկը դրվում է օժանդակ բայի վրա, որը տեղափոխվում է գերբայից առաջ, որտեղ մնում է միշտ։*

*Օրինակ՝*

Նստում եմ—չեմ նստում, նստում էի—չէի նստում, նստելու եմ—չեմ նստելու, նստելու էի—չէի նստելու *և այլն։*

*2. Պարզ ժամանակները կազմելու համար «չ» մասնիկն ուղղակի առաջից կցվում է բային կամ եղանակիչին, բացի պայմանական կամ ենթադրական եղանակի ձևերից և հրամայականից։*

*Օրինակ՝*

Նստեցի—չնստեցի, նստեմ—չնստեմ, նստեի—չնստեի, չպիտի նստեմ, չպիտի նստեի։

3. *Պայմանական կամ ենթադրական եղանակի ձևերի ժխտականը կազմվում է օժանդակ բայի ժխտական ձևով և ժխտման դերբայով։*

*Օրինակ՝*

չեմ նստի, չես նստի, չի նստի *և այլն.* չէի նստի, չէիր նստի՝ չէր նստի *և այլն։*

4. *Հրամայականի ժխտականը, որ կոչվում է նաև արգելական, կազմվում է «մի» արգելական մասնիկով, որ դրվում է եզակիում հաստատական ձևի վրա, իսկ հոգնակիում՝ մի նոր ձևի վրա, որը կազմվում է բայի անորոշ դերբայից, որտեղ «լ» վերջավորությունը փոխարինվում է «ք» վերջավորությամբ.*

*օրինակ՝*

| Հաստատական | Ժխտական *կամ* արգելական |
|---|---|
| նստի՛ր | մի՛ նստիր |
| մնա՛ | մի՛ մնա |
| նստեցե՛ք | մի՛ նստեք |
| մնացե՛ք | մի՛ մնաք |

*«Մի» արգելականի վրա միշտ շեշտ է դրվում (մի՛)։*

## § 106. ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

| *Թիվ* | *Դեմք* | *«Ե» խոնարհում* | *«Ա» խոնարհում* |
|---|---|---|---|
| | | *Ներկա* | |
| *Եզակի* | I | *չեմ նստում* | *չեմ մնում* |
| | II | *չես նստում* | *չես մնում* |
| | III | *չի նստում* | *չի մնում* |
| *Հոգնակի* | I | *չենք նստում* | *չենք մնում* |
| | II | *չեք նստում* | *չեք մնում* |
| | III | *չեն նստում* | *չեն մնում* |



| *Թիվ* | *Դեմք* | *Անցյալ անկատար* | |
|---|---|---|---|
| *Եզակի* | I | *չէի նստում* | *չէի մնում* |
| | II | *չէիր նստում* | *չէիր մնում* |
| | III | *չէր նստում* | *չէր մնում* |
| *Հոգնակի* | I | *չէինք նստում* | *չէինք մնում* |
| | II | *չէիք նստում* | *չէիք մնում* |
| | III | *չէին նստում* | *չէին մնում* |
| *Թիվ* | *Դեմք* | *Ապառնի* | |
| *Եզակի* | I | *չեմ նստելու* | *չեմ մնալու* |
| | II | *չես նստելու* | *չես մնալու* |
| | III | *չի նստելու* | *չի մնալու* |
| *Հոգնակի* | I | *չենք նստելու* | *չենք մնալու* |
| | II | *չեք նստելու* | *չեք մնալու* |
| | III | *չեն նստելու* | *չեն մնալու* |
| *Թիվ* | *Դեմք* | *Անցյալի ապառնի* | |
| *Եզակի* | I | *չէի նստելու* | *չէի մնալու* |
| | II | *չէիր նստելու* | *չէիր մնալու* |
| | III | *չէր նստելու* | *չէր մնալու* |
| *Հոգնակի* | I | *չէինք նստելու* | *չէինք մնալու* |
| | II | *չէիք նստելու* | *չէիք մնալու* |
| | III | *չէին նստելու* | *չէին մնալու* |

| Թիվ | Դեմք | Վաղակատար | |
|---|---|---|---|
| Եզակի | I<br>II<br>III | չեմ նստել<br>չես նստել<br>չի նստել | չեմ մնացել<br>չես մնացել<br>չի մնացել |
| Հոգնակի | I<br>II<br>III | չենք նստել<br>չեք նստել<br>չեն նստել | չենք մնացել<br>չեք մնացել<br>չեն մնացել |

| Թիվ | Դեմք | Անցյալի վաղակատար | |
|---|---|---|---|
| Եզակի | I<br>II<br>III | չէի նստել<br>չէիր նստել<br>չէր նստել | չէի մնացել<br>չէիր մնացել<br>չէր մնացել |
| Հոգնակի | I<br>II<br>III | չէինք նստել<br>չէիք նստել<br>չէին նստել | չէինք մնացել<br>չէիք մնացել<br>չէին մնացել |

| Թիվ | Դեմք | Հարակատար | |
|---|---|---|---|
| Եզակի | I<br>II<br>III | չեմ նստած<br>չես նստած<br>չի նստած | չեմ մնացած<br>չես մնացած<br>չի մնացած |
| Հոգնակի | I<br>II<br>III | չենք նստած<br>չեք նստած<br>չեն նստած | չենք մնացած<br>չեք մնացած<br>չեն մնացած |



| Թիվ | Դեմք | Անցյալի հարակատար | |
|---|---|---|---|
| Եզակի | I<br>II<br>III | չէի նստած<br>չէիր նստած<br>չէր նստած | չէի մնացած<br>չէիր մնացած<br>չէր մնացած |
| Հոգնակի | I<br>II<br>III | չէինք նստած<br>չէիք նստած<br>չէին նստած | չէինք մնացած<br>չէիք մնացած<br>չէին մնացած |

| Թիվ | Դեմք | Անցյալ կատարյալ | |
|---|---|---|---|
| Եզակի | I<br>II<br>III | չնստեցի<br>չնստեցիր<br>չնստեց | չմնացի<br>չմնացիր<br>չմնաց |
| Հոգնակի | I<br>II<br>III | չնստեցինք<br>չնստեցիք<br>չնստեցին | չմնացինք<br>չմնացիք<br>չմնացին |

## Հրամայական եղանակ

| Թիվ | Դեմք | «Ե» խոնարհում | «Ա» խոնարհում |
|---|---|---|---|
| Եզակի | II | մի՛ նստիր | մի՛ մնա |
| Հոգնակի | II | մի՛ նստեք | մի՛ մնաք |

## Ըղձական եղանակ

| Թիվ | Դեմք | Ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | չնստեմ | չմնամ |
| | II | չնստես | չմնաս |
| | III | չնստի | չմնա |
| Հոգնակի | I | չնստենք | չմնանք |
| | II | չնստեք | չմնաք |
| | III | չնստեն | չմնան |

| Թիվ | Դեմք | Անցյալի ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | չնստեի | չմնայի |
| | II | չնստեիր | չմնայիր |
| | III | չնստեր | չմնար |
| Հոգնակի | I | չնստեինք | չմնայինք |
| | II | չնստեիք | չմնայիք |
| | III | չնստեին | չմնային |

## Պայմանական կամ ենթադրական եղանակ

| Թիվ | Դեմք | Ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | չեմ նստի | չեմ մնա |
| | II | չես նստի | չես մնա |
| | III | չի նստի | չի մնա |
| Հոգնակի | I | չենք նստի | չենք մնա |
| | II | չեք նստի | չեք մնա |
| | III | չեն նստի | չեն մնա |



| Թիվ | Դեմք | Անցյալի ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | չէի նստի | չէի մնա |
| | II | չէիր նստի | չէիր մնա |
| | III | չէր նստի | չէր մնա |
| Հոգնակի | I | չէինք նստի | չէինք մնա |
| | II | չէիք նստի | չէիք մնա |
| | III | չէին նստի | չէին մնա |

## Հարկադրական եղանակ

| Թիվ | Դեմք | Ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | չպիտի նստեմ | չպիտի մնամ |
| | II | չպիտի նստես | չպիտի մնաս |
| | III | չպիտի նստի | չպիտի մնա |
| Հոգնակի | I | չպիտի նստենք | չպիտի մնանք |
| | II | չպիտի նստեք | չպիտի մնաք |
| | III | չպիտի նստեն | չպիտի մնան |

| Թիվ | Դեմք | Անցյալի ապառնի | |
|---|---|---|---|
| Եզակի | I | չպիտի նստեի | չպիտի մնայի |
| | II | չպիտի նստեիր | չպիտի մնայիր |
| | III | չպիտի նստեր | չպիտի մնար |
| Հոգնակի | I | չպիտի նստեինք | չպիտի մնայինք |
| | II | չպիտի նստեիք | չպիտի մնայիք |
| | III | չպիտի նստեին | չպիտի մնային |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 285։ Կազմել խմել և գնալ բայերի ժխտական խոնարհումը սահմանական եղանակով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 286։ Կազմել խմել և գնալ բայերի ժխտական խոնարհումը ըղձական և հարկադրական եղանակներով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 287։ Կազմել խմել և գնալ բայերի խոնարհումը պայմանական կամ ենթադրական և հրամայական եղանակներով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 288։ Ժխտական խոնարհման յուրաքանչյուր ժամանակի եզակի առաջին դեմքով կազմել մեկական նախադասություն խմել և գնալ բայերով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 289։ Ցույց տալ ընդգծված բայերի եղանակը, ժամանակը, դեմքը և թիվը։ Գտնել բոլոր բայերը և որոշել նրանց դեմքը և թիվը։

## ԱՌՅՈՒԾԸ, ԱՂՎԵՍՆ ՈՒ ԱՐՋԸ

(Առակ)

Մի անգամ առյուծը հիվանդացավ, և բոլոր կենդանիները եկան նրան տեսության, բայց աղվեսն ուշացավ։

Արջն սկսեց բամբասել ու չարախոսել աղվեսի մասին։ Հենց այդ ժամանակ աղվեսը հասավ և դռան մոտ լսեց արջի չարախոսելն իր մասին։ Աղվեսը ներս ընկավ ու փռվեց առյուծի ոտքերի առաջ։

Առյուծը չարացած ասաց.

— Վատ ժամանակ եկար, գարշելի՛ արարած, ո՞ւր էիր մինչև այժմ։

Աղվեսը պատասխանեց.

— Ո՛վ հզոր առյուծ, իզուր ես բարկանում. քո գլխովն եմ երդվում, որ քո հիվանդության մասին լսելով՝ ես եղա բազմաթիվ բժիշկների և բժշկապետերի մոտ, այդ պատճառով էլ ուշացա։ Բայց իմ չարչարանքի պտուղն այն եղավ, որ իմացա, թե որն է քո բժշկության դեղը։



Առյուծը մեղմացավ և ասաց.

— Ա՜, բարի ես եկել դու, իմաստուն կենդանի, իսկ ի՞նչ է այդ դեղը։

— Շատ պետքական ու հեշտ դեղ է,— պատասխանեց աղվեսը։ Բժշկապետերն ինձ ասացին, թե պետք է կենդանի արջի մորթին հանել և տաք-տաք գցել առյուծի վրա։ Մորթին հիվանդի մարմնից իսկույն կքաշի, կհանի ցավը։

Առյուծի հրամանով անմիջապես բռնեցին արջին և սկսեցին մորթին հանել։

Արջը ախ էր անում, վայ տալիս և գոռում ու ոռնում էր սարսափելի ձայնով։

Այն ժամանակ աղվեսն ասաց նրան.

— Տեղն է, այդ դեռ քեզ քիչ է, այդպես պետք է վարվել քեզ հետ և նրանց հետ, ովքեր չարախոսում են։

(Այգեկցի)

# ՄԱԿԲԱՅ—НАРЕЧИЕ

## § 107. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

4-րդ դասարանի աշակերտները դարձյալ աշխատում են։

Գերազանցիկներն իրենց խոստումը անպատճառ կկատարեն։

Ես որոշել եմ միշտ կարդալ։

ՍՍՌՄ-ում ամենուրեք ծաղկում են կոլտնտեսությունները։

Աշոտն ավելի ջանասեր է, քան Վաչիկը։

Այս նախադասությունների մեջ դարձյալ, անպատճառ, միշտ, ամենուրեք և ավելի բառերը մակբայներ են։

**Մակբայը ցույց է տալիս գործողության ձևը, տեղը, չափը, ժամանակը, ինչպես և առարկայի որակի չափը, աստիճանը։**

Այդ նշանակում է, որ մակբայները ցույց են տալիս, թե ինչպե՞ս, ե՞րբ և որտե՞ղ է կատարվում գործողությունը, ինչ աստիճանի է առարկայի որակը և այլն։

Մակբայները պատասխանում են ե՞րբ, որտե՞ղ, ինչ-



պե՞ս և նման հարցերին և լինում են պարագայական լրացում։

Նույնն են ռուսերենի մակբայները։

## § 108. ՄԱԿԲԱՅԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐ

Суффиксы, образующие наречия

Հետևյալ ածանցները մակբայներ են կազմում.

-բար. (նշանակում է «նման», «պես» և դրվում է գոյականի ու ածականի վրա). ընկերաբար, բարեկամաբար, ազնվաբար, ագահաբար և այլն։

-պես. մեծապես, ֆիզիկապես, տնտեսապես, ամբողջապես, հավասարապես և այլն։

-բար և -պես ածանցներին նախորդող ա-ն հոդակապ է։

-որեն (նշանակում է «նման», «ձևով»). լայնորեն, բոլշևիկորեն, կոմունիստորեն, դրականորեն, հարվածայնորեն և այլն։

-ովին (նշանակում է «լրիվ չափով», «ամբողջովին»). գլխովին, լիովին, բոլորովին, ամբողջովին և այլն։

Մակբայներ են կազմվում նաև կրկնավոր ածականներից և գոյականներից. օրինակ՝ կամաց-կամաց, արագ-արագ, ուշ-ուշ, շուտ-շուտ, տաք-տաք, դեմ առ դեմ, երես առ երես, ժամանակ առ ժամանակ և այլն։

Մակբայները գործ են ածվում որպես լրացում, հատկապես որպես պարագայական լրացում։

Օրինակ՝

Գերազանց սովորենք բոլորս (գերազանց պարագայական լրացում է)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 290։ Կազմել 5-ական օրինակ բար, պես, որեն, ովին ածանցներ ունեցող մակբայներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 291։ Արտագրել մակբայները և որոշել, թե ինչ են ցույց տալիս։

Փողոցի անկյունում արդեն վառվեց լապտերը։
Երկինքը կամաց-կամաց ծածկվեց ամպերով։
Հայրն ու մայրը կատարելապես երջանիկ էին։
Նա անմիջապես պառկեց քնելու։
Դուռը զգուշորեն բացվեց։
Հայրն, իհարկե, լսեց նրան, լսեց և գրեթե ոչինչ չհասկացավ։
Ինքն ամենևին չի հետաքրքրվում նամակով։
Բույրը հետզհետե հեռանում էր իրենից։
Աշխատանքը վերջ ի վերջո հաղթանակում է։
Նա նորից խոստացավ գալ։
Վաղն անպատճառ պիտի մեկներ քաղաքից։
Նա շարունակ խոսում էր այդ մասին։
Նա անպատճառ կիմանա, թե ովքեր են չարագործները։
Նա շտապով դուրս գնաց։
Բուրգը ծայրե ի ծայր վառվել էր։
Նրա աչքերի առջև իսկույն երևացին ընկերները։
Նա վաղուց էր իր խոսքն ասել։
Ծուխն արագ-արագ բարձրանում էր դեպի երկինք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 292։ Վերլուծել գոյականները, ածականները, դերանունները, բայերը և մակբայները։

## ՄԱՅԻՍՅԱՆ ՓՈԹՈՐԻԿ

Կեսօրն անցավ։

Սարի գլխին երկար ժամանակ անշարժացած ամպը լայնանալով հետզհետե սկսեց բռնել երկնքի արևմտյան մասը։ Նրա հսկայական ստվերն ընկել էր ամեհի սարերի և դաշտերի վրա։ Հանկարծ հեռվից մի թույլ դղրդյունի ձայն



լսվեց։ Շուտով տեսնելի եղավ նաև կայծակի թույլ լույսը։

Սկսվում էր մայիսյան փոթորիկը։

Փչեց մի հանդարտ, բայց ցուրտ քամի։ Դաշտային ծիծեռնակները թռչում էին բոլորովին գետնի վրայով։ Դիմացի սարը ծածկվեց բարակ մառախուղով, որը, արագ-արագ ցած իջնելով, տարածվեց ամեն կողմ։ Երկինքը բոլորովին սևացավ, որոտն ավելի և ավելի էր մոտենում։

Հանկարծ անձրևի խոշոր կաթիլներն սկսեցին մեկը մյուսի հետևից սաստիկ արագությամբ թմբկահարել ծառերի տերևները։ Ապա անձրևը բոլորովին դադարեց, մինչև անգամ ամպերի մեջ երևաց մի փայլուն շերտ, կարծես շուտով այնտեղից պիտի նայեր արեգակը։

Հեռվից ավելի ու ավելի պարզ լսվում էր անձրևի աղմուկը։ Մի րոպե չանցած սկսեցին փայլել ահռելի կայծակներ. օդը ավելի և ավելի էր թանձրանում, շնչառությունը դժվարանում էր։ Որոտները, մեկը-մյուսից սարսափելի, սկսեցին հաճախ կրկնվել։

Մառախուղի բարակ քողը պատեց ծմակն ու արոտատեղին, ամենահորդ անձրևն սկսեց շաշալ։ Մի րոպեում գոյացան փոքրիկ գետակներ, որոնք աղմուկով վազում էին դեպի ձորի միջով անցնող գետը։

(Ընթերցանության դասագրքից)

# ԿԱՊ
# ПРЕДЛОГ И ПОСЛЕЛОГ

## § 109. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*Բանվորները պայքարում են որակի* համար:

*Այս նախադասության մեջ* համար *բառը կապում է* որակի *լրացումը* պայքարում են *ստորոգյալին և կապվող բառի հետ միասին դառնում լրացում (ստորոգյալի)։*

Գնում եմ դեպի քաղաք:

*Այս նախադասության մեջ* դեպի *բառը կապում է* քաղաք *բառը* գնում եմ *ստորոգյալի հետ և կապվող (քաղաք) բառի հետ միասին դառնում լրացում (ստորոգյալի)։* Համար *և* դեպի *բառերը կոչվում են* կապ։

**Կապը նախադասության ստորոգյալին կապում է նրա լրացումը, ցույց տալով լրացման պաշտոնը:**

*Կապերը նախադասության անդամ չեն լինում և կապվող բառի հետ միասին դառնում են լրացում։*

*Կապերը գործ են ածվում գոյականի, դերանվան և կամ գոյականաբար գործածվող բառերի հետ և դրվում են կապվող բառից կամ նրա լրացումներից առաջ և կամ կապվող բառից անմիջապես հետո։*

## § 110. ԿԱՊԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

*Կապերը լինում են երկու տեսակ՝* նախդիրներ, նախադրություններ (предлоги) *և* ետադրություններ (послелоги):

*ա) Նախադրությունները* (предлоги) դրվում են կապվող բառից կամ նրա լրացումներից առաջ:



Օրինակ՝

Ես **առանց** գրքի եմ մնացել—я остался без книги.

*Հայերեն նախադրություններն են՝*

առանց (без), *առանց մատիտի* без карандаша.

բացի (кроме, помимо, за исключением). **բացի** *գրքից տետրակ էլ ունեմ* помимо книги имею и тетрадь.

դեպի (к, по направлению к, в). *գնում էր* **դեպի** *քաղաք* шёл к городу, шёл в город.

մինչև (до). *ինքնաթիռը բարձրացավ* **մինչև** *ամպերը* самолёт поднялся до облаков.

իբրև (как, в качестве, словно). *խոսում եմ* **իբրև** *քաղաքացի* говорю как гражданин.

*բ) Ետադրությունները* (послелоги) դրվում են կապվող բառից անմիջապես հետո:

Օրինակ՝

*Ծաղիկները բերել եմ ուսուցչի համար*—цветы я принес для учителя.

Ծանոթություն

*Հայերենի ետադրությունները հետևյալներն են՝*

մասին (о, об, про). *խոսում ենք գրքի* **մասին** мы говорим о книге.

համար (для). *ուսուցչի* **համար** для учителя.

շնորհիվ (благодаря). *գիտության* **շնորհիվ** благодаря науке.

հանդերձ (с, со, вместе с). *ընտանիքով* **հանդերձ** вместе с семьёй.

համեմատ, համաձայն (сообразно, согласно). *քո խոսքի* **համեմատ** согласно твоим словам.

ի վեր (с, начиная с). *այն ժամանակվանից* **ի վեր** с того времени.

նկատմամբ (по отношению к, ко, в отношении). *իմ* **նկատմամբ** *նա բարի է* по отношению ко мне он добр, в отношении меня он добр.

զատ (кроме, сверх). *դրանից զատ* кроме этого.

առթիվ (по поводу, по случаю). *մայիսյան տոների* **առթիվ** по случаю майских праздников.

հետ (с, вместе с). *նրա* **հետ** *գնացի* я пошел с ним.

վրա (на, над). *սեղանի* **վրա** на столе, на стол.

տակ (под). *սեղանի* **տակ** под столом, под стол.

մեջ (в) *սենյակի մեջ* в комнате.

մոտ (у, к). *սեղանի* **մոտ** у стола, *գնացի ընկերոջս* **մոտ** пошел к товарищу.

առաջ (перед). *դպրոցի* **առաջ** перед школой.

դիմաց (напротив). *տան* **դիմաց** напротив дома.

հետև (позади). վերև (над, выше), ներքև (ниже). դուրս (вне), ներս (внутри), առաջ (до, тому назад), *հինգ տարի առաջ* пять лет тому назад, հետո (после), հակառակ (против, в противоположность, вопреки) *և այլն։*

դեմ (против, напротив). *իմ* **դեմ** против меня.

պես, նման (как). *նետի* **պես** как стрела.

չափ (в размере). *հինգ կիլոյի չափ* в размере пяти кило.

միջև (между). *գետերի* **միջև** между рек, между реками.

*գ) Կապական բառեր* (предложные слова)

տեղ (вместо). *քո տեղ* вместо тебя, մեջտեղ (посредине, в середине). *փողոցի* **մեջտեղ** посредине улицы.

***Ռուսերենն ունի միայն նախդիրներ և նախադրություններ։***

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 293։ Բանալ փակագծերը և գոյականը գործածել պահանջված հոլովով. ընդգծել կապերը։*

*1. Առանց (գիրք) դաս չեն սովորում։ 2. Այդ միջոցին կարելի է նրա (դեմք) վրա նշմարել լրջություն։ 3. Այստեղ ապրանքը դարսված էր (հատակ) վրա, (պատեր) տակ... 4. Այս ասելով նա անմիջապես դիմեց դեպի (դռներ)։ 5. Երևի ուզում է հանդիմանել մի որևէ (բան) համար...*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 294։ Կազմել նախադասություններ գործածելով կապերը։*



# ՇԱՂԿԱՊ
# СОЮЗ

## § 111. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*Պիոներների մի խումբ դուրս եկավ փողոց* և *կանոնավոր շարքերով գնաց զբոսանքի։*

*Գերազանցիկ աշակերտները գիտեն,* որ *իրենք պարտքավոր են ուսման որակի համար։*

*Արփիկն* ու *Գոհարը տուն են գնում։*

Եվ, որ, ու *բառերը կոչվում են* շաղկապ։

**Շաղկապը միացնում է նախադասությունը նախադասության հետ և նախադասության անդամները միմյանց հետ։**

Շաղկապներ՝

և, ու (и). *ես և դու, ես ու դու* я и ты.

էլ, էլ (также, тоже). *ես էլ եմ գալիս* я тоже иду.

այլ (а). *ոչ ես, այլ դու* не я, а ты.

բայց (но). *բայց ես իրավացի եմ* но я прав.

սակայն (однако, но), *իսկ* (а). *իսկ դու ինչ ես որոշել* а ты что решил?

կամ (или, либо). *կամ ես, կամ դու* или ты, или я.

անգամ (даже, *թե... թե* (и... и), այսինքն (то есть), ուրեմն (значит):

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 295։ Կազմել նախադասություններ՝ գործածելով վերևում բերված կապերը։*

## § 112. ԲԱՐԴ ԵՎ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՇԱՂԿԱՊՆԵՐ

### Сложные и составные союзы

Նաև (также), այլև (но и), նույնպես և (также и), այն էլ (и то), մինչև իսկ (даже), մինչև անգամ (даже), և կամ, կամ թե (или же), մանավանդ, նամանավանդ (особенно, в особенности) *և այլն։*

### Բարդ նախադասությունների շաղկապներ

Որ что, թե что, եթե если, որպեսզի чтобы, որովհետև так как, ибо, քան чем, մինչև пока, եթե որ если, թեպետև хотя, մինչդեռ тогда как, թեկուզ хотя, թեև хоть, хотя *և այլն։*

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 296։ ա) Կարդալ ուշադիր, գտնել կապերը և շաղկապները։ բ) Որոշել՝ ինչ խոսքի մաս է յուրաքանչյուր բառ։*

## ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄԱՐԴԸ

*Այս դեպքը պատահել է շատ հին ժամանակ։*

*Հին Հռոմում մի ստրուկ իր տիրոջից փախել էր։ Մի տարուց հետո նրան բռնեցին և որոշեցին գցել վայրի գազանների առաջ, որ հոշոտեն նրան։*

*Մահապատիժը տեսնելու համար կրկեսում մեծ բազմություն էր հավաքվել։ Վանդակից բաց թողեցին մի ահռելի առյուծ։ Սարսափելի գազանը հարձակվեց դժբախտ ստրուկի վրա և սկսեց մռնչալ։ Նրա մռնչոցից կրկեսի պատերը դողում էին։*

*Բայց հանկարծ առյուծը կանգ առավ, ապա մոտեցավ ստրուկին, հոտոտեց նրան, սկսեց պոչը շարժել և թռչկոտել նրա շուրջը։ Մարդիկ սպասում էին, որ առյուծը մի հարվածով գետին կգցի նրան և պատառ-պատառ կանի։ Բայց ինչքան զարմացան, երբ տեսան, որ առյուծն սկսեց լիզել ստրուկի ձեռքերը, իսկ սա ուշադիր նայում էր գազանին և շոյում նրա գլուխը։*



*— Խնայեցե՛ք այդ մարդուն,— բացագանչեց ժողովուրդը։*

*Երբ ստրուկին ազատեցին, նա այսպես պատմեց. «Երբ ես փախա, ստիպված էի անցնել անապատով, որտեղ ոչ ջուր կար, ոչ ուտելիք։ Երկար թափառելուց հետո նկատեցի մի քարայր։ Ես ներս մտա և հոգնածությունից իսկույն քնեցի։ Արթնացա մի սարսափելի գոռոցից։ Գոռում էր մի առյուծ, որի ոտը արյունոտ էր։ Երբ մոտեցա, նա իր արյունաշաղախ ոտը մեկնեց ինձ։ Ես տեսա, որ նրա ոտը փուշ էր մտել։ Փուշը հանեցի, շապիկիցս մի կտոր կտրեցի և վերքը կապեցի։ Վերքը լավացավ։ Այնուհետև մենք ապրում էինք միասին։*

*Հաճախ առյուծն ինձ համար միս էր բերում։ Ես խորովում էի արևի տակ և ուտում։ Երբ ես քարայրից հեռանում էի, անհանգստանում էր և ինձ որոնում։ Բայց ես կարոտեցի մարդկանց և հեռացա առյուծից։ Շուտով ինձ բռնեցին։ Առյուծին էլ երևի որսորդներն են բռնել։ Եվ ահա, մեր բաժանումից հետո առաջին անգամ հանդիպեցինք իրար և ճանաչեցինք միմյանց»։*

(«Ռոդնայա Ռեչ»)

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 297։ Կազմել նախադասություններ և գործածել հետևյալ շաղկապները.* որ, որովհետև, որպեսզի, թե, բայց, իսկ, թեպետև, ուրեմն, ապա:

## ՋԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ—МЕЖДОМЕТИЕ

### § 113. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ջայնարկությունները արտահայտում են զգացմունք, հուզմունք, կոչ:

*Օրինակ՝*

Ա՜խ, հե՜յ, ափսո՜ս *և այլն:*

*Ձայնարկությունները գործ են ածվում և՛ առանձին, և՛ կոչական բառերի հետ միասին: Առանձին գործածվելիս անջատվում են ստորակետով:*

*Օրինակ՝*

Ա՜խ. որքա՜ն լավ է լինել գերազանցիկ:

Կոչական բառերի հետ գործածվելիս նրանց հետ միասին են անջատվում ստորակետով:

*Օրինակ՝*

«Հե՜յ ուլատեր, հե՜յ գառնատեր...»:

Ջայնարկությունների վրա դրվում է երկարացման (բացականչական) նշան (՜), երբեմն և շեշտ (՛):

*ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 298: ա) Կարդալ և գտնել համապատասխան վերնագիր: բ) Վերլուծել ըստ խոսքի մասերի և ըստ բառերի կազմության: գ) Վերլուծել ըստ նախադասությունների անդամների:*



*Լեռնադաշտի կրծքին գեղեցիկ նստել է Բարեշատ գյուղը: Կարծես մի կանաչ պուրակ լինի: Մեծ ու փոքր այգիները թավշյա շրջազգեստի պես եզերում են նրան: Հեռվից երևում են թև-թևի տված լեռները, որոնք կապույտ մշուշով պարուրված ձգվում են հորիզոնն ի վեր: Այգիներից դենը, մինչև լեռնալանջերը, սարահարթը զգեստավորված է ցորենի ոսկեհասկ արտերով:*

*Եվ գյուղն ամբողջ դուրսն է, ալեծածան արտերի գրկում:*

*Բերքահավաք է: Մարդիկ հարյուրներով դուրս են եկել աշխատանքի: Առատ է բերքը: Հողը բարձր է գնահատել մարդկանց աշխատանքը և լավ է վարձատրել նրանց քրտինքն ու ջանասիրությունը:*

*Այս ու այնտեղ հնչում են հնձվորների ուրախ կանչերը: Հեռուներից լսվում են նրանց զվարթ երգերը:*

*«Ե՛կ, ազիզ ջան, ձեռք ձեռքի տանք,*
*Առատ բերքը տանենք տուն,*
*Որ մեր երկրում սովետական*
*Մեծ տոն լինի, խնդություն...»:*

*Սարալանջին հնձվորները եռանդով աշխատում են: Ոմանք հնձում են, ոմանք էլ ցորենի խուրձերն են կապում ու կիտում: Այստեղ ու այնտեղ բարձրանում են ցորենի դեզերը: Մյուս կողմից էլ հնձած ցորենը տանում են կալը, ուր կալսիչ մեքենան աշխուժորեն կատարում է իր գործը: Ներքևում դղրդալով անցնում է կոմբայնը: Նա ավելի է արագացնում հունձն ու կալը: Մեքենան օգնության է հասել հնձվորներին, շտապեցնում, հեշտացնում է աշխատանքը:*

Կոմբայնավար Կարոն հմտորեն է բանեցնում մեքենան։ Հայրենական Մեծ պատերազմից վերադառնալուց անմիջապես հետո սովորեց և կպավ այդ գործին։ Երեք տարի է, ինչ նա վարում է մեքենան։ Համայնական դաշտերի անվանի կոմբայնավարներից է, ձգտում է արագ, անկորուստ հավաքել բերքը։

Հատիկներով ծանրաբեռնված ոսկեվարս հասկերը մեկը մյուսի հետևից ընկնում են մեքենայի սուր ատամների տակ, կալսվում, և ցորենը տեղափոխվում, լցվում է կոլտնտեսության ամբարները։

Սարալանջին կոլտնտեսականների երգը չի դադարում։ Տղամարդիկ եռանդով հնձում են, կանայք խուրձ են կապում, պիոներները գետնին թափած հասկերն են հավաքում։

Արևն իջնում է լեռն ի վայր և գնում թաքնվում մոտակա սարի թիկունքում։

Լեռնադաշտի վրա մեղմ սահում է զովաշունչ հովիկը։

Գյուղի վրա իջնում է կապույտ երեկոն։ Աշխատավորներն ամեն կողմից վերադառնում են տուն։ Որքա՜ն հաճելի է գյուղի երեկոն։ Կապույտ երկնքում կարծես բյուրավոր ադամանդներ են շաղ ավել։ Լեռնադաշտում բնությունը խաղաղվում է. միայն քարաթմբերի միջից հոսում, երգում է մշտազվարթ վտակը։ Նրա երգն այնպես անուշ է հնչում գիշերվա խաղաղության մեջ։

(Ս. Թորգոմյան)

# СЛОВАРЬ

## Грамматических терминов

*Ածական անուն* имя прилагательное
*Ածականակերտ ածանցներ* суффиксы, образующие прилагательные
*Ածանց* суффикс и приставка (словообразовательные частички)
*Ածանցավոր բառ* производное слово
*Աղյուսակ* таблица
*Այբուբեն* алфавит
*Անձնական դերանուն* личное местоимение
*Անորոշ* неопределенное
*Անցյալի անկատար* прошедшее несовершенное
*Անցյալի ապառնի* будущее прошедшего времени
*Անցյալի հարակատար* результативное прошедшего времени
*Անցյալի վաղակատար* давнопрошедшее прошедшего времени
*Անցյալ կատարյալ* прошедшее совершенное
*Ապառնի ժամանակ* будущее время
*Առոգանության նշաններ* знаки выразительности
*Արմատ* корень
*Արմատական* корневой, коренной
*Բազմակետ* многоточие
*Բաղաձայն հնչյուն* согласный звук
*Բայ* глагол
*Բաշխական* распределительный
*Բառ* слово
*Բառակազմություն* словообразование
*Բարդ բառ* сложное слово

Բարդ նախադասություն сложное предложение
Բացականչական նշան восклицательный знак
Բացահայտության նշաններ поясняющие знаки
Բացառական հոլով отложительный или исходный падеж
Բութ разъединительный знак
Գիծ тире
Գիր письмо
Գլխավոր անդամներ главные члены
Գոյականակերտ ածանցներ суффиксы, образующие имена существительные
Գոյական անուն имя существительное
Գործիական հոլով творительный падеж
Դերանուն местоимение
Դերբայ неличная форма глагола (причастие, деепричастие)
Դեմք лицо
Եղանակ наклонение
Եղանակիչ մասնիկ модальная частичка
Երկհնչյուն двузвучный
Երկրորդական անդամներ второстепенные члены
Ըղձական եղանակ желательное наклонение
Ընդարձակ նախադասություն распространенное предложение
Թիվ число
Ժամանակ время
Ժխտական отрицательное, негативное
Լրացումներ пояснительные слова
Խնդիր дополнение
Խոսք речь
Խոսքի մաս часть речи
Խուլ глухой
Կապ предлог и послелог
Կապական բառեր предложные слова
Կետադրություն пунктуация
Կոկորդային гортанный
Համառոտ նախադասություն краткое, нераспространенное предложение
Հայցական винительный



Հասարակ անուն нарицательное имя
Հատուկ անուն собственное имя
Հարաբերական относительный, ая, ое
Հարակատար прошедший результативный, ая, ое
Հորդորական եղանակ побудительное наклонение
Հարցական вопросительный, ая, ое
Հարցական նշան вопросительный знак
Ետադրություն послелог
Հիմք основа
Հնչյուն звук
Հնչյունաբանություն фонетика
Հոդ артикль
Հոլովում склонение
Համանիշ синоним
Հրամայական եղանակ повелительное наклонение
Ձայնավոր հնչյուն согласный звук
Ձայնարկություն междометие
Ձայնեղ звонкий
Մակբայ наречие
Մակբայակերտ ածանցներ суффиксы, образующие наречия
Միջակետ двоеточие (одна точка в арм. языке).
Նախադասություն предложение
Նախադասության անդամներ члены предложения
Նախածանց приставка
Ներկա ժամանակ настоящее время
Նույնանիշ синоним
Նույնանուն омоним
Շաղկապ союз
Շեշտ ударение
Շնչեղ խուլ глухой придыхательный
Որակական качественный
Չակերտներ кавычки
Չեզոք средний
Պայմանական կամ ենթադրական եղանակ условное или предположительное наклонение
Պարզ простой, ая, ое

*Պարզ նախադասություն* простое предложение
*Սահմանական եղանակ* изъявительное наклонение
*Սեռական* родительный
*Ստացական* притяжательный, ая, ое
*Ստորակետ* запятая
*Վաղակատար ժամանակ* давнопрошедшее время
*Վանկ* слог
*Վերջածանց* суффикс
*Վերջակետ* точка
*Վերջավորություն* окончание
*Տառ* буква
*Տողադարձ* перенос слова
*Տրական* дательный
*Տրոհության նշաններ* знаки препинания
*Ցուցական դերանուն* указательное местоимение
*Ուղղական հոլով* именительный падеж
*Փակագիծ* скобка
*Փոխադարձ* взаимный, ая, ое
*Քանակական* количественный, ая, ое
*Օժանդակ բայ* вспомогательный глагол

# ՑԱՆԿ

Էջ


ԿՐԿՆՈՂՈՒԹՅՈՒՆ (նախորդ դասարաններում անցածի)

§ 1. *Նախադասություն* . . . . . . . . . . . 3
§ 2. *Բառ և վանկ* . . . . . . . . . . . 9
§ 3. *Հնչյուն և տառ* . . . . . . . . . . 11
§ 4. *Ը հնչյունը և գիրը* . . . . . . . . . 12
§ 5. *օ, ո, է, ե հնչյունները* . . . . . . . 13
§ 6. *Բաղաձայն հնչյուններ* . . . . . . . . 16
§ 7. *Յ հնչյունը և գիրը* . . . . . . . . . 17
§ 8. *Այբուբեն* . . . . . . . . . . . . 18
§ 9. *և գիրը* . . . . . . . . . . . . 20
§ 10. *Տողադարձ* . . . . . . . . . . . . 20
§ 11. *Մեծատառ* . . . . . . . . . . . . 23

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 12. *Նախադասության անդամներ* . . . . . . . 26
§ 13. *Ենթակա* . . . . . . . . . . . . 27
§ 14. *Ստորոգյալ* . . . . . . . . . . . . 28
§ 15. *Պարզ համառոտ նախադասություն* . . . . . 31
§ 16. *Պարզ ընդարձակ նախադասություն* . . . . 32
§ 17. *Հարցական նախադասություն* . . . . . . 40
§ 18. *Հրամայական նախադասություն* . . . . . . 42
§ 19. *Բացականչական նախադասություն* . . . . . 43
§ 20. *Պատմողական նախադասություն* . . . . . . 45
§ 21. *Համադաս լրացումներ ունեցող նախադասություններ* 46
§ 22. *Բարդ նախադասություն* . . . . . . . . 47

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

§ 23. *Տրոհության նշաններ* . . . . . . . . . 52
§ 24. *Առոգանության նշաններ* . . . . . . . . 53
§ 25. *Չակերտի և անջատման գծի գործածությունը* . . 58

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ


§ 26. Ձայնավոր հնչյուններ . . . . . . . . . . 62
§ 27. Ը ձայնավորը . . . . . . . . . . . . 62
§ 28. Յ ձայնակապը . . . . . . . . . . . . 63
§ 29. Օ և Ո . . . . . . . . . . . . . . 64
§ 30. Է և Ե . . . . . . . . . . . . . . 65
§ 31. Օժանդակ բայի ուղղագրությունը . . . . . . 66
§ 32. Բաղաձայն հնչյուններ . . . . . . . . . 68
§ 33. Բաղաձայնների ուղղագրությունը . . . . . . 69


## ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ


§ 34. Արմատ և ածանց . . . . . . . . . . . 74
§ 35. Արմատ . . . . . . . . . . . . . . 74
§ 36. Ածանցավոր բառեր . . . . . . . . . . 75
§ 37. Հայերենի նախածանցները . . . . . . . . 76
§ 38. Վերջածանցներ . . . . . . . . . . . 76
§ 39. Բարդ բառեր . . . . . . . . . . . . 77
§ 40. Հապավումներ . . . . . . . . . . . 79
§ 41. Հնչյունափոխություն . . . . . . . . . 80
§ 42. Հիմք և վերջավորություն . . . . . . . . 82
§ 43. Բառերի տեսակներն ըստ իմաստի . . . . . . 83


## ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ


§ 44. Գոյական անուն . . . . . . . . . . . 84
§ 45. Հասարակ անուն . . . . . . . . . . . 85
§ 46. Հատուկ անուն . . . . . . . . . . . 87
§ 47. Յա երկհնչյունը հատուկ անուններում . . . . 87
§ 48. Իա երկձայնավորը հատուկ անուններում . . . . 87
§ 49. Գոյականների թիվը . . . . . . . . . . 88
§ 50. Հոլովում . . . . . . . . . . . . . 92
§ 51. Ուղղական հոլով . . . . . . . . . . . 92
§ 52. Սեռական հոլով . . . . . . . . . . . 93
§ 53. Տրական հոլով . . . . . . . . . . . 95
§ 54. Հայցական հոլով . . . . . . . . . . 98
§ 55. Բացառական հոլով . . . . . . . . . . 99
§ 56. Գործիական հոլով . . . . . . . . . . 100
§ 57. Ներգոյական հոլով . . . . . . . . . . 101





§ 58. Գոյականների առումները . . . . . . . . . 103
§ 59. Հոլովման աղյուսակ . . . . . . . . . . 104
§ 60. Գոյականակերտ ածանցներ . . . . . . . . 109


## ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ


§ 61. Ընդհանուր ծանոթություն . . . . . . . . 112
§ 62. Ածականների գործածությունը նախադասության մեջ 113
§ 63. Ածականների տեսակները . . . . . . . . 114
§ 64. Ածականների գործածությունը գոյականների հետ . 116
§ 65. Ածականների հոլովումը . . . . . . . . 117
§ 66. Ածականակերտ ածանցներ . . . . . . . . 118


## ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ


§ 67. Ընդհանուր ծանոթություն . . . . . . . . 121
§ 68. Քանակական թվականներ . . . . . . . . 122
§ 69. Դասական թվականներ . . . . . . . . . 123
§ 70. Բաշխական թվականներ . . . . . . . . 124
§ 71. Թվականների տեսակներն ըստ կազմության . . 124
§ 72. Թվականների հոլովումը . . . . . . . . 125


## ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ


§ 73. Ընդհանուր ծանոթություն . . . . . . . . 128
§ 74. Դերանունների տեսակները . . . . . . . . 129
§ 75. Անձնական դերանուններ . . . . . . . . 130
§ 76. Ցուցական դերանուններ . . . . . . . . 133
§ 77. Հարցական դերանուններ . . . . . . . . 135
§ 78. Հոդ . . . . . . . . . . . . . . . 137


## ԲԱՅ


§ 79. Ընդհանուր ծանոթություն . . . . . . . . 139
§ 80. Դերբայներ . . . . . . . . . . . . 139
§ 81. Անորոշ դերբայ . . . . . . . . . . . 140
§ 82. Անկատար դերբայ . . . . . . . . . . 141
§ 83. Ապառնի դերբայ . . . . . . . . . . . 142
§ 84. Վաղակատար դերբայ . . . . . . . . . 143
§ 85. Հարակատար դերբայ . . . . . . . . . 144
§ 86. Ենթակայական դերբայ . . . . . . . . . 145

§ 87. Ժխտման դերբայ . . . . . . . . . . . 146
§ 88. Դեմք . . . . . . . . . . . . . . 148
§ 89. Թիվ . . . . . . . . . . . . . . 148
§ 90. Ժամանակ . . . . . . . . . . . . 150
§ 91. Հաստատական խոնարհում . . . . . . . . 152
§ 92. Սահմանական եղանակ . . . . . . . . . 152
§ 93. Օժանդակ բայի խոնարհումը . . . . . . . 153
§ 94. Օժանդակ բայի ուղղագրությունը . . . . . . 154

## ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

§ 95. Ներկա և անցյալի անկատար ժամանակ . . . . 155
§ 96. Ապառնի և անցյալի ապառնի . . . . . . . 157
§ 97. Վաղակատար և անցյալի վաղակատար . . . . . 158
§ 98. Հարակատար և անցյալի հարակատար . . . . . 160
§ 99. Սահմանական եղանակի պարզ ժամանակը. անցյալ կատարյալ . . . . . . . . . . . . 162
§ 100. Հրամայական եղանակ . . . . . . . . . 165
§ 101. Ըղձական եղանակ . . . . . . . . . . 166
§ 102. Պայմանական կամ ենթադրական եղանակ . . . 169
§ 103. Հարկադրական եղանակ . . . . . . . . 171
§ 104. Խոնարհման աղյուսակ . . . . . . . . . 174
§ 105. Ժխտական խոնարհում . . . . . . . . . 179
§ 106. Ժխտական խոնարհման աղյուսակ . . . . . . 180

## ՄԱԿԲԱՅ

§ 107. Ընդհանուր ծանոթություն . . . . . . . 188
§ 108. Մակբայակերտ ածանցներ . . . . . . . 189

## ԿԱՊ

§ 109. Ընդհանուր ծանոթություն . . . . . . . 192
§ 110. Կապերի տեսակները . . . . . . . . . 192

## ՇԱՂԿԱՊ

§ 111. Ընդհանուր ծանոթություն . . . . . . . 195
§ 112. Բարդ և բաղադրյալ շաղկապներ . . . . . . 196

## ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

§ 113. Ընդհանուր ծանոթություն . . . . . . . 198
Словарь грамматических терминов . . . . . . 201

ՀՀ Ազգային գրադարան
NL0241385

6768

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.